

Ենթադան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում

Արխիտոն

ՀՀ, 0801, Մասիս, 3-րդ թաղ. 10-րդ շենք. բն. 3  
Armenia, 0801, Masis, 3rd block 10 building, Apt.3.

architon-ltd@mail.ru  
+37494194929

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԵՆՈՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ  
ՀԱՏԱԿԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՄ, ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՈՒՄ

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե  
Պատվեր՝ N ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-

1-ին փուլ Նախնական գնահատման հայտ

ՏԵՔՍԱՅԻՆ ԵՎ  
ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍԵՐ

«Արխիտոն» ՍՊԸ անօրեն



Ռ. Բաբայան

ԵՐԵՎԱՆ 2023 թ.

*Ենթադասի համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*  
ԳԻՐՔ 1

**ՏԵՔՍՏԱՅԻՆ ՄԱՍ**

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

ՆԱԽԱԲԱՆ .....	6
<b>Ներածություն</b> .....	10
1. Գլուխ 1. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ .....	11
1.1.4.1. Ենթադասի տնտեսական զարգացման վերլուծություն .....	15
1.1.4.2. Բնակարանային ֆոնդ .....	17
1.2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐ .....	17
1.2.1. Հողերով ապահովվածությունը .....	17
1.2.2. Տնտեսական զարգացման ուղղվածությունը .....	18
1.2.3. Ռազմավարական ճյուղերը .....	19
1.2.4. Զարգացող ճյուղերը .....	20
1.2.5. Հազեցած ճյուղերը .....	20
1.2.6. Գյուղատնտեսություն .....	20
1.2.7. Զբոսաշրջություն .....	21
1.2.7.1. Զբոսաշրջային վիճակագրություն (ոչ պաշտոնական) .....	23
1.2.8. Անտառտնտեսություն .....	24
1.3. ՏԱՐԱԾՔԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ .....	24
1.3.1. Լանդշաֆտի բնութագիրը .....	24
1.3.2. Ռելիեֆը .....	25
1.3.3. Տեղագրական անվանումները .....	25
1.3.4. Բնակլիմայական պայմանների վերլուծություն .....	26
1.3.4.1. Կլիմա .....	26
1.3.4.2. Տեղանքի ռելիեֆ .....	26
1.3.5. Ինժեներաերկրաբանական պայմանները .....	26
2.5.1. Տարածքի համառոտ ինժեներաերկրաբանական բնութագիր .....	27
1.3.6. Սեյսմիկ պայմանները .....	28
1.3.7. Շրջակա միջավայրը .....	28
1.4. ՀՈՂԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ .....	28
1.4.1. Պատմության և մշակութային ժառանգություն .....	30
2. ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	31
2.1. Զարգացման Հայեցակարգ .....	31

<i>Ենոքավան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում</i>	
2.1.1.	Տեսլական ..... 31
2.1.2.	Կարիքների գնահատում ..... 33
2.1.3.	Զարգացման հայեցակարգ. Ենոքավան ..... 34
2.1.4.	Զարգացման ֆիզիկական ցուցանիշներ ..... 35
<b>2.2.</b>	<b>ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ</b> ..... 36
<b>2.3.</b>	<b>Հողօգտագործում</b> ..... 37
<b>2.4.</b>	<b>Բնակչության հաշվարկային թիվը</b> ..... 37
<b>2.5.</b>	<b>Բնակարանային ապահովվածությունը</b> ..... 38
<b>2.6.</b>	<b>Հասարակական սպասարկման համակարգ</b> ..... 39
<b>2.7.</b>	<b>Տրանսպորտ և ճանապարհային ցանց</b> ..... 41
<b>2.8.</b>	<b>Ինժեներական ենթակառուցվածքներ</b> ..... 45
2.8.1.	Զրամատակարարում ..... 46
2.8.2.	Զրահեռացում (կոյուղի) ..... 47
2.8.3.	Հաշվարկային ջրապահանջը ու ջրահեռացման քանակը ըստ ջրամատակարարման նորմերի ..... 48
2.8.4.	Ոռոգում ..... 48
2.8.5.	Հեղեղատար կոյուղի ..... 49
2.8.6.	Էներգամատակարարում ..... 49
2.8.6.1.	Էլեկտրամատակարարում ..... 49
2.8.6.2.	Պահանջվող բեռնվածքների որոշում ..... 49
2.8.6.3.	Գազամատակարարում ..... 51
<b>3.</b>	<b>ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ</b> ..... 53
	<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b> ..... 53
3.1.1.	Օդերևութաբանակլիմայական պայմանները ..... 53
<b>3.1.</b>	<b>Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը /4, 5/</b> ..... 56
3.2.	Կենսաբազմազանություն ..... 57
3.2.1.	Բուսական աշխարհ /6, 7/ ..... 57
3.2.2.	Կենդանական աշխարհ /7, 8/ ..... 61
<b>3.3.</b>	<b>Բնակլիմայական և սանիտարա-հիգիենիկ հատակագծային սահմանափակումների համակարգը /2/</b> ..... 63
3.4.	Բնական միջավայրի գնահատումն ըստ տեխնաձին ազդեցության ընկալունակության ..... 64

*Ենթադաս համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

3.5.	Տնտեսության ներկա իրավիճակի բնութագիրը և զարգացման հեռանկարը.....	65
3.6.	Բնակավայրի շրջակա միջավայրի վրա տեխնաժին ազդեցությունը.....	65
3.6.1.	Մթնոլորտային օդը .....	66
3.6.2.	Տարածքի համալիր գնահատականը .....	67
3.7.	Մակերևութային ջրահոսքեր .....	68
3.8.	Աղմուկի մակարդակի գնահատում /16,17,18/.....	71
3.9.	Հողերի բնութագիրը.....	71
3.10.	Թափոնների կառավարում.....	71
3.10.1.	Աղբավայրեր .....	71
3.10.2.	Արդյունաբերական թափոններ .....	72
3.10.3.	Օրգանական ծագման թափոններ.....	73
3.11.	Գերեզմանոցներ.....	77
3.12.	Կանաչապատման համակարգը.....	77
3.13.	Շրջակա միջավայրի գոյություն ունեցող իրավիճակի գնահատականը-.....	78
3.14.	Օդի մերձգետնյա շերտի աղտոտվածության սանիտարա-հիգիենիկ իրավիճակի անալիզը.....	78
3.15.	Բնակչության առողջության պայմանական ռիսկի գործոնը .....	80
3.16.	Բնակավայրի հողերի աղտոտվածության մակարդակի գնահատումը .....	80
3.17.	Անտրոպատեխնաժին բեռնվածության համալիր ցուցանիշները .....	80
3.18.	Տարածքի տնտեսության հեռանկարային զարգացումը.....	81
3.19.	Ենթադասի զարգացման հիմնական ուղղությունները .....	81
3.20.	Համայնքների շրջակա միջավայրի վրա տեխնաժին ազդեցությունը .....	81
3.20.1.	Մթնոլորտային օդը.....	82
3.20.2.	Տարածքի համալիր գնահատականը.....	83
3.20.3.	Մակերևութային ջրահոսքեր .....	83
3.20.4.	Աղմուկի մակարդակի գնահատում /16, 17, 18/ .....	85
3.20.5.	Էլեկտրամագնիսական ճառագայթում .....	86
3.21.	Հողերի բնութագիրը.....	86
3.22.	Թափոնների կառավարում .....	75

<i>Ենթադաս համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում</i>	
3.22.1.	<b>Աղբավայրեր</b> ..... 75
3.22.2.	<b>Արդյունաբերական թափոններ</b> ..... 76
3.22.3.	<b>Օրգանական ծագման թափոններ</b> ..... 77
3.23.	<b>Գերեզմանոցներ</b> ..... 87
3.24.	<b>Կանաչապատման համակարգը</b> ..... 87
3.25.	<b>Բնության հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ</b> ..... 88
3.26.	<b>Շրջակա միջավայրի իրավիճակի գնահատականը</b> ..... 89
	<b>համայնքների զարգացման ծրագրի իրականացումից հետո</b> .....89
3.26.1.	<b>Օդի մերձգետնյա շերտի աղտոտվածության սանիտարա-հիգիենիկ իրավիճակի անալիզը</b> ..... 90
3.26.2.	<b>Բնակչության առողջության պայմանական ռիսկի գործոնը</b> ..... 91
3.26.3.	<b>Հողերի աղտոտվածության մակարդակի գնահատումը</b> ..... 91
3.26.4.	<b>Անտրոպատեխնածին բեռնվածության համալիր ցուցանիշները</b> ..... 92
	Եզրակացություն .....93
	<b>Օգտագործված գրականության ցանկ</b> .....94

**Գծագրական մաս**

- Հենակետային հատակագիծ
- Տարածքի համալիր գնահատում
- Հողատեսքերի բաշխումն ըստ սեփականության սուբյեկտների
- Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեղաբաշխման ուրվագիծ (2 գծագիր)
- Ճանապարհային և ինժեներական ցանցի ուրվագիծ

## **ՆԱԽԱԲԱՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը համայնքների տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը ճանաչել է սոցիալական և տնտեսական զարգացման հիմնախնդիրների լուծման խթանիչներից, իսկ բնակավայրերի զարգացումը՝ գերակա ուղղություն: Այդ մասին են վկայում ՀՀ կառավարության 2014 թ. -ի մարտի 27-ի Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» N 442-Ն որոշումը և ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2016-2025 թ.թ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» թիվ 29 արձանագրային որոշումը:

Հայաստանն այսօր աշխարհում բնութագրվում է որպես զարգացման մարտահրավերներով, աշխարհագրա-քաղաքական սահմանափակումներով, էներգիայի արտաքին աղբյուրներից ու շուկաներից կախում ունեցող, միջինից ցածր եկամուտ ունեցող երկիր:

Սույն մշակումները նշված ռազմավարության իրագործման անբաժանելի և կարևոր մասն են կազմում: Գործնական քայլերի վրա հիմնված և արդյունքների վրա կենտրոնացող տարածքային զարգացման քաղաքականության մշակման և առաջընթացի անխափան չափման նպատակով՝ անհրաժեշտ է ունենալ մշտադիտարկման ու գնահատման ցուցանիշների հետևողական կազմ:

ՀՀ Տավուշի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիսարևելյան հատվածում: Հարավում սահմանակից է ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին, արևմուտքում՝ ՀՀ Լոռու մարզին, պետական սահմանով հյուսիսում՝ Վրաստանին, և արևելքում՝ Ադրբեջանին: Մարզն ունի մոտ 350 կմ միջպետական սահման, որից 300կմ-ը Ադրբեջանի Հանրապետության հետ, 50-ը՝ Վրաստանի: Տարածքը 2 704 քառ.կմ է, որը կազմում է ՀՀ տարածքի 9.1%-ը: Այն ընդգրկում է Իջևանի, Դիլիջանի, Նոյեմբերյանի և Բերդի տարածաշրջանները: Մարզի տարածքի շուրջ 4.3%-ը զբաղեցնում են բնակավայրերի, ջրային, էներգետիկայի, կապի և տրանսպորտի տարածքները, շուրջ 54%-ը՝ անտառային (113 566.7 հա) ու հատուկ պահպանվող տարածքների հողերը (33 031.6 հա)՝ ազգային պարկը և արգելավայրերը, որոնք կազմում են հանրապետության անտառային հողերի 38%-ը, ընդգրկելով հիմնականում մարզի միջին և հարավային հատվածները, գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 110 675.7 հա, ադ թվում վարելահողեր՝ 25 495.6 հա:

Մարզի մշտական բնակչությունը 2022թ.-ի տարեսկզբի դրությամբ կազմել է 119.7 հազ. մարդ, որից քաղաքների բնակչությունը՝ 49.9 (41.7%), գյուղերի բնակչությունը՝ 69.8 (58.3%) հազ. մարդ: Բնակչության խտությունը կազմում է 46.4 մարդ/քառ. կմ:

Մշակումները կատարվել են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի /այսուհետ՝ Պատվիրատու/ կողմից տրված Տեխնիկական բնութագրին և Նախագծման առաջադրանքին համապատասխան:

Նախագծի հիմնական նպատակներին և առաջադրված խնդիրների լուծմանը հասնելու, սոցիալ-տնտեսական արագընթաց զարգացմանը, վերականգնման հնարավորության բարձրացմանն ու Հայաստանի մարզերի կայուն զարգացմանը նպաստելու նպատակով անհրաժեշտ է կազմել Ենթավանի գլխավոր հատակագիծը՝ կազմված հողօգտագործման գլխավոր հատակագծից, ընտրված տարածքների կառուցապատման կանոնակարգման պլանից և կառուցապատման նորմերից:

*Ենոքավան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

Նախագծի Հավելված 1-ում բերված են Պատվիրատուի կողմից Տեխնիկական բնութագրին համապատասխան ներկայացված իրավական հիմնավորումներն ու ելակետային նյութերը, այդ թվում՝

- ✓ տարածքի տեղագրական հանույթ,
- ✓ 2022 թվականի կադաստրային քարտեզ,
- ✓ 2017 թվականի հողային հաշվեկշիռ
- ✓ Համայնքի 2017-2021 զարգացման ծրագիր<sup>1</sup>
- ✓ ՀՀ Տավուի մարզի Տավուշ-6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված

տարածական պլանավորման փաստաթղթի նախագծային փաթեթը:

✓ «Ենոքավան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրություն և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում» նախագծային և քարտեզագրման աշխատանքները

Տեխնիկական բնութագրին համապատասխան նախագծի մշակման հիմնական նպատակն է համայնքի տարածքում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումը, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանմանն ուղղված միջոցառումների մշակումը:

տարածքային պլանավորումը ներկայումս ավելի ու ավելի նշանակալի բնույթ է ստանում, քանի որ այն ուղղակիորեն կապված է սոցիալական և տնտեսական ռեսուրսների տարածական կազմակերպման հետ և մեծապես որոշում է տարածաշրջանների զարգացման հաջողությունը:

Տարածքների գոտիավորումը տարածքային պլանավորման սխեմաների մշակման հիմնական արդյունքներից մեկն է և, ըստ էության, տարածաշրջանի տարածքային զարգացումը կարգավորելու գործիք է, որը որոշում է ֆունկցիոնալ գոտիների կազմը, դրանց սահմաններն ու օգտագործման եղանակները: Ֆունկցիոնալ գոտիների սահմանները որոշվում են նույնական միատարր բնական հատկությունների և տնտեսական օգտագործման բնույթի հիման վրա: Տարածքի ֆունկցիոնալ նպատակը որոշում է հատկացված տարածքների գործունեության գերակշռող տեսակը: Ելնելով այս փաստից, կարելի է ասել, որ տարածքների գոտիավորումը հողամասերի օգտագործման օրենսդրական և ֆունկցիոնալ ռեժիմները որոշելու հիմնական ուղիներից մեկն է:

Տարածական պլանավորման հիմնադրության փաստաթղթերի մշակման հայեցակարգի հիմքում դրված է տարածքային զարգացման հիմնական ուղղությունների, ներդրումների համար առավել բարենպաստ ոլորտների ընտրությունը և դրանց տարածքային տեղաբաշխման գոտիների հատակագծային կազմակերպումը, այդ հենքի վրա այնպիսի քաղաքականության մշակումով, որի իրականացումը կնպաստի մարզի տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության ապրելակերպի բարելավմանը:

Տարածքային հատակագծման մասով նախագիծը պետք է առաջարկի տարածքների հատակագծային կազմակերպման և սոցիալ-տնտեսական զարգացման միջոցառումներ, ուղղված տարածքային զարգացման հիմնական ուղղությունների ընտրությանը, ներդրումների համար նպաստավոր ոլորտների և գոտիների, արտադրության հիմնական ճյուղերի զարգացմանը, ռեկրեացիոն ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, շրջակա միջավայրի բարելավմանը և պահպանմանը, ինժեներատրանսպորտային և կոմունալ-կենցաղային ենթակառուցվածքների կատարելագործմանը, պատմամշակութային ժառանգության

<sup>1</sup> <http://tavush.mtad.am/zargacum/>

*Ենթադաս համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

պահպանությանը, տարածքի ինժեներական նախապատրաստմանը, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը, սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովմանը:

Առաջադրվող ծրագրային փաստաթղթում կարտացոլվեն ներառված համայնքի տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար, այն է՝

- համայնքում առկա քաղաքաշինական իրավիճակի համակողմանի վերլուծությունը,
- մարդու կենսագործունեության արդյունավետությունն ապահովող առաջնային անհրաժեշտ խնդիրները բացահայտումը,
- համայնքի հեռանկարային զարգացման հիմնական ռազմավարական ուղղությունների իրականացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,
- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու հանձնարարականների առաջադրումը:

Նախագծման համար ուղեցույց են ծառայել համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և պետական ինքնակառավարման մարմինների որոշումները, հետևյալ նորմատիվային և նախագծային փաստաթղթերը.

- ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին:
- ՀՀ հողային օրենսգիրքը:
- ՀՀ օրենքը Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998 թ. նոյեմբերի 11, ՀՕ-261)
- ՀՀ օրենքը բնության հատուկ պահպանվող տարածքների մասին:
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշումը:
- ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108 որոշումը:
- ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781 որոշումը:
- ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության որոշումը հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 08.09.2011 թ. N 1396-Ն որոշումը:
- ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը:
- ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 72-Ն որոշումը:
- Հայաստանի Հանրապետության կառավարություն N 855-Ն որոշումը (18 օգոստոսի 2016 թվականի) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 997-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին:



*Ենթադաս համայնքի հողօգտագործման գլխավոր հատկագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

- Կարգ բնակավայրերի տարածքների գոտիավորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման (հաստատված 14.05.01 N 408 որոշմամբ):
- Կարգ հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման (հաստատված ՀՀ Կառավարության 02.05.03թ. N 625 – Ն որոշմամբ):
- Կառավարության 2012-10-25 թիվ 1351-Ն որոշում:
- Նախագծային տարբեր կազմակերպությունների կողմից մշակված մարզի առանձին բնակավայրերի գլխավոր հատկագծերը: ՀՀ Կառավարության, շահագրգիռ նախարարությունների, ՀՀ կադաստրի կոմիտեի, ՏԿԵՆ Ջրային կոմիտեի, ՀՀ Արմավիրի մարզպետարանի, Արմավիր 2-ում ներառված համայնքների ելակետային տվյալները, որոշումները, ծրագրային փաստաթղթերը:
- ՀՀ կադաստրի կոմիտեի կադաստրային քարտեզները:
- «Հայնախագիծ» ԲԲԸ-ում մշակված և կառավարության կողմից հաստատված (10.04.03 N 610-Ն) «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի» հիմնադրույթները:

## **Ներածություն**

Սույն նախագիծը քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթուղթ է և տարածական պլանավորման միջոցով սահմանում է բնակավայրի տարածքների նպատակային օգտագործմանն ու կայուն զարգացմանը, բնական և պատմամշակութային ժառանգության պահպանմանը, ինչպես նաև կենսագործունեության բարենպաստ տարածական միջավայրի ձևավորմանը նպատակաուղղված այլ անհրաժեշտ գործոնների տարածքային կազմակերպման հիմնական դրույթներն ու պայմանները:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3-րդ հոդվածի պահանջների՝ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը

1) հանդիսանալով ռազմավարական բնույթի քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթուղթ, սահմանում է՝

ա. համայնքի տարածական զարգացման հիմնական ուղղությունները,

բ. քաղաքաշինական գործունեության օբյեկտ հանդիսացող հողերի օգտագործման ռեժիմները, պարտադիր պահանջներն ու սահմանափակումները,

գ. հողատարածքների կառուցապատման առաջնահերթ (մինչև 5 տարի) միջնաժամկետ (5-10 տարի) և հեռանկարային (10-15 տարի) փուլերը,

դ. համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողամասերի նպատակային նշանակությունը և (կամ) դրանց փոփոխությունները՝ օրենքի և սույն կարգի պահանջների ապահովմամբ,

ե. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պահանջներ և սահմանափակումներ.

Համաձայն ՀՀ կառավարության 29.12.2011 թ. N1920-Ն որոշմամբ ընդունված կարգի բնակավայրերի տարածքների գոտևորման նախագիծը (այսուհետև՝ գոտևորման նախագիծ) քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է, որով սահմանվում են բնակավայրերի փաստացի և հեռանկարային օգտագործմանն ու կառուցապատմանն նկատմամբ պարտադիր պահանջները՝ կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով:

Հայտնի է, որ նոր դարասկզբին ՀՀ գյուղերի մեծ մասի համար քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր չեն մշակվել: Համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը նպատակ ունի լրացնել այդ բացը:

Ծրագրային փաստաթղթերը մշակվում են դրանում ներառված բնակավայրերի տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական գործունեության կանոնակարգման համար, որը ներառում է՝

- բնակավայրում առկա քաղաքաշինական իրավիճակի բացահայտումն ու վերլուծությունը,

- առաջնային կենսաապահովման համար անհրաժեշտ խնդիրները ձևակերպումը,

- բնակավայրի համար հիմնական հեռանկարային ուղղությունների զարգացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի ստեղծումը,

- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու ձևակերպումը:

**1. Գլուխ 1. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

**1.1. ԸՆԴԳՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ**

Նախագիծն ընդգրկում է Ենոքավանի գյուղական համայնքը, որը գտնվում է Տավուշի մարզում, Երևանից 144կմ, Իջևանից 13կմ և Թբիլիսիից 150կմ հեռավորության վրա, ինչպես նաև շրջապատող բնական լանդշաֆտները՝ արկածային զբոսաշրջության և էկոտուրիզմի զարգացման նպատակով:

Ենոքավանի գլխավոր հատակագծի կազմման գործընթացը կնպաստի համայնքի սոցիալ-տնտեսական, շրջակա միջավայրի և մշակութային արդյունավետ զարգացմանը, որը փորձարարական օրինակ կդառնա Հայաստանի համայնքների համար և կկիրառվի որպես տարածքային հատակագծման մոդել Հայաստանի զբոսաշրջային, հանգստի և ժամանցային վայրերի համար:

Ենոքավանի գլխավոր հատակագծի կարևոր խնդիրներից մեկը Հայաստանի և միջազգային զբոսաշրջային ինդուստրիայում առաջատար դիրք գրավելու նպատակով Ենոքավանի մրցակցային առավելությունների օպտիմալ օգտագործման ուսումնասիրությունն է:

Ազդեցության գոտին տարածքն ընդգրկում է Իջևան համայնքի ենոքավան բնակավայրի վարչական սահմաններում ներառված հատվածը: Այնուհանդերձ, համայնքի բնակավայրերի միջև առկա են ինչպես ֆունկցիոնալ հատակագծային կապեր, այնպես էլ միասնական կլաստերի բաղկացուցիչ մասերի գործառույթների փոխկապակցվածություն: Իջևան քաղաքը և հարակից Գետահովիտ և Գանձաքար համայնքները կազմում են միասնական կառուցապատված տարածք, որը տարանջատված է միայն վարչական պատկանելությամբ: Իջևանից դեպի հյուսիս-արևմուտք 13 կմ հեռավորությամբ բարձունքում Ենոքավանն է: Լուսաձորը և Խաշթառակը զբաղեցնում են Մ-4 ավտոմայրուղուց արևմուտք և արևելք ընկած տարածքները, Խաշթառակից հարավ Լուսահովիտ համայնքն է:

Տարածքը կազմում է 32884 հա, որի գերակշռող, 60%-ից ավելի, մասն անտառ է:

Համայնքն ընդգրկող տարածքում ներկայումս առկա է յոթ բնակավայր՝ Իջևան քաղաքը և Գետահովիտ, Գանձաքար, Ենոքավան, Լուսաձոր, Խաշթառակ և Լուսահովիտ բնակավայրերը: Գետահովիտի, Գանձաքարի և Իջևանի բնակավայրերի տարածքներն ունեն ընդհանուր սահմաններ: Ենոքավան, Լուսաձոր, Խաշթառակն ու Լուսահովիտ համայնքները շուրջ 13-15 կմ Իջևանից հեռու են գտնվում:

**1.1.1 Իջևան համայնք**

Իջևան համայնքը ներառում է 14 բնակավայր:

<<	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ <sup>2</sup>	Հեռանկարային բնակչությունը մարդ
----	-----------	--	---------------------------------

<sup>2</sup> ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 953 գյուղական վայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի, ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են Արդարադատության նախարարության Քաղաքացիական

*Ենոքավան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

1	2	3	
	<b>Իջևանի համայնք</b>		
1	Ազատամուտ	2 862	3291
2	Ակնադբյուր	501	576
3	Աճարկուտ	172	198
4	Այգեհովիտ	3 191	3670
5	Աչաջուր	4 195	4824
6	Բերքաբեր	377	434
7	Գանձաքար	3 519	4047
8	Գետահովիտ	2 093	2407
9	Դիտավան	371	427
<b>10</b>	<b>Ենոքավան</b>	<b>501</b>	<b>600</b>
11	Լուսահովիտ	316	363
12	Լուսածոր	657	759
13	Խաշթառակ	1 813	2085
14	Ծաղկավան	506	582
<b>Ընդամենը</b>		<b>18 212</b>	

Իջևանի, որպես բնակավայր ձևավորմանը խթանել է Աղստև գետի ափամերձ մասերով հնագույն ժամանակից անցնող ճանապարհը, որը տարբեր երկրներ էր կապում: Իջևանը ճամփորդների համար հանգրվանելու կամ իջևանելու հանգույց էր: Հետզհետե, աճելով դառնում է բնակավայր, իսկ 20-րդ դարի կեսից՝ քաղաք: Ձգվելով գետի երկայնքով և անընդհատ աճելով, զբաղեցնում է արևմտյան թեք լանջերը և արևելյան հարթ տարածքը, որի սպառնվելուց հետո հետզհետե սկսում են կառուցապատվել թեք լանջերը:

Իջևանը հանդիսանում է ՀՀ Տավուշի մարզի վարչական, կրթական, մշակութային կենտրոնը, գտնվում է հանրապետության հյուսիս-արևելքում, Աղստև գետի հովտում, մայրաքաղաքից 134 կմ հեռավորության վրա: Բնակավայրը զբաղեցնում է 2767 հա տարածք: Հատակագծման սկզբունքով այն քաղաք-պարտեզ է, կենտրոնական մասը կանաչապատված է տնկովի փշատերև ծառերով: Քաղաքի արվարձանները շրջապատված են անտառածածկ լանջերով:

Իջևան քաղաքն իր աշխարհագրական դիրքի / 650-850 մ ծ.մ./ և բնակլիմայական բարենպաստ պայմանների շնորհիվ անցյալ դարի 60-ական թվականներից սկսել է բազմակողմանի զարգանալ: Այստեղ կառուցվել են մի շարք արտադրական ձեռնարկություններ, հասարակական շենքեր, կառուցվել է տուրիստական համալիր հանգրվան, ինը հարկանի հյուրանոց: Հիմնվել է բուսաբանական այգի: 1991թ. Իջևանը ստացել է առողջարանի կարգավիճակ: Կառուցվել է «Սպիտակ լիճ» ջրամբարն իր հանգստյան

---

*կացության ակտերի գրանցման և Ոստիկանության (ճշգրտված՝ տ/տ կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներով) վարչական ռեգիստրների տվյալների վրա: Ընդ որում, վերջինս վերագնահատված է ՏՏԿԱՀ արդյունքներով ստացված միգրացիայի տվյալներով (շեղումը՝ 01.01.2022թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է 10.45%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղերի միջև տվյալ տեղեկատվության գրանցման, փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:*

*Ենոքավան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*  
գտնով: Ձեռնարկվել է ճոպանուղու շինարարություն, կառուցվել են ներքին և վերին կայանաշենքերը, սակայն ճոպանուղու կառուցումը –մնացել է անավարտ:

1985-1991թթ. քաղաքում անընդմեջ կազմակերպվել և անցկացվել են քանդակի միջազգային փառատոներ, որի համար Իջևանը ստացել է «100 քանդակների քաղաք» անվանումը:

Իջևանի տարածաշրջանը հարուստ է պատմական մեծարժեք հուշակոթողներով: Այստեղ է գտնվում դեռևս 7-րդ դարում կառուցված Ծովիզ (Մորո ձորո) վանքը, 12-13 դարերում կառուցված Մակարավանք, Հաղարծին, Գոշավանք հայտնի ճարտարապետական համալիրները, բազմաթիվ վանքեր, մատուռներ, ամրոցներ և այլն: Քաղաքի տարածքով անցնող միջպետական նշանակության Մ-4 մայրուղուց սկիզբ է առնում հանրապետական նշանակության Հ-36 մայրուղին:

Քաղաքում կան քսանմեկ 9 հարկանի և իննսուն երեք 5 հարկանի, ինչպես նաև երեք հարկանի բազմաբնակարան շենքեր: Ներքաղաքային փողոցային ցանցի երկարությունը 42 կմ է:

ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N1720-Ն որոշմամբ հաստատվել է Իջևան քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը՝ մինչև 2022 թվականը գործողության ժամկետով (մշակող՝ «Արխիտոն» ՍՊԸ):

#### **1.1.4 Ենոքավան բնակավայր**

Տավուշի մարզի Ենոքավան գյուղը գտնվում է մարզկենտրոն Իջևանից 14 կմ հյուսիս-արևմուտք: Լաստիվեր տանող ճանապարհը անցնում է Ենոքավանով: Գյուղից դեպի մոտակա կիրճ և Աղստև գետի հովիտ բացվում է հրաշալի տեսարան:

Նախկինում Ենոքավանն ունեցել է Քրդեվան և Շիրազ անունները: Ի պատիվ 1920 թ. մայիսյան ապստամբության ակտիվ մասնակից և այդ պատճառով Հայաստանի Առաջին հանրապետության կառավարության կողմից գնդակահարված, տեղացի Ենոք Մկրտումյանի, 1931թ. գյուղը անվանակոչվել է նրա անունով:

Ենոքավանի բնակչության թվաքանակի մասին 1831 թվականի տվյալները բացակայում են: Գյուղը հիմնել են շրջակա բնակավայրերից, առաջին հերթին՝ Սևքարից տեղափոխվածները:

Գյուղի բնակչության թվաքանակի մասին առաջին հստակ տեղեկատվությանը հանդիպում ենք 1873 թվականին: Զավեն Կորկոտյանի “Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931)” աշխատության մեջ նշվում է, որ 1873-ին գյուղը ունեցել է 301 բնակիչ, բոլորն էլ հայ:

Ենոքավանի բնակչությունը ըստ տարիների, եղել է հետևյալը.

1873 թվական – 301 հոգի

1886 թվական – 412 հոգի

1897 թվական – 556 հոգի (համառուսական՝ ցարական մարդահամար)

1908 թվական – 621 հոգի



Ենոքավանի անտառները

*Ենոքավան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

1914 թվական – 633 հոգի (Կովկասյան օրացույց)

1916 թվական – 612 հոգի (Կովկասյան օրացույց)

1919 թվական – 670 հոգի

1922 թվական – 431 հոգի

1926 թվական – 471 հոգի (ԽՍՀՄ առաջին մարդահամար)

1931 թվական – 605 հոգի

Խորհրդային տարիներին Ենոքավանի բնակչությունը ոչ միայն չի աճել, այլ փոքր-ինչ նվազել է: Այսօր գյուղի բնակչությունը մոտ 500 է, մոտավորապես այնքան, որքան էր 1886-ին՝ 130 տարի առաջ:

Ենոքավանը մինչև Հայաստանի Առաջին Հանրապետությունը՝ 1918 թվականը, Ելիզավետպոլի (Գանձակ, այսօր՝ Գյանջա) նահանգի Ղազախ գավառի կազմում մաս է կազմել ցարական՝ Ռոմանովների Ռուսաստանի:

Հայաստանի Առաջին Հանրապետության շրջանում ցարական Ռուսաստանի մեջ մտնող Ղազախի գավառը վեճի առարկա է եղել Հայաստանի և Ադրբեջանի միջև, այստեղ գրանցվել են հայ-թաթարական բախումներ: Հայաստանի և Ադրբեջանի միջև պետական սահմանը այս հատվածում գծվել է համաձայն 1920 թվականի օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագրի:

Խորհրդային տարիներին Ենոքավանը եղել է Իջևանի շրջանի կազմում:

Ենոքավանը համարվում է մարզի փոքր բնակավայրերից մեկը, բնակչությունը՝ 537 մարդ:

Բարձրությունը ծովի մակերևույթից 1150մ է: Կլիման մեղմ է, ամռան և ձմռան ջերմաստիճանները չափավոր են: Տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է +13C, իսկ տեղումները՝ 700–900 մմ: Գարունը կարճատև է և անձրևային, աշունը մեղմ ու տևական: Համայնքը գտնվում է ակտիվ սեյսմիկ գոտում:

Տարածքը հարուստ է անտառներով, կրաքարերով, մարմարի պաշարներով: Հողերը գորշ և սև են, ռելիեֆը՝ կտրտված: Համայնքի ամենամեծ բնական հարստությունը անտառներն են, ալպյան արոտավայրերը, վարելահողերը: Համայնքում տեղակայված է զորամաս, «ԱԼԱՆԴ» և «ԱՊԱԳԱ» ռեզորթները և «ԼԱՍՏԻՎԵՐ» հանգստի գոտին:

Բնակավայրի տնային տնտեսությունների թիվը 162 -ն է: Բնակչության թիվը կազմում է 537 մարդ, առկա՝ 504, այդ թվում.

- տղամարդիկ՝ 268,
- կանայք՝ 269,
- մինչև 15 տարեկան երեխաներ՝ 108,
- կենսաթոշակառուներ՝ 80,
- նպաստառուներ՝ 20 ընտանիք,
- 1-3-րդ խմբի հաշմանդամներ՝ 20:

Բնակչության ընդհանուր թվից զբաղվածներ՝ 310 մարդ, այդ թվում.



Ենոքավանի հեքիաթային անտառներում

*Ենոքավան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

- գյուղատնտեսական աշխատանքներով՝ 249 մարդ,
- այլ բնույթի ոչ գյուղատնտեսական՝ աշխատանքներով՝ 16, այդ թվում. տարբեր կազմակերպություններում՝ 45 մարդ:

Ենոքավանը սահմանակից է Գետահովիտ, Աչաջուր, Սևքար, Լուսաձոր բնակավայրերին: Այն մարզկենտրոնի հետ կապված է 9 կմ բարեկարգ, ասֆալտապատ ճանապարհով, որը <-26 ավտոմայրուղու մի հատվածն է:

Բնակավայրը գազաֆիկացված է, ապահովված է գիշերային լուսավորության ցանցով:

Ենոքավանը գտնվում է անտառամերձ գոտում: Մեղմ կլիման նախալեռնային և ալպյան գոտիներում վարելահողերի, արոտավայրերի և խոտհարքների զգալի պաշարները հնարավորություն են տալիս զարգացնել գյուղատնտեսությունը, մասնավորապես անասնապահությունը:

Անտառային և ալպյան գոտիներում գտնվող տարածքները, պատմամշակութային հուշարձանները, հիանալի պայմաններ են ստեղծում զբոսաշրջության զարգացման համար:

Համայնքի ամենաուժեղ կողմը մարդկային ներուժն է:

Ենոքավանի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը կազմում 4017,09հա:

Բնակավայրի տարածքում գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից վարելահողերը կազմում են՝ 203.66, խոտհարքները՝ 590.11 հա, արոտները՝ 1074.65հա, այլ հողերը՝ 115.89 հա:

Բնակավայրի 75.51 հա հողերից տնամերձ կառուցապատումը կազմում է 51.77 հա, հասարակական կառուցապատումը՝ 1.41 հա, ընդհանուր օգտագործման հողերը՝ 10.38 հա, այլ հողերը՝ 11.80 հա, խառը կառուցապատման՝ 0.15 հա: Համայնքի հողերի սեփականաշնորհմանը մասնակցել է 193 ընտանիք, մեկ հողաբաժնի չափը կազմել է 2.6 հա:

Ենոքավանն ունի գործող/ հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ (գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ)՝ Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջանակում (2017 թվականին մշակված և սահմանված կարգով հաստատված Հայնախագիծ ԲԲԸ կողմից), ինչպես նաև Ենոքավան համայնքային զարգացման ծրագիրը (մշակված 2016 թվականին Ի-ՎԻ Քոնսալրինգ կազմակերպության կողմից) և Ենոքավան համայնքի տարածքների հողօգտագործման գլխավոր հատակագծի, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանը՝ մաստեր պլան (մշակված 2019 թվականին Հետազննման և աշխարհագրական տեղեկատվական համակարգերի խորհրդատվական կենտրոն §Գեոգրաֆիկ| ՍՊԸ-ի և §Տավուշնախագիծ| ՍՊԸ կողմից): Այնուհանդերձ, առաջին փաստաթղթում բնակավայրը դիտարկվել է որպես միկրոռեգիոնի մեկ բաղկացուցիչ մաս և դիտարկվել այդ ենթատեքստում, մյուս երկուսում՝ դիտարկվել են հայեցակարգային դրույթներ:

#### **1.1.4.1. Ենոքավանի տնտեսական զարգացման վերլուծություն**

Ինչպես նշվում է Ենոքավանի համայնքային զարգացման ծրագրում, Ենոքավանում կան բոլոր պայմանները էկոտուրիզմի և ագրոտուրիզմի զարգացման համար: Գյուղը զբոսաշրջության կենտրոնի համբավ է ձեռք բերել: 2002-2017թթ. ընկած ժամանակահատվածում համայնքի զբոսաշրջային կապիտալում և ենթակառուցվածքներում

*Ենթադան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*  
ներդրվել է մոտ 6 մլն. ԱՄՆ դոլար: Արդյունքում մոտավորապես 40 000 զբոսաշրջիկ է այցելել համայնք 2016թ., իսկ 2017թ. Ենթադանը հյուրընկալել է 50 000 այցելուի, որոնց 60%-ը՝ օտարերկրացի:

Ենթադանի տարածական պլանավորման փաստաթղթերը կազմվել են արդեն իսկ ձևավորված զբոսաշրջային բրենդների, ինչպիսիք են Էկոտուրիզմը, արկաձային և առողջարանային զբոսաշրջություն հաշվի առնմամբ: Գյուղը լեռնային հանգստավայր դարձնելու համար Ենթադանն ունի բոլոր նախադրյալները. միջին բարձրության և բարձր լեռների թարմ օդը, ապշեցուցիչ բացառիկ բնական լանդշաֆտ, մեղմ կլիմա և այլն: Հատկանշական է, որ բնակավայրը որպես հանգստավայր, զբոսաշրջության և ժամանցի կենտրոն սկսել է զարգանալ 2002 թվականից:

Տարածական պլանավորման փաստաթղթերի նախանշումներն ուղղված են նոր ներդրումային ծրագրեր ներգրավելու անհրաժեշտությանը: Ենթադանի հարևանությամբ են գործում «Ապագա» և «Ալանդ» զբոսաշրջային համալիրները, իսկ վերջերս այս բնակավայրի տարածքում կառուցվել է նոր հյուրանոց: Միաժամանակ, զարգացումը մեկնարկելու համար անհրաժեշտ է կարճ ժամկետներում կառուցել քաղաքային, հանգստավայրային և ինժեներական ենթակառուցվածքներ: Հաշվի առնելով Ենթադանի զարգացման յուրահատուկ ներուժը, պատշաճ պլանավորման և ֆունկցիոնալ առումով ճիշտ ուղղություն ընտրելու դեպքում զարգացմանն ուղղված ջանքերը կտան սոցիալական և տնտեսական տեսանկյունից շահավետ արդյունք:

Բնակավայրի տարածքում վերը նշված տնտեսական ակտիվությունը կունենա մուլտիպլիկատիվ արդյունք՝ իր ազդեցության ոլորտում ներառելով տեղական բնակչության ներգրավումը թվարկված տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում, ինչպես նաև գյուղատնտեսության և գյուղատնտեսության մեջ ներառված բնակչության համար ապահովելով արտադրանքի իրացման մշտական շուկա: Արդյունքում ընդհանուր առմամբ կբարելավվի բնակչության կենսամակարդակը:

Նախագիծը նպատակ ունի կարևոր դերակատարություն ունենալ և նպաստել Ենթադան համայնքի և ընդհանուր առմամբ Տավուշի մարզի զարգացմանը:

Միաժամանակ բազմաթիվ են արագ լուծում պահանջող խնդիրները, որոնց լուծումը թույլ կտա համայնքին օգտագործել իր ողջ ներուժը և արագորեն զարգանալ: Համայնքի հիմնական դժվարությունները կապված են ենթակառուցվածքների բացակայության հետ: Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերը հիմնականում անջրդի են և մեծ մասը չի մշակվում, արոտները մեծամասամբ գտնվում են համայնքից մեծ հեռավորության վրա, իսկ ճանապարհների վիճակն անբավարար է: Այդ պատճառով չափազանց ցածր է դրանց օգտագործման արդյունավետությունը: Համայնքի բնակչության շուրջ 50 տոկոսը կայուն եկամտի աղբյուրներ չունի, համայնքից մշտապես և ժամանակավոր բացակայողների թիվն անցնում է 60 %-ից, շարունակում են զգալի տոկոս կազմել գործազրկությունը և աղքատությունը:

Լուրջ խնդիրներ կան բնակչությանը խմելու և կենցաղային ջրով ապահովման գործում: Ջրամատակարարման ներքին և արտաքին համակարգերը կառուցվել են 80 – ական թվականների կեսերին և 2001 թվականի սկզբին:

Համայնքը հզոր հողային և անտառային պաշարներ ունի: Հողային պաշարներում արոտների զգալի չափաբաժինը նախադրյալներ է ստեղծում անասնաբուծությունը և ոչխարաբուծությունը զարգացնելու, խոշոր ֆերմերային տնտեսություններ ստեղծելու համար: Աշխարհագրական դիրքը, պատմամշակութային հուշարձանների առկայությունը և



*Ենթազան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*  
հսկայական անտառային գոտին հրաշալի հնարավորություններ են Համայնքը զարգացնելու համար:

#### **1.1.4.2. Բնակարանային ֆոնդ**

Համայնքի բնակարանային ֆոնդը կազմված է 132 առանձնատներից, որոնց բնակ.մակերեսը կազմում է 26.37հազ.քառ. մետր:

Բնակարանային ֆոնդը հիմնականում ներկայացված է սեփական բնակելի տներով: Այս շինությունների մի մասը բավարար պայմաններում են գտնվում, մինչդեռ մյուսները վերանորոգման կարիք ունեն: Գյուղում կա բազմաբնակարան մեկ տուն (Նախկին մանկապարտեզի շենքը), որտեղ մի քանի ընտանիք է ապրում:



Բնակարանային ֆոնդը հիմնականում ստեղծվել է 20-րդ դարում: Գյուղի կենտրոնում կա երկու շենք (որոնցից մեկը տանիք չունի), որը հավանաբար կառուցվել է 19-րդ դարի վերջում կամ 20-րդ դարի սկզբում: Հնօրյա արտաքին տեսքով շինությունը՝ նախկին դպրոցը, օգտագործվում է գյուղատնտեսական նպատակներով: Օգտագործվող շինարարական նյութերից անհրաժեշտ է նշել տեղական շինարարական քարը:

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են բարձր տոկոս կազմող գործազրկությունը, սոցիալապես անապահով ընտանիքների թիվը, ինչպես նաև սողանքային երևույթների առկայությունը, որոնց լուծման առաջնահերթությունը պետք է դրվի բոլոր զարգացման ծրագրերի հիմքում:

### **1.2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐ**

#### **1.2.1. Հողերով ապահովվածությունը**

Տնտեսական զարգացման համար հողատարածքն ունի իր որոշիչ նշանակությունը:

Համայնքների հողային ֆոնդի առկայության համեմատական վերլուծությունը բացահայտում է գյուղատնտեսության տնտեսական զարգացման ներուժը և դրա առաջնային նախընտրելիության աստիճանը:

**Ստորև ներկայացվում է Ենթազան բնակավայրի հողային հաշվետվությունը:**

Ենթադաս համայնքի հողօգտագործման գլխավոր հաշվառագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում

Հ Ա Ե Վ Ե Տ Վ Ո Ր Թ Յ Ո Ւ Ն  
 Իրավունքի ֆունկցիոնալ արկարգության և բաշխման  
 (ըստ նպատակային նշանակության, հողատեսչերի ու գործառնական նշանակության և սնվանականության սուբյեկտների, ամ 03/11/2020թ.)

Ձև N 22

Մարզ:  11  
 (անկախում) (Կողմ)  
 Համայնք:  897  
 (անկախում) (Կողմ)

(հեկտարներով)

NN	Նպատակային նշանակություն	Հողատեսչ, գործառնական նշանակություն	Կողմ NN	Անխտակարգության սուբյեկտներ														
				Մեծամեծ յՁ-3+4+8+12	ՀՀ բարդացումների	Իրավաբանական անձանց	համայնքային					գյուղական						
							1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահող		203.66	171.59		22.01			13.14	8.87	10.06					10.06	
1.2		բազմ տնկատնկեր																
1.2.1		արդ. բույսեր																
1.2.2		բուսերի այգի																
1.2.3		այլ բազմամյա																
1.3		խոտհարց		590.11	275.55		38.85			13.02	25.83	275.71					275.71	
1.4	արոտ		1074.65	3.91		100.92			0.28	100.64	969.82					969.82		
1.5	այլ հողատեսչեր		115.89			29.99			1.81	28.18	85.90					85.90		
1		Ընդամենը	1984.31	451.05		191.77			28.25	163.52	1341.49					1341.49		
2.1	2. Շինակալարեր	բնակելի		51.77	51.77													
2.1.1		արդ. բնակ		51.46	51.46													
2.1.2		աղյուսակային (առ. հասարակական)		1.41	0.23		0.44				0.44	0.74	0.74					
2.3		խաղող		0.15			0.15				0.15							
2.4		ընդհանուր		10.38			10.38				10.38							
2.5		այլ հողեր		11.80			11.80			0.13	11.67							
2		Ընդամենը	75.51	52.00		22.77			0.13	22.64	0.74	0.74						
3.1	3. Արդյունաբերական, արհեստագործական և այլ արտ. նշանակության	արդյունաբերության																
3.2		գյուղատնտեսական		4.97	3.03		0.67			0.67	1.27					1.27		
3.3		գյուղատնտեսական		0.04			0.04				0.04							
3.4		ընդհանուր		5.01	3.03		0.71				0.71	1.27					1.27	
4.1	4. Ենդեղյան կապի ստանդարտի և այլ արտ. նշանակության	Ենդեղյան կապի		0.04		0.01	0.03				0.03							
4.2		կապի																
4.3		տրանսպորտի կրողներ		0.33						0.01	0.01	0.33					0.33	
4.4		Ընդամենը		0.39		0.01	0.05			0.01	0.04	0.33					0.33	
5.1	5. Հատուկ նպատակային տարածքների	բնակարանական																
5.1.1		արդ. բնակ																
5.1.2		արդ. բնակ																
5.1.3		արդ. բնակ																
5.2		արտոթափման																
5.3	հանգստի		0.15	0.06	0.09													
5.4	սպորտային և		11.14			1.86				1.86	9.28					9.28		
5		Ընդամենը	11.29	0.06	0.09	1.86				1.86	9.28					9.28		
6	6. Հատուկ նպատակային	Ընդամենը		13.73							13.73					13.73		
7.1	7. Անտառային	անտառ		1907.91							1907.91	15.60	0.20			1923.71		
7.2		թփառ		15.24							15.24	0.42				15.66		
7.3		վարելահող																
7.4		խոտհարց																
7.5		արոտ																
7.6		այլ հողեր																
7		Ընդամենը	1923.15								1923.15	16.02	0.20			1939.37		
8.1	8. Ջրային	գետեր		3.67							3.67					3.67		
8.2		ջրամբարներ		0.02			0.02				0.02					0.04		
8.3		լճեր																
8.4		ջրանցքներ																
8.5		նիւզրուտեղ, և		0.01			0.01				0.01					0.02		
8		Ընդամենը	3.70			0.03				0.03	3.67			1.62		2.05		
9.1	9. Պահեստային	արդյունաբերական																
9.2		ավազաններ																
9.3		ճահիճներ																
9.4		այլ անօգտագործելի																
9.5		Ընդամենը																
9		Ընդամենը																
ԸՆԴԱՄԵՆԱԸ ՀՈՂԵՐ Վ՝ 2+3+4+5+6+7+8+9				4017.09	506.14	0.10	217.19			28.39	188.80	3293.66	16.76	1.82		3275.08		

1.2.2. Տնտեսական զարգացման ուղղվածությունը

Սույն բաժնում ներառված է նաև գյուղերում և Իջևան քաղաքում միջազգային կազմակերպությունների աջակցությամբ հասարակական կազմակերպությունների ուսումնասիրությունների հիման վրա կատարված — եզրահանգումները: Աշխատանքը հիմնականում վերաբերում է Իջևան քաղաքի և հարակից գյուղերի տնտեսության զարգացման հիմնախնդրին:

Բնակավայրերում տեղական թիմի և փորձագետների համատեղ աշխատանքի արդյունքում բացահայտվել են մրցակցային առավելությունները: Հետագա նախաձեռնությունները և տնտեսության զարգացման հեռանկարները քննարկվել և

*Ենթադրյալ համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

վերլուծվել են մրցակցային առավելությունների ընդհանուր համատեքստում: Այդ մրցակցային առավելություններն են.

Բնական ռեսուրսներ

1. անտառների պաշարներ՝ հատապտուղներով և մրգով հարուստ,
2. տարածքների ուղղաձիգ գոտիականության շնորհիվ, բազմազան, մեղմ և բարենպաստ կլիմա,
3. էկոլոգիապես մաքուր միջավայրում ստացվող մթերքի արտադրանք,
4. գեղատեսիլ բնություն և պատմամշակութային հուշարձաններ, հնավայրեր,
5. ճանապարհատրանսպորտային խաչմերուկ:
6. Մասնագիտական, մարդկային ռեսուրսներ
7. գինեգործներ,
8. մեղվաբույծներ,
9. փայտամշակողներ,
10. ավանդական յուրահատուկ ուտեստներ պատրաստողներ,
11. տարբեր ավանդական արհեստների մասնագետներ,
12. համայնքներում համագործակցային միջավայր, հասարակական ակտիվություն, գործարարության միտված մարդկանց մեծ քանակ:
13. Տեխնոլոգիական
14. տնական գինու, օղու ուտեստի ավանդական տեխնոլոգիաներ,
15. փայտամշակման տեխնոլոգիաներ:

Իջևանի և հարակից գյուղերի տնտեսության հիմնական ճյուղերը վերլուծելիս հաշվի է առնվել, թե որտեղ է կենտրոնացած աշխատող բնակչության մեծ մասը, և որտեղ է ստեղծվում ամենամեծ եկամուտը: Գնահատվել են այս ճյուղերի զարգացման վրա ազդեցություն ունեցող գործոնները, օժանդակող ճյուղերի, անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիությունն ու ճյուղում առկա պահանջարկն ու որակը: Ուշադրություն է դարձվել ճյուղերի շահութաբերության վրա՝ համեմատած այլ ճյուղերի և համայնքների (որոշ դեպքերում տարածաշրջանների և հանրապետության միջին) ցուցանիշների հետ:

Համայնքների տնտեսության մեջ առկա ճյուղերը խմբավորված են ըստ երեք հիմնական խմբերի, ինչը հիմք է հանդիսանում հեռանկարային տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները սահմանելու համար:

### **1.2.3. Ռազմավարական ճյուղերը**

Այս ճյուղերը զարգացման մեծ պոտենցիալ և պահանջարկ ունեցող ճյուղերն են, որոնք հիմնված են համայնքների մրցակցային առավելությունների վրա, և մրցունակ են ինչպես ՀՀ այլ շրջաններում, մարզում, տարածաշրջանում, այնպես էլ միկրոռեգիոնալ մակարդակում և զգալի արդյունքների հասնելու պայմանով նաև արտերկրներում, (հերթականությունը ներկայացված է ըստ առաջնության).

1. Գյուղատնտեսություն. անասնաբուծության, բուսաբուծության, այգեգործության, ա.թ. օրգանական տեխնոլոգիաների զարգացում, ագրոմշակույթի մակարդակի բարձրացում
2. Գյուղմթերքի վերամշակում. կաթի մթերում և կաթնամթերքի, ա.թ. պանրի արտադրություն, արդյունավետության և արտադրական որակի բարձրացում, ապրանքային տեսքի և չափերի ստանդարտների ներդրում, մսի վերամշակման

Ենթադրված համայնքի հողօգտագործման գլխավոր հատվածի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում կազմակերպում, անասնակերի՝ առվույտի, խտացված և համակցված կերերի արտադրություն (կաղին, տերև, եգիպտացորեն, հաղարջ և այլ) արտադրություն

3. Անտառտնտեսություն, հավաքչարարություն (որի հիմքում ընդարձակ անտառային հողատարածությունների և դրանցում առկա պտղատու ծառերի, հատապտուղների և ուտելի բույսերի առկայությունն է)
4. Սննդամթերքի, հատապտուղից և մրգից ոգելից խմիչքի և ըմպելիքի արտադրություն
5. Կրթություն՝ մասնագիտական ըստ ռազմավարական ոլորտների և բարձրագույն
6. Զբոսաշրջություն և հյուրընկալություն. զբաղմունքի, ժամանցի և սպասարկման տեսականու ընդարձակում՝ մարզական, էքստրեմալ, արշավային, ճանաչողական, ագրո-, պատմամշակութային և այլ, հյուրանոցներ, հյուրատներ, կացարաններ, հասարակական սնունդ՝ ազգագրական և միջազգային ստանդարտների և այլն)
7. Գյուղատնտեսության անխուսափելի մեխանիզացմանը զուգընթաց տեխնիկական միջոցների սպասարկման և նորոգման կենտրոնի հիմնում

#### 1.2.4. Զարգացող ճյուղերը

Կայուն զարգացող կամ հագեցած ճյուղեր, որոնք մասամբ են հիմնված տեղական մրցակցային առավելությունների վրա: Մրցունակ են ներքին և արտասահմանյան շուկայում, զիջում են ՀՀ այլ մարզերին, սակայն ունեն որոշակի դրական ազդեցություն համայնքների տնտեսության զարգացման վրա.

1. Շինարարական նյութերի, քարի, գաջի և այլն արտադրություն,
2. Փայտամշակում,
3. Ոգելից խմիչքի և ըմպելիքի արտադրություն,
4. Ծառայություններ:

#### 1.2.5. Հագեցած ճյուղերը

Ճյուղեր, որոնք մեծ տարածում ունեն և արդեն բավարարում են պահանջարկը, այս ճյուղերում սպասելի է միայն որակական զարգացում և ծավալի ինքնակարգավորում.

1. Առևտուր,
2. Հացի և հացաբուլկեղենի արտադրություն:

#### 1.2.6. Գյուղատնտեսություն

Ենթադրվանում գյուղատնտեսությունը արտադրության հիմնական ոլորտն է: Զարգացած է անասնաբուծությունն ու գյուղատնտեսական կուլտուրաների մշակումը: Այստեղ ստեղծվել է անասնապահական և ոչխարաբուծական մի քանի և այծաբուծական մեկ ֆերմա: Անասունների արոտահանման մասին տեղեկություններ չկան:

Ենթադրվանում արտադրվող գյուղատնտեսական մթերքը մատակարարվում է տեղական զբոսաշրջության ոլորտի կարիքների նպատակով, և հասցվում է մարզկենտրոն: Նրանք արտադրում են մսամթերք և կաթնամթերք, մուրաբաներ տեղում հավաքած հատապտուղներից, մեղր և թեյ՝ սարերից հավաքած խոտաբույսերից: Գյուղում կա հյուրատուն, որի սեփականատերը պատրաստում է գինի հարևան համայնքներից ձեռք բերված խաղողից: Արտադրանքը համապատասխանում է օրգանական ապրանքներին ներկայացվող

*Ենթադրյալ համայնքի հողօգտագործման գլխավոր հատկագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

չափանիշներին, սակայն այն դեռևս բրենդավորված, փաթեթավորված և պիտակավորված չէ: Ենթադրյալում կա հացաբուլկեղենի չորս արտադրամաս: Գործում է կաթոցային ոռոգման համակարգով ապահովված 400 քառ. մ տարածքով ջերմատուն: Որսորդական տնտեսությունների զարգացումը մեծ ներուժ ունի: Մելիորացիայի և ոռոգման համակարգը չի գործում: Գյուղն ունի պետության կողմից վարձված մեկ անասնաբույժ, և հետևաբար դեղորայքն ու անասնաբուժական սարքավորումները ևս հատկացնում է պետությունը: Գյուղատնտեսության բնագավառում բնակչության զբաղվածությունը կազմում է 50 տոկոս:

Գյուղատնտեսության զարգացած ճյուղերն են համարվում հացահատիկային մշակաբույսերի՝ ցորենի և եգիպտացորենի մշակությունը: Համայնքում զբաղվում են նաև կարտոֆիլի մշակությամբ: Ավանդական արդյունավետ ճյուղերն են խոշոր եղջերավոր անասնաբուծությունը, ոչխարաբուծությունը և մեղվապահությունը:

Գյուղացիական տնտեսությունները 162-ն են: Տնտեսություններում պահվում է 441 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից կովեր՝ 185 գլուխ; 105 մեղվաընտանիք; 76 գլուխ խոզ, 456 գլուխ այծ ու ոչխար, 1874 հավ:

Տարեկան զգալի քանակությամբ կաթ և միս է արտադրվում /շուրջ 296 տ կաթ, 43 տ միս/:

Արդյունաբերական ոլորտի ձեռնարկություններ չեն գործում, հանքավայրեր չեն շահագործվում, շրջակա միջավայրը աղտոտման չի ենթարկվում:

Խմելու ջրի ջրավազանների և ջրամբարների պահպանության վիճակը բավարար է: Համայնքային և պետական անտառային ֆոնդում պահպանվում են բնօգտագործման կանոնները, սակայն լուրջ խնդիրներ կան կենցաղային աղբից և թափոններից շրջակա միջավայրի պաշտպանության գործում:

Դպրոցական կրթությունը Ենթադրյալում հարյուրամյակի պատմություն ունի:

Ներկայումս Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց /79 աշակերտներով/:

Միջնակարգ դպրոցում կրթության ու դաստիարակության ոլորտում զբաղված են 25 մարդ, նրանցից 13-ը մանկավարժներ են բարձրագույն կրթությամբ:

Համայնքում գործում է 1 բուժ կետ, որը գտնվում է բավարար վիճակում, ինչպես նաև առևտրի 4 կետ, որոնք հիմնականում բավարարում են բնակչությանը սննդով ապահովելու կարիքները և գտնվում են բավարար վիճակում: Մրցակցային պայմաններում բարձրանում է նաև սպասարկման մակարդակը:

### **1.2.7. Զբոսաշրջություն**

Ենթադրյալի բնակչության հիմնական զբաղվածությունը գյուղատնտեսության և տուրիզմի ոլորտներում են: Երիտասարդության շրջանում գործազրկության մակարդակը բարձր է: Կառուցվածքային գործազրկությունը նկատելի է, ինչը պայմանավորված է որակավորում ունեցող աշխատուժի բացակայությամբ: Անհրաժեշտ է պարզել մեկ շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունքը և համեմատել այն տարածաշրջանի և երկրի մակարդակով ցուցանիշների հետ: Սահմանափակ հզորությամբ գործող փայտամշակման արտադրամասը միակ արդյունաբերական կառույցն է:

Աշխատունակ տարիքի բնակչությունը հիմնականում արտագնա աշխատանքի է մեկնում մարզկենտրոն՝ Իջևան, մայրաքաղաք և արտերկիր (հիմնականում Ռուսաստան): Միգրացիայի բալանսը հիմնականում պետք է պարզել միգրացիայի բնույթի հետ միասին՝ կրթություն

*Ենթադան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

ստանալու նպատակով և արտագնա աշխատանքային միգրացիա: Ենթադանում կա մի քանի հայրենադարձ, ովքեր եկել են զբոսաշրջային ծառայությունները զարգացնելու նպատակով: Տուրիզմով զբաղվող (հյուրանոցներում և արկածների պարկում աշխատող) անձինք Ենթադան աշխատանքի գալիս են մարզկենտրոն Իջևանից: Ենթադանի զարգացման հիմնադրամում կա մայրաքաղաքից եկած աշխատակից:

Իջևանի տարածաշրջանը, համարվելով Հայաստանի հյուսիսային դարպասը, անկասկած աչքի է ընկնում զբոսաշրջության զարգացման հեռանկարային մեծ պոտենցիալով՝ ներառելով բնական, պատմամշակութային ժառանգություն և գեղատեսիլ բնության տեսարժան վայրեր, հարուստ և յուրահատուկ մշակույթ:

Իջևանի տարածաշրջան տարեկան մտնում է արտասահմանից եկած 500–700 (թիվը ներառում է նաև արտասահմանից եկած հյուրերին, ովքեր այցելել են առողջական, ճանաչողական, աշխատանքային, մարզական և այլ նպատակներով) այցելու: Այցելող զբոսաշրջիկների վերաբերյալ վիճակագրություն չի անցկացվում, այս թվերը վերցված են ոլորտը սպասարկող կազմակերպությունների հետ հարցազրույցներից և կրում են մոտավոր բնույթ:

Հայաստանի տարբեր մարզերից տարեկան 3000 ներքին զբոսաշրջիկ ևս (այս թիվը ներառում է նաև կարճաժամկետ հյուրեր ՀՀ այլ շրջաններից, որոնք այցելել են առողջական, ճանաչողական, աշխատանքային, մարզական, տոնական և այլ նպատակներով) այցելում են վերը նշված տարածքները:

Զբոսաշրջության զարգացումը գտնվում է ՏԻՄ, ՀԿ և որոշ հիմնադրամների ուշադրության ներքո: Ենթադանում արդեն կառուցվել, իսկ Իջևանում սկսվել է տեղական տեղեկատվական և տուրօպերատորական կենտրոնի ստեղծման աշխատանքները: Տեղական տուրօպերատորական գործունեություն են իրականացնում երեք կազմակերպություններ, որոնք մատուցում են կոմպլեքս ծառայություններ և հիմնականում իրենց ներքին գործունեության համար են ներառում զբոսաշրջիկներին:

Այդ երեք կազմակերպություններն են՝ «Լաստիվեր», «Ապագա տուր» և «Մայիսյան կամուրջ»-ը: Հյուրերին ընդունում և սպասարկում են 10 հյուրանոց և երկու հյուրատուն, որոնք կարող են սպասարկել օրական մինչև 200 մարդ:

Համայնքի կենտրոնական բնակավայրում՝ Իջևանում ևս սկսվել են աշխատանքներ նոր հյուրանոցային համալիրի կառուցման ուղղությամբ, կվերականգնվի ևս մեկ հյուրանոց, կառուցվում են երկու նոր հյուրատներ, որոնք, ընդհանուր առմամբ կկարողանան սպասարկել ևս 60 այցելու:

Թեև Ենթադանն իրենից ներկայացնում է ինքնաբավ զբոսաշրջային ենթակառուցվածքով բնակավայր, այնուհանդերձ հարակից՝ համայնքի կենտրոնում գործում է 12 հասարակական սննդի վայր, որոնք կարող են սպասարկել օրական մինչև 600 մարդ: Իջևանում է գտնվում 3000 հանդիսատեղով ֆուտբոլային մարզադաշտը, ինչը մարզական տուրիզմի զարգացման հիմնաքարերից է:

Հայտնի է Իջևանի դենդրոպարկը, ուր կան մեծ քանակությամբ յուրահատուկ բույսեր, Կենտրոնական զբոսայգին, որտեղ տեղադրված են տարբեր երկրների քանդակագործների ստեղծագործություններ, գործում են երկրագիտական թանգարանը և պատկերասրահը:

Տարածաշրջանում են գտնվում բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ, գեղատեսիլ վայրեր՝ ինչպիսիք են Ծովիզը, Մակարավանքը, Կիրանց վանքը, Վարդան

*Ենթադրյալ համայնքի հողօգտագործման գլխավոր հատվածի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*  
Մամիկոնյանի ծառը, Աշոտ Երկաթի չինարի ծառը, միջնադարյան կամարակապ կամուրջներ, Փոքր Անապատ հնավայրը և այլն:

Զբոսաշրջության զարգացման առումով առանձնանում է Ենթադրյալ համայնքի տարածքում հիմնված և տարիներ շարունակ գործողությունների և ծառայությունների շարքը ընդլայնող «Ենթադրյալի զարգացման հիմնադրամի» ջանքերով գործող՝ «Ապագա ռեզորթ», «Լաստիվեր» և «Յելլ Պարկ» զբոսաշրջային, ակտիվ և պասիվ հանգստի ծառայություններ մատուցող կենտրոնները: Դրանց նվաճումների զգալի մասը տարածվում է նաև ի օգուտ Իջևան քաղաքի զբոսաշրջության ոլորտին:

Միջազգային զբոսաշրջային այցերը Վրաստան զգալի աճ են գրանցել անցած 3 տարիների ընթացքում: Ակնկալվում է, որ նման միտումները կպահպանվեն: Քուբայիսի միջազգային օդանավակայանը առաջիկա տարիներին կընդլայնվի և ավելի շատ զբոսաշրջիկներ կգրավի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վրաստան այցելող զբոսաշրջիկները նաև այցելում են Կովկասյան այլ երկրներ, Վրաստանում զբոսաշրջության աճը դրական ազդեցություն կունենա նաև Հայաստանի զբոսաշրջության ոլորտի վրա:

Բնակավայրի համալիր հետազոտման արդյունքում ձևավորվել են հետևյալ հնարավորությունները՝ 4 ֆունկցիոնալ հնարավորություններ, որոնք կարելի է ստեղծել կամ զարգացնել Ենթադրյալում և Ապագա Ռեզորթ հյուրանոցային համալիրում:

- **Օդային էքստրեմալ սպորտային զբոսաշրջություն.** «Յելլ Պարկ», Եվրոպայում մրցունակ զիփլայններից մեկը, կարող է լավ հիմք ծառայել օդային էքստրեմալ սպորտային զբոսաշրջության այլ վայրերի զարգացման և տվյալ վայրը որպես օդային էքստրեմալ սպորտային զբոսաշրջության կենտրոն ճանաչելի դարձնելու համար:
- **Էկոլոգիական և գյուղական զբոսաշրջություն.** անասնապահությունը մշտապես հանդիսացել է Ենթադրյալ գյուղի բնակչության հիմնական զբաղմունքը: Շատերն այստեղ ֆերմաներ ունեն, հետևաբար, կարծում ենք ագրո-տուրիզմի ներուժի դիտարկումը այս գյուղի զարգացման բնական ուղի կարող է հանդիսանալ:
- **Զույգերով հանգիստ և հարսանեկան հանդիսություններ.** վերջին շրջանում զույգերն ավելի ու ավելի հաճախ են սկսել նախընտրել գյուղական տիպի պսակադրությունները և հարսանեկան արարողությունները, ինչը գլոբալ միտում է: Կարծում ենք, Ապագա Ռեզորթն ունի համապատասխան ներուժ զույգերի սիրելի վայր դառնալու համար:
- **Բացօթյա ժողովներ.** կորպորատիվ և ուսուցողական հանդիպումները մեծ պահանջարկ են վայելում կազմակերպությունների և մեծ խմբերի շրջանում, հատկապես զբոսաշրջային ոչ ակտիվ սեզոնին:

**1.2.7.1. Զբոսաշրջային վիճակագրություն (ոչ պաշտոնական)**

Բնակավայրի համար իրականացված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի շրջանակում կատարված տվյալների բազայի և վիճակագրության ուսումնասիրության արդյունքում ձևավորվել է հետևյալ պատկերը:

Ներքին զբոսաշրջության ծախսերը կազմել են 2017թ.-ի ՀՆԱ-ում զբոսաշրջության ուղղակի ներդրումների 16,2%-ը մինչդեռ օտարերկրյա զբոսաշրջիկների ծախսերը կամ միջազգային զբոսաշրջությունից ստացված եկամուտները կազմել են 83,8%-ը:


Եկամուտ ապահովող հիմնական երկրները 2018թ.

- Ռուսաստան 21%
- ԱՄՆ 13,9%

Ենթադրված համայնքի հողօգտագործման գլխավոր հատվածի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում

- Իրան 6,8%
- Վրաստան 2,3%

**Այցելության նպատակը**



**1.2.8. Անտառտնտեսություն**

Անտառտնտեսության զարգացման անտառային կոմիտեի §Հայնատառ! ՀՈԱԿ-ի Իջևանի անտառտնտեսության և Սևքարի անտառտնտեսության 2021-2030 հաստատված կառավարման պլանները<sup>3</sup>. ծրագրի շրջանակներում պետությունն իրականացնում է անտառային ոլորտի բարեփոխումներ, որը նախատեսում է քայքայված անտառային ռեսուրսների վերականգնում, անտառածածկի ավելացում, անտառների բնապահպանական, սոցիալական և տնտեսական նշանակության գործառույթների պահպանում ու զարգացում, պաշարների շարունակական և արդյունավետ օգտագործում:

**1.3. ՏԱՐԱԾՔԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**1.3.1. Լանդշաֆտի բնութագիրը**

Բնակավայրի վարչական սահմանում ընդգրկված տարածքների լեռնային լանդշաֆտը բնութագրվում է որոշակի յուրահատկություններով: Դա արտահայտվում է լանդշաֆտի բաղադրիչների (անտառ, բացատներ, գյուղատնտեսական հողատեսքեր) համամասնության մեջ, դրանց տեղադրվածության, լանջերի արևահայացության, թեքությունների, ձորերով, ձորակներով ու խանդակներով ջլատվածության տարբերակներում: Հատկանշական է նաև ժայռոտ բարձունքների, լեռնագագաթների դերը, որպես ակտիվ ուղղաձիգ տեսողական շեշտեր, համայնապատկերի ընդհանուր տարածական բնական հորինվածքի ընկալման և տարածքում կողմնորոշվելու առումով:

Վերը նշված բնական տարածական նախադրյալները հիմք են հանդիսացել բնակավայրերի, որպես ինքնուրույն միավորների ձևավորման համար: Եվս մեկ կարևոր նախադրյալ է նաև տարածքի ջրաբանական կառուցվածքը: Տարածաշրջանի բնակավայրերը գտնվում են գետերի և գետակների հովիտներում կամ լեռնալանջերի թեք ու գոգավոր հարթակներում: Ենթադրված տարածքը «կախված» է Սառնաջուր գետի կիրճի ապառաժ անդունդի եզրին:

<sup>3</sup> [https://armforest.am/?page\\_id=188](https://armforest.am/?page_id=188)



### **1.3.2. Ռելիեֆը**

Լեռնաբանական պատկերը կազմված է մի շարք խոշոր լեռնային գոյացումներից և դրանց բազմազան լեռնաճյուղավորումներից: Արևմտյան մասում գտնվում են Իջևանի լեռները, որոնք Թեղուտ - Հաղարծինից սկսած ձգվում են դեպի հյուսիս, հասնելով Գետահովիտի մոտ, որտեղ արևմուտք-արևելք, լայնական ուղղությամբ Մթնասարի լեռներն են: Սառնաջուր գետի կիրճից հյուսիս Ենոքավանի սարալանջերն են:

Ճյուղավորվելով դեպի հյուսիս տարածքի նիշերը նվազում են մինչև ՀՀ պետական սահման: Արևելքում՝ հարավից դեպի հյուսիս-արևելք հսկայական ժայռային «պատերով» բարձրանում են Հախսումի լեռները, որոնք բաժանում են Իջևանի և Բերդի տարածաշրջանները:

**Ենոքավան բնակավայրի** 75.51 հա տարածքի նիշերը տատանվում են՝ 1075 մ ծ.մ. արևելքում, 1125 մ ծ.մ համայնքապետարանի մոտ. և 1171 մ ծ.մ. արևմտյան մասում: Համայնքի հարավային սահմանը գտնվում է Սառնաջուր գետահովտի բարձր զառիթափի եզրին: Բնակավայրի սահմաններում հորիզոնական նիշերի անկումը կազմում է 96 մ:

Ենոքավանի 4017.09 հա վարչական տարածքի հորիզոնական նիշերն են. արևմուտքում՝ 1735-2000 մ ծ.մ., հյուսիսում՝ 1500-1800 մ, արևելքում՝ 880-1000 մ ծ.մ., հարավում՝ 1000-2400 մ ծ.մ:

### **1.3.3. Տեղագրական անվանումները**

Լանդշաֆտի բնութագրման մեջ հատկանշական են համայնքների տարածքներում դարերն ի վեր անվանակոչված գետերն ու գետակները, լանջերի առանձին հատվածները կազմող հողահանդակները՝ «հանդերը», հնավայրերը և այլն:

Ենոքավանի տեղագրական անվանումներն են, «Սառնաջուր» գետը, որը հարավից վտակ ունի և տեղամասեր, «Մասնահանդ», «Ձորի բերան հանդ», «Նվազ հանդ», «Կռու պոպոքնուտ հանդ», «Առվտնոց հանդ», «Շնաքար հանդ», «Ավաձաքար հանդ», «Լճի տաշտ հանդ», «Խնձնուտ հանդ», «Թեղուտ հանդ», «Մանդուրլանջ հանդ», «Դոլիկ հանդ», «Ճեղի լանջ հանդ»: Հեռվում կա նաև «Օկոն» կոչվող տեղամասը, որը առաջներում ծառայել է որպես անասնապահական ձմեռանոց: Կան նաև մի շարք բնավայրեր. «Մորուտմատ», «Ծակմատ», «Կախալանջ», «Կարճմատ», «Հոհաննես»:

Այս ամենը, անտառները, թփուտները, խոտածածկ բացատներն ու արտերը կազմում են չքնաղ բնական լանդշաֆտի համայնապատկերներ:

### **1.3.4. Բնակլիմայական պայմանների վերլուծություն**

#### **1.3.4.1. Կլիմա**

Կլիման բարեխառն է: Ձմեռը տևական և համամատաբար ցուրտ է, թույլ քամիներով, բավական կայուն ու հաստ ձնածածկ շերտի գոյացումով: Ամառը տաք է, չոր:

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 10.8°C, հունվարինը՝ 0.6°C, ապրիլինը՝ 10.1°C, հուլիսինը՝ 21.2°C, հոկտեմբերինը՝ 11.6°C: Ջերմաստիճանի ամսական ամալիտուդան 8.6°C է: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -23°C և դիտվել է դեկտեմբերին, բացարձակ առավելագույնը՝ +37°C է և դիտվել է օգոստոսին: Հողի մակերևույթի վրա միջին տարեկան ջերմաստիճանը 9°C է: հունվարին՝ -5°C, իսկ հուլիսին՝ 23°C:

Օդի միջին տարեկան ճնշումը 861.0 մբ է, բացարձակ խոնավությունը 8.2 մբ է, իսկ հարաբերականը՝ 72%:

Տարվա ընթացքում տեղումների քանակը՝ 563 մմ: Տեղումների առավելագույնը դիտվում է հունիսին՝ 74 մմ, իսկ նվազագույնը դեկտեմբերին՝ 16մմ:

Ձյան տեսքով տեղումների քանակությունը 124 մմ է: Նոյեմբերի 13-ից դիտվում է կայուն ձնածածկույթ, որը վերանում է ապրիլի 5-ին: Ձյան ծածկոցի առավելագույն շերտի բարձրությունը 63 սմ է, նվազագույնը՝ 1 սմ:

#### **1.3.4.2. Տեղանքի ռելիեֆ**

Ենոքավանի գյուղական համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 750-2425մ բարձրության սահմաններում: Ենոքավան գյուղի մի մասը կառուցված է մոտ 1100մ բարձրության վրա, մինչդեռ դրա զբոսաշրջային համալիրը (հանգստի և ժամանցի գոտին) գտնվում է 1300մ բարձրության վրա և ավելի բարձր (1280 - 1465մ): Համայնքի տարածքն ունի արտահայտված ռելիեֆ՝ հարավից սահմանափակված Սառնաջուր գետի 7 խորը ժայռոտ կիրճով: Այստեղ կան խմելու համար օգտագործվող բազմաթիվ աղբյուրներ:

### **1.3.5. Ինժեներաերկրաբանական պայմանները**

Կատարվել է տարածքի ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրություն: Տարածքների ինժեներաերկրաբանական պայմաններերն ուսումնասիրելու նպատակով, համաձայն առաջադրանքի, կատարվել է տարածքի ակնադիտական տեղագնում 1:5000 մասշտաբի տեղագրական հիմքի վրա ստացված 1:10000 մասշտաբի տեղագրական քարտեզի մեխանիկական խոշորացման եղանակով:

Դիտակետերի նկարագրությունը, տարածքի ինժեներաերկրաբանական շրջանացման սխեմատիկ քարտեզը (Մ 1:10000)՝ դիտակետերի տեղադրումով, բերվում է Հավելված 3-ում «Տարածքի ինժեներաերկրաբանական պայմանների մասին եզրակացություններ և սեյսամոֆիկոշրջանացման հետազոտությունների մասին հաշվետվություն»:

Ելնելով շինարարության համար պիտանելիության աստիճանից, ինժեներական նախապատրաստման աշխատանքների բնույթից ու ծավալից, երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքից, գեոմորֆոլոգիական նշաններից, հիդրոերկրաբանական պայմաններից, ֆիզիկաերկրաբանական պրոցեսների զարգացումից, տարածքում անջատված է երկու

*Ենթադրյալ համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

ինժեներատեխնիկական շրջան՝ պայմանականորեն բարենպաստ և անբարենպաստ շինարարության համար:

**Ընդհանուր տեղեկություններ**

ՀՀ Տավուշի մարզի Ենթադրյալ գյուղի տարածքի գոտիավորման նախագծի մշակման համար կատարվել է նշված տարածքի ինժեներատեխնիկական պայմանների ուսումնասիրություն շուրջ 150 հա մակերեսի վրա:

Տարածքի ինժեներատեխնիկական պայմաններին ուսումնասիրելու նպատակով, համաձայն առաջադրանքի, կատարվել են հետևյալ աշխատանքները.

- տարածքի ակնադիտական տեղազննում 1:5000 մասշտաբի տեղագրական հիմքի վրա (ստացված 1:10000 մասշտաբի տեղագրական քարտեզի մեխանիկական խոշորացման եղանակով),

Դիտակետերի նկարագրությունը, տարածքի ինժեներատեխնիկական շրջանացման սխեմատիկ քարտեզը (Մ 1:10000)՝ դիտակետերի տեղադրումով, բերվում են հավելվածներում:

**2.5.1. Տարածքի համառոտ ինժեներատեխնիկական բնութագիր**

Ենթադրյալ գյուղը գտնվում է Տավուշի մարզի հյուսիս-արևմտյան մասում, Իջևան մարզկենտրոնից շուրջ 3 կմ հեռավորության վրա:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է Գուգարաց լեռնաշղթայի արևելյան ճյուղավորման արևելյան հատվածի հարավային երոզիոն-ակումուլատիվ լանջի վրա, որի ստորին եզրը զառիթափ իջնում է դեպի Սառնաջուր գետի հունը, խորը հովտի երոզիոն-դենուդացիոն և լանջերի վրա: Ռելիեֆը կտրտված է, բավականին անհարթ, լանջերի մեծ թեքություններով, գետի ողողահունային մասում՝ բավականին հարթ:

Տարածաշրջանի և տարածքի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է վերին յուրայի նստվածքային ապարներով՝ կրաքարերով, դոլոմիտներով, քվարցիտներով, ծածկված չորրորդական հասակի էլուվիալ-դելուվիալ, ալուվիալ-պրոլուվիալ, կոլուվիալ կավային, ավազային, խոշորաբեկոր գոյացումներով:

Տարածքի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը բերվում է դիտակետերի դաշտային նկարագրության տվյալների հիման վրա.

Շերտ 1	– կավավազ և ավազակավ գորշ, դարչնագույն, տեղ-տեղ կարբոնատացված, սակավախոնավ, պինդ և կիսապինդ, խճով, խճավազով: Չորրորդական դելուվիալ գոյացումներ:
Շերտ 2	– խիճ խճավազով, մանր մեծաբեկորներով, գորշ և բաց գորշ կավավազի ու ավազակավի լցանյութով 20-30%: Չորրորդական էլուվիալ-դելուվիալ գոյացումներ:
Շերտ 3	– ժայռային ապարներ, ներկայացված՝ կրաքարերով, դոլոմիտներով, ճեղքավոր, հողմահարված: Վերին յուրայի նստվածքային գոյացումներ:

Գրունտների ֆիզիկամեխանիկական բնութագրերի միջինացված նորմատիվային ցուցանիշները բերված են աղյուսակ 1-ում, համաձայն СНиП 2.02.01-83:

Աղյուսակ 1

Ֆիզիկամեխանիկական բնութագրերը	Գրունտի շերտերը		
	1	2	3

*Ենթադրյալ համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

1. Գրունտի խտությունը, տ/մ <sup>3</sup>	1,85	1,95	2.30
2. Ծակոտկենության գործակիցը, e	0,90	-	-
3. Ներքին շփման անկյունը, $\varphi^I$ , աստիճան	20	36	-
4. Տեսակարար շաղկապվածությունը, $C^I$ , կՊա	14	2	-
5. Դեֆորմացիայի մոդուլը, E, ՄՊա	10	40	-
6. Պայմանական հաշվարկային ճնշում, $R_0$ , ՄՊա	0.20	0,42	0,7
7. Կարգն ըստ սեյսմիկ հատկությունների	II	II	I

Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերի համատարած հորիզոն բացակայում է:

Ֆիզիկատերկրաբանական պրոցեսներն ու երևույթները ներկայացված են մակերևութային ու թույլ ձորակային էրոզիայով, սողանքային երևույթներով: Վերջիններս տարածված են գյուղի արևմտյան մասում: Սողանքային գոտու չափերն են՝ լայնությունը – 100-200 մ, երկարությունը – շուրջ 300 մ, խորությունը գլխամասում – 4-6 մ: Սողանքավտանգ տարածքի մակերեսը կազմում է շուրջ 4 հա: Սողանքը բավականին հին է, մասամբ կայունացած, սակայն որոշ տներում ձևախախտումները շարունակվում են:

Ելնելով շինարարության համար պիտանելիության աստիճանից, ինժեներական նախապատրաստման աշխատանքների բնույթից ու ծավալից, երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքից, գեոմորֆոլոգիական նշաններից, հիդրոտերկրաբանական պայմաններից, ֆիզիկատերկրաբանական պրոցեսների զարգացումից, տարածքում անջատված է երկու ինժեներատերկրաբանական շրջան՝ պայմանականորեն բարենպաստ և անբարենպաստ շինարարության համար:

**1.3.6. Սեյսմիկ պայմանները**

Տարածքի գրունտների հորիզոնական առավելագույն արագացումների գնահատման համար հիմք է ընդունվել «ՀՀՇՆ 20.04- «Երկրաշարժադինամակոն շինարարություն. Նախագծման նորմեր» նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտևորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է առաջին սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.2g հորիզոնական արագացման արժեքը:

Հետազոտված տարածքների սեյսմամիկոշրջանացման եզրակացությունները ներկայացված են Հավելված 3-ում «Տարածքի ինժեներատերկրաբանական պայմանների մասին եզրակացություններ և սեյսմամիկոշրջանացման հետազոտությունների մասին հաշվետվություն»

**1.3.7. Շրջակա միջավայրը**

Ենթադրյալ բնակավայրի գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման բաժինը մշակվել է «տարածական պլանավորման համակցված փաստաթղթերի նախագծի «Շրջակա միջավայրի պահպանումը» բաժնի շրջանակում, որը մշակված է մեթոդական ցուցումների հիման վրա, գործող նորմատիվների, պետական ստանդարտների, բնապահպանական օրենքների և «ՇՄԱԳ կենտրոն» ՊՈԱԿ-ի տեխնիկական առաջադրանքի հիման վրա /1, 2/, ինչպես նաև համայնքների 2017-2021 թթ. զարգացման ծրագրերը հաշվի առնելով:

Բաժինը ամբողջությամբ ներկայացված է Հավելված 2-ում:

**1.4. ՀՈՂԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**



**1.4.1. Պատմության և մշակութային ժառանգություն**

Տավուշի մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով. վանական համալիրներ, բերդեր, խաչքարեր, կամուրջներ և այլն: Ամենահայտնի վանքերից են՝ Գոշավանքը, Հաղարծինը, Մակարավանքը, Տավուշի բերդը և այլն: Ենոքավանում կա գործող մեկ եկեղեցի: Մշակութային ժառանգության ցանկը բաղկացած է պետական և տեղական նշանակության 56 հուշարձաններից:



Ենոքավանի մեջ է մ.թ.ա. 2-րդ-1-ին հազարամյակի “Աստղի բլուր” դամբարանադաշտը: Շրջակայքում են Սբ. Սարգիս (XIII դար), Սբ. Հովհաննես (XII-XIV դարեր), “Սբ. Օկոնախաչ” (XII-XIII դարեր) եկեղեցիներն ու Սբ. Աստվածածին (XIII դար) և Սբ. Սարգիս (XII-XIII դարեր) մատուռները:

Ըստ ցանկի, մշակութային ժառանգության որոշ հուշարձաններ գտնվում են Ենոքավանից 16-25կմ հեռավորության վրա: Դրանց թվում են՝ մ.թ.ա.

II-I և մ.թ. IV-VI, VII-VIII դարերի բերդեր, լքված միջնադարյան բնակավայրեր, XII-XX և IX-XX դարերի տափանաքարեր, եկեղեցիներ, նույն ժամանակաշրջանի ջրաղաց, քարանձավային համալիր և այլն:

Խաչքարերը Հայաստանի ոչ նյութական մշակութային ժառանգության հիմնական տարրերից են: Նշված տարրերից են նաև դուդուկը և դրա երաժշտությունը, խաչքարերի սիմվոլիկան, լավաշը և դրա բաղադրատոմսը, ինչպես նաև ժողովրդական Քոչարի պարը:

Մշակութային կոթողների գրանցման փաստաթղթերը պահվում են պետական մարմինների կողմից: Մշակութային ժառանգության հուշարձանների մեծ մասը գտնվում է վատ վիճակում: Անհրաժեշտ է վերականգնողական աշխատանքների իրականացում:

*Ենթադրյալ համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

## **2. ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Տարածական պլանավորման ծրագրային փաստաթղթի մշակման նպատակը ամբողջության մեջ ներառված տարաբնակեցման համակարգի միավորի սոցիալական և տնտեսական զարգացման հիմնախնդիրները, ճանապարհատրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների կատարելագործումը, բնության, պատմամշակութային ժառանգության և շրջակա միջավայրի պահպանությունը, բնածին բարիքների և նախորդ սերունդների ստեղծած մարդատեխնածին նյութական արժեքների արդիականացումն ու խնայողաբար շահագործումը նպատակաուղղել ամբողջության և առանձին միավորների միջև զարգացման հիմնախնդիրների վերաբաշխման միջոցով շաղկապված որակական բովանդակային և առաջադիմական արդյունքի ստացման:

Հիմնվելով ներկա իրավիճակի և նախորդ ժամանակաշրջանի ուսումնասիրության ու վերլուծության եզրահանգման վրա՝ զերծ մնալ անիրատեսական զարգացման ծրագրերի առաջադրումից՝ բնակչության թվի աճի, տնտեսական, այդ թվում արդյունաբերական և գյուղատնտեսական ոլորտների, ինժեներական ենթակառուցվածքների կտրուկ ծավալային զարգացման և այլն: հիմնական ուղղությունները նպատակաուղղել գոյություն ունեցող հզորությունների կատարելագործմանը և բարեփոխմանը, ինչի շնորհիվ կարող են նոր հիմքեր ստեղծվել հեռանկարային զարգացման տեմպերի արագացման համար:

Զարգացման սկզբունքային ուղղությունների հիմքում ընդունել բնաշխարհի բարիքների՝ հողի, ջրի, անտառների, բնական և մարդածին լանդշաֆտային համալիրների խելամիտ և խնայողաբար օգտագործման պայմանները:

Ետևողական և շարունակական աշխատանք տանել բնակավայրերի տարածքների մաքրության պահպանման ուղղությամբ, ստեղծել աղբի և թափոնների հավաքման, կուտակման և վնասազերծման արդյունավետ համակարգ և համապատասխան տեխնիկական հզորություններ:

Բնակչության մեջ լայն քարոզչական աշխատանք տանելով զարգացման հիմքում ընդունել «կանաչ» և «խելամիտ» բնակավայրեր դարձնելու պայմանները:

Համայնքում բնակչության սոցիալական և ստեղծարարական մթնոլորտի ձևավորման նպատակով խրախուսել և ակտիվացնել հին ու նոր ավանդույթները, տեղական, տարածաշրջանային, կրոնական և պետական տոնական միջոցառումները, մարտի դաշտում զոհված հերոսների և համայնքի հասարակական կյանքում անձնական ներդրում ունեցող անձանց հիշատակման արարողությունների անցկացումը:

### **2.1. Զարգացման Հայեցակարգ**

#### **2.1.1. Տեսլական**

Տարածքի վերլուծության և շուկայի ուսումնասիրության արդյունքում, առաջարկում ենք Ենթադրյալի (այդ թվում՝ Ապագա Ռեզորթի) ճանաչելիության բարձրացման մի քանի առանցքային գաղափարներ, որոնք թույլ կտան կիրառել տարածաշրջանի առկա և ապագա ողջ ներուժը և ապահովել զբոսաշրջային բարձր հետաքրքրություն և զբոսաշրջային տնտեսության օբյեկտների զբաղվածությունը տարվա բոլոր եղանակներին: Ներկայացնում ենք 4 հիմնական ուղղությունները, որոնք կարելի է ստեղծել կամ զարգացնել.

Ենթադրյալը դիտարկվում է որպես հանգրվան տեղացիների համար և հայտնագործություն՝ զբոսաշրջիկների համար, ովքեր սիրում են էքստրեմալ սպորտաձևեր, նախընտրում են ընտանեկան հանգիստ գյուղական միջավայրում կամ լողավազանով և սպա կենտրոնով

*Ենթադան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*  
Ժամանակակից հյուրանոցում: Ստորև ներկայացված են զբոսաշրջային հիմնական տնտեսություններն իրենց ֆունկցիոնալ հնարավորություններով.

**Յեյ Էքսպրիմ Պարկ.** Արկաձների և Էքստրեմալ սպորտի սիրահարների համար հիանալի վայր.

- ✓ Զիփլայն:
- ✓ Զորբինգ:
- ✓ Ժայռամագլցում:
- ✓ Օդապարիկով թռիչքներ:

**Ապագա Ռեզորթ.** Միջինից բարձր դասի հյուրանոց զույգերի և ընտանիքների համար.

- ✓ Միջինից բարձր դասի հյուրանոց սպա և առողջարանային ծառայություններով, տեղական ապրանքանիշ:
- ✓ Սանդղավորված այգիներ:
- ✓ Թենիսի խաղադաշտ:
- ✓ Միջին դասի քոթեջներ:
- ✓ Բացօթյա միջոցառումների (օրինակ՝ տարեկան խոտաբույսերի փառատոններ, երաժշտական միջոցառումներ) տարածք:

**Ալանդ Ռեզորթ.** Միջինից բարձր դասի սեփական տներ/վիլաներ, որոնք կարող են օգտագործվել որպես հյուրատներ.

- ✓ Հիասքանչ տեսարաններով կացարաններ
- ✓ Զիարշավարան

**Ենթադան գյուղ.** գյուղատնտեսական զբոսաշրջության զարգացմանն ուղղված գյուղ

- ✓ Ընտանեկան հանգստի ամառային հանգրվան
  - ✓ Պարբերական միջոցառումներ՝ սննդի և հուշանվերների բաց տոնավաճառ, թխվածքների, օղու, գորգագործության, գինեգործության վարպետաց դասեր:
- Ստորև խմբավորված ենք այն հիմնական զբաղմունքները, որոնք կարող են հետաքրքրել այցելուներին՝ սնունդ, ցերեկային զբաղմունքներ, գիշերակաց և այլ հատուկ առաջարկներ:

**Սնունդ և ոգելից խմիչքեր**

- ✓ գյուղի տեղական փոքր սրճարաններ
- ✓ ռեստորաններ. գինետուն և ռեստորան գյուղում
- ✓ ռեստորան, լողավազանի բար և սրճարան այգում «Ապագա Ռեզորթ» հյուրանոցային համալիրում

**Ցերեկային զբաղմունքներ**

- ✓ գյուղական հանգիստ ընտանիքների համար
- ✓ գորգագործություն
- ✓ ծանոթացում հայկական հաց/լավաշ թխելու ավանդույթներին
- ✓ այցեր Իջևանի գինու գործարան
- ✓ այցեր Լաստիվերի քարանձավներ
- ✓ սննդի պարբերական բացօթյա շուկաներ և արվեստի/ձեռքի աշխատանքների տոնավաճառներ գյուղում

**Գիշերակաց**

- ✓ մեկ միջինից բարձր դասի հյուրանոց, հավանական միջազգային բրենդի



*Ենթադաս համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

- ✓ միջին դասի քրթեջներ ցածրաբյուջե հանգիստը նախընտրող զբոսաշրջիկների համար
- ✓ մասնավոր առանձնատներ
- ✓ գյուղական տներ ընտանեկան հանգստի համար
- ✓ հյուրատներ գյուղում

Հարուկ առաջարկներ

- ✓ թիմ բիլդինգ / միջոցառումներ
- ✓ էքստրեմալ սպորտաձևեր
- ✓ հարսանեկան արարողություններ

Անհատական հանգիստ կենդանիների սիրահարների համար

Հանգստի անհատական կազմակերպում կենդանիների և բնության երիտասարդ և տարեց սիրահարների համար, ինչպես նաև ամենօրյա եռուզեռից հանգստանալ ցանկացող զույգերի համար:

Գործող ազարակում կարելի է անձամբ մասնակցել և փորձել ազարակում իրականացվող բոլոր աշխատանքները, առաջին ձեռքից լսել ֆերմերային տնտեսության մասին տարբեր մանրամասներ: Գյուղական ազարակում կարելի է հանգրվանել իսկական գյուղական միջավայրում: Այս ազարակները պահպանում են տեղական արտադրության ավանդույթները:

2.1.2. Կարիքների գնահատում

Ստորև ներկայացվում է հյուրանոցային համալիրի համար նպատակային շուկայի հիմնական սեգմենտների ծավալներն ու նկարագիրը: Գնահատվել է այցելուների միջին թիվը՝ կայուն ծանրաբեռնվածությամբ մեկ տարվա կտրվածքով:

Այնուհետև կիրառվել է շուկա մուտք գործելու ողջամիտ ցուցանիշ (տվյալ սեգմենտի քանի տոկոսը կարող է այցելել յուրաքանչյուր տարի) և կրկնակի այցերի ցուցանիշ (տարեկան քանի անգամ տվյալ տոկոսը կարող է այցելել) շուկա յուրաքանչյուր սեգմենտի համար, որն, իր հերթին, թույլ կտա կանխատեսել եկամուտները: Այս մոտեցումը թույլ է տալիս կանխատեսել տարեկան այցելուների թիվը, որը կարող են ապահովել տարածքի բնակիչները և զբոսաշրջության շուկան:

Շուկայի սեգմենտավորման այս աղյուսակը ցույց է տալիս, որ մոտ 5 միլիոն մարդուց բաղկացած շուկան թույլ է տալիս կատարել շուրջ 100 000 այցելուի կանխատեսում՝ կայուն ծանրաբեռնվածությամբ մեկ տարվա կտրվածքով, շուկա մուտք գործելու առավել հարմար մակարդակով և բիզնեսի շրջահայաց պլանավորմամբ:

2% ընդհանուր մուտք գործելը շուկա հարմար է, սակայն զգալիորեն կախված է ներքին զբոսաշրջությունից՝ միջնաժամկետ կտրվածքով, և առավել կախված է միջազգային զբոսաշրջությունից՝ երկարաժամկետ կտրվածքով: Միջնաժամկետ սցենարով գնահատվել է շուկայի բաշխվածությունը.

- ✓ մոտ 9% այցելություններ Տավուշի մարզից,
- ✓ մոտ 53% այցելություններ Հայաստանի այլ մարզերից,
- ✓ և մոտ 38% միջազգային զբոսաշրջիկների այցելություններ:

Այնուհետև կիրառվել է միջազգային զբոսաշրջիկների թվի 5% տարեկան միջին աճը և ավելացրել մուտք գործելու մակարդակը 2%-ից 3%՝ հաշվի առնելով, որ հանգստավայրը ավելի կզարգանա և ճանաչելիություն ձեռք կբերի, ինչպես նաև հավատարիմ այցելուներ կունենա մինչև 2028թ.: Այսպիսով, անհրաժեշտ է ապահովել 3% ընդհանուր մուտք գործելու մակարդակ: Գիշերակացով զբոսաշրջիկների թիվը կազմում է հանգստավայրի ընդհանուր զբոսաշրջիկների թվի 30%-ը:

*Ենթադան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

Առավելագույն ծանրաբեռնված՝ «պիկ» օրվա այցելուների թիվը գնահատելու նպատակով պետք է ընդունել, որ առավելագույն ծանրաբեռնված ամիսն օգոստոսն է լինելու, ապահովելով միջինը երկու օր գիշերակացով զբոսաշրջիկների ընդհանուր թվի 15%-ը: Հյուրանոցի ամենօրյա հյուրերի, հանգստավայրի հյուրերի, առանց գիշերակացի այցելուների, հյուրանոցում բնակվողների և աշխատակազմի ներկայացուցիչների ընդհանուր թիվը ներկայացնում է առավելագույն ծանրաբեռնվածության օրը ներկա մարդկանց թիվը, որը կազմում է մոտ 1700 հոգի:

Եթե ենթադրենք, որ այդ թիվը կարող է հասնել 20%-ի, ապա հյուրանոցային համալիրը պետք է ունենա մոտ 2000 այցելու ընդունելու հնարավորություն առավելագույն ծանրաբեռնվածությամբ օրերին՝ միջնաժամկետ կտրվածքով և մոտ 2400 այցելու՝ երկարաժամկետ կտրվածքով:

Շուկայի ուսումնասիրությունը և տեսլականի ընդհանուր ընկալումը թույլ է տալիս օբյեկտիվ կանխատեսումներ անել տվյալ հանգստավայրի պահանջարկի վերաբերյալ: Պատվիրատուի տրամադրած տվյալներից ելնելով՝ զիվիլայնի այցելուների տարեկան թիվը կազմում է մոտ 17 000 մարդ, իսկ Ենթադանի (Ապագա) այցելուների թիվը հասնում է 50 000-ի: Հյուրանոցային համալիրի տարեկան ծանրաբեռնվածության մակարդակը կազմում է 63%, իսկ սեզոնային ծանրաբեռնվածությունը հասնում է 85%-ի:

Զբոսաշրջիկների կացության միջին ժամանակահատվածի աճելու պարագայում (ըստ լավատեսական կանխատեսումների)՝ հասնելով 2 օրվա՝ հաշվի առնելով բազմազան զվարճանքների օբյեկտների լայն ընտրությունը: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ պատվիրված տեղերի (գիշերակաց) ընդհանուր թիվը տարեկան կհասնի 70 000-ի:

2.1.3. Զարգացման հայեցակարգ. Ենթադան

Ենթադան գյուղի վիճակն անբավարար է, այստեղ շինությունների մեծ մասը վերանորոգման կարիք ունի: Բնակիչների հիմնական մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Վերջին տարիներին զբոսաշրջային տնտեսության մի քանի օբյեկտներ են կառուցվել, մասնավորապես, միջին դասի հյուրանոց, ռեստորան և գինետուն:

Նախագծի շրջանակում՝ բնակավայրի կարգավիճակը դիտարկելով թե տեղի մշտական և թե այցելու ժամանակավոր բնակչության համար բարենպաստ կենսամիջավայրի ձևավորման տեսանկյունից, առաջարկվում է բարձրացնել Ենթադանի ճանաչելիությունը՝ շեշտը դնելով հանրային սննդի և ըմպելիքների օբյեկտների (F&B tourism) և ընտանեկան ֆերմաների զարգացման վրա: Տվյալ հայեցակարգի իրականացումն ապահովելու համարկարող են դիտարկվել հետևյալ ուղղությունները.

**Ընդանեկան ֆերմաներ.** Ֆերմաների հետ ինտեգրված բնակելի շինություններ երեխաներով ընտանիքների համար: Ինչպես ներկայացվեց վերոհիշյալ օրինակներում, գյուղատնտեսական զբոսաշրջությունը (ագրոտուրիզմ) և ընտանեկան ֆերմերային տնտեսությունները վերջերս ի հայտ եկած միտումներ են գյուղական միջավայրում, կենդանիների հետ անմիջական շփում ենթադրող հանգստի սիրահար ընտանիքների շրջանում:

**Նոր միջին դասի հյուրանոց.** Առաջարկվում է կառուցել լրացուցիչ միջին դասի հյուրանոց մինչև 30 համարներով, առկա հյուրանոցին կից: Այդ նպատակով հարմար հողատարածքը նշված է քարտեզի վրա:

**Սննդի և ըմպելիքների օբյեկտներ (F&B զբոսաշրջություն) և մանրածախ առևտրի հեղինակություն փողոց.** Առաջարկվում է կառուցել հետիոտների համար նախատեսված ճեմուղի

*Ենթադան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում* (մեքենաների մուտքը միայն բնակիչների համար), որտեղ կլինեն փոքր սրճարաններ, բարեր, տեղական և ավանդական ապրանքների/ձեռագործ արվեստի գործերի մանրածախ առևտրի միավորներ/խանութներ:

**Բացօթյա շուկաներ.** Հանրային սննդի և ըմպելիքների պողոտան կավարտվի բացօթյա շուկայով, որտեղ տեղաբնակները կարող են վաճառել տեղական արտադրանք, ձեռագործ իրեր և պատրաստի սնունդ:

**Բազմաֆունկցիոնալ մարզադաշտ.** Առաջարկվում է կառուցել բացօթյա սպորտային օբյեկտ տեղաբնակների և այցելուների համար: Դա կարող է լինել բազմաֆունկցիոնալ մարզադաշտ ֆուտբոլի, բասկետբոլի և այլ մարզումների համար: Բացի այդ, դա կարող է գյուղի այցելուների համար ծառայել որպես սպորտային օբյեկտ:

**Կայանատեղիների գոտի.** Գյուղի մուտքային հանգույցի մոտ նշվել է կայանատեղիների գոտին այցելուների համար, նախատեսված մինչև 70 մեքենաների համար՝ գյուղի ներքին տարածքը մեքենաների հոսքից զերծ պահելու նպատակով:

#### 2.1.4. Զարգացման ֆիզիկական ցուցանիշներ

Առանձին մասով ներկայացնում ենք Ենթադանի զբոսաշրջային տնտեսության օբյեկտների ֆիզիկական ցուցանիշները

Հյուրանոցային համարներ. Առաջարկվում է միջին դասի հյուրանոց լրացուցիչ 30 համարներով: Խորհուրդ է տրվում վերանորոգել 20 սենյակ հյուրատներում (10 հյուրատուն), իսկ ֆերմերային տնտեսության հետ ինտեգրված 8 նոր գյուղական տունը կարող է լրացնել ընդհանուր առաջարկը: Արդյունքում, գյուղը կունենա մինչև 70 լրացուցիչ սենյակ այցելուներին ընդունելու համար:

Սրճարաններ և ռեստորաններ. ինչպես արդեն նշեցինք զարգացման հայեցակարգում, ստեղծել ենք F&B հանրային սննդի օբյեկտների պողոտա 100 հաճախորդի համար նախատեսված 10 սրճարաններով: Այս վայրերը կարող են այցելել ոչ միայն զբոսաշրջիկները, այլև տեղաբնակները, որպես շփման և հանգստի գոտի: Ցուցանիշների մեջ ընդգրկված է առկա ռեստորանն ու գինետունը մոտ 50 հաճախորդի համար նախատեսված: Պողոտան զբաղեցնում է 950մ<sup>2</sup> տարածք, որը բավարար է տեղացիների և այցելուների ակնկալվող քանակի համար:

Մանրածախ առևտուր. F&B հանրային սննդի օբյեկտների պողոտայում կլինեն փոքր և մեծ առևտրի կետեր, ընդհանուր մանրածախ առևտրի և սպասարկման բլոկներ: Փողոցային առևտուրը կզբաղեցնի ընդհանուր առմամբ 800մ<sup>2</sup> մակերես: Մենք ներառել ենք բացօթյա շուկան մանրածախ առևտրի բաժնում, այն զբաղեցնում է 1900մ<sup>2</sup> տարածք, փոքր վաճառասեղաններով և բաց տարածքներով, որտեղ կլինեն նստելու տեղեր և միջոցառումների համար նախատեսված փոքր բեմահարթակ:

Սպորտային օբյեկտներ. Բազմաֆունկցիոնալ մարզադաշտը տեղակայված է առկա դպրոցի հակառակ կողմում՝ զբաղեցնելով 2480 մ<sup>2</sup> տարածք, ներառելով խաղահրապարակներ և փոքր շինություն հանդերձարանների համար: Մենք փորձել ենք գտնել ձիարշավարանի համար հարման տարածք: Ինչպես գիտեք, այս վայրում ձիավարության մշակույթը նորություն չէ, հետևաբար ցանկալի է զարգացնել տվյալ ֆունկցիոնալ օբյեկտը: Մենք տեղակայել ենք 1հա տարածք զբաղեցնող ձիարշավարանը Ալանդի տարածքի շրջակայքում, սակայն հստակ տեղադրությունը կորոշվի հետագա ուսումնասիրությունների արդյունքում:

*Ենթադան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

Մասնավոր բնակելի օբյեկտներ. Ալանդի շուրջ տարածքը կարելի է ձևափոխել առանձնատների/մասնավոր բնակելի օբյեկտների տարածքների: Խորհուրդ է տրվում կառուցել 15 միջին չափի միավոր (130մ2) յուրաքանչյուրը 470մ2 բարեկարգ բակով: Այցելուների կենտրոնը, որպես զբոսաշրջիկների համար նախատեսված տեղեկատվական և համակարգման կետ, պետք է տեղակայված լինի գյուղի ամենաբանուկ հատվածում: Հետևաբար, առաջարկում ենք այն տեղափոխել գյուղապետարանի շինության տարածք: Ընդհանուր տարածքը զբաղեցնում է 266 մ2 մակերես, ինչը բավարար է տվյալ ֆունկցիոնալ օբյեկտի համար:

Ապագա Ռեզորթի կայանատեղուց զատ առաջարկվում են կայանատեղիներ գյուղում, մասնապորապես 70 մեքենայի համար:

Գյուղի առանձնահատկությունների թվում են.

- ✓ Գյուղական միջավայր
- ✓ Ավանդական, օրգանական թարմ սնունդ և տեղական արտադրության սննդամթերքներ
- ✓ Կենդանիներ և ֆերմերային տնտեսություններ
- ✓ Գինեգործություն և ձեռագործություն

Հաշվի առնելով գյուղի առանձնահատկությունները և տեղադիրքը, առանձնացրել ենք հավանական այցելուների թիրախային խմբերը:

**Արշավորդ զբոսաշրջիկներ և էքստրեմալ արկածների սիրահարներ.** հիմնականում օտարերկրացիներ, ովքեր կայցելեն Յելլ Պարկ և կօգտվեն էքստրեմալ սպորտի առկա առաջարկներից: Ապագա Ռեզորթը նման զբոսաշրջիկների համար կարող է գնային առումով հարմար չլինել և նրանք կգերադասեն գիշերակաց փնտրել գյուղում:

**Միջին եկամուտով ընտանիքներ երեխաների հետ.** Հիմնականում տեղացիներ են, ովքեր ցանկանում են արձակուրդներն անցակցնել գյուղական միջավայրում, վայելել մաքուր օդ, ավանդական կերարկրատեսակներ և ֆերմերային տնտեսություններ այցելել:

**Խմբեր.** հիմնականում տեղական հասարակական կազմակերպություններ կամ ուսումնական հաստատություններ, որոնք կազմակերպում են սեմինարներ, հանդիպումներ կամ սեզոնային ճամբարներ իրենց աշխատակիցների կամ ուսանողների համար: Մասնավորապես, գյուղատնտեսական ֆակուլտետները և համալսարանը կարող են հետաքրքրություն ցուցաբերել տվյալ տարածքի հանդեպ՝ այն որպես «կենդանի լաբորատորիա» օգտագործելու համար:

## 2.2. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Բնական պայմանների և մարդու գործունեության համադրությամբ ձևավորվել է տարածական հատակագծային գոյացություն, որն իր տարածական կառուցվածքն ունի: Այն բնորոշվում է բաղադրիչների բովանդակային կազմով, տարածքներով, հեռավորություններով, հանգուցային կամ կետային, և գծային տարրերով ու դրանց հատկություններով:

Հանգուցային կամ կետային տարրերից կարևորվում են բնակավայրերը, դրանց մասեր կազմող բնակելի, հասարակական, ընդհանուր օգտագործման տարածքները, կառուցապատումը, ճանապարհափողոցային ցանցը, կանաչապատումը և այլն: Ի տարբերություն վերը նշվածի, արդյունաբերական կառուցապատումը դիտարկվում է որպես հանգուցային տարր, բնակչության կենսագործունեությունն ապահովող ինժեներական ենթակառուցվածքը՝ գծային տարրեր:

*Ենթազգային համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

Գծային տարրերի կազմում առանձնանում են միջբնակավայրային ճանապարհները, որոնց միջոցով իրագործվում է միջբնակավայրային արտաքին հաղորդակցությունը, բնակավայրերի, արդյունաբերական, գյուղատնտեսական արտադրության և այլ ձեռնարկությունների ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, կապի միջոցների մայրուղային գծերը: Նշված գծային տարրերն ունեն իրենց հանգուցային տարրերը՝ ջրընդունիչ և ջրաբաշխիչ կառույցներ, էլեկտրակայաններ և էլեկտրատեղակայաններ, գազաբաշխիչ կայաններ և այլն:

Վերը նշված տարրերի միջոցով է բնութագրվում համայնքի տարածքի հատակագծային կառուցվածքը: Հատակագծային կառուցվածքի ձևավորման հիմնական գործոնը նաև տարածքի բնական պայմաններն են՝ ձևաբանական (ռելիեֆ) կամ հողի մակերևույթի ձևը, ջրաբանական ցանցը, ինչպես նաև ինժեներատեխնիկական պայմանները:

Տարածքի հատակագծային կառուցվածքի ձևավորման վերը նշված հիմնական տարրերից առաջին հերթին առանձնանում է Մ-4 միջպետական նշանակության ավտոմայրուղին, որն անցնում է հյուսիս-հարավ ուղղությամբ, Աղստև գետին զուգահեռ: Այս գծային գոյացությունը հատակագծային կառուցվածքի գլխավոր գծային տարածական առանցքն է, որի շնորհիվ իրականացվում են սոցիալական, տնտեսական, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին կապերը: Մայրուղին, անցնելով Իջևան քաղաքի միջով, տրանսպորտային կապերի հիմնական և միակ հաղորդակցության միջոցն է Գետահովիտ, Լուսաձոր, Ենոքավան, Խաչթառակ և Լուսահովիտ գյուղերի միջև: Ենոքավան բնակավայրը գտնվում է միջպետական մայրուղուց որոշակի հեռավորության վրա: Հեռավորությունը մայրուղուց 6.5 կմ է: Բարդ ռելիեֆով պայմանավորված՝ նշված 6.5 կմ-ը ներառում է 11 ոլորան: Բնակավայրի հատակագծային կառուցվածքի ձևավորումը բարդ ռելիեֆի պայմաններում հիմնականում տարերային բնույթ է կրում:

**2.3. Հողօգտագործում**

Բնակավայրի տարածքային զարգացման համար առաջին հերթին առաջարկված են այն տարածքները, որոնք համապատասխան նպատակային նշանակության հողերում կարևոր նշանակություն չեն ներկայացնում: Դրանք առաջին հերթին այլ կամ անօգտագործելի գործառական նշանակության կարգավիճակ ունեն: Որոշակի դեպքերում տարածքային զարգացման համար առաջարկված է այլ նպատակային նշանակության տարածքներ, որոնք նախատեսվում են հանգստի գոտիների ստեղծման համար: Ըստ էության, բնակավայրը ձեռք է բերել քաղաքաշինական-տնտեսական զարգացման նոր ուղղվածություն, որը զգալիորեն խթանում է բնակավայրի տնտեսական աճը և նպաստում բնակչության կենսամակարդակի պայմանների բարելավմանը, կենսամիջավայրի բարեկարգմանը: Այդ գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով և զարգացող գործառույթներն սպասարկելու համար անհրաժեշտ համապատասխան ենթակառուցվածքի ձևավորման նպատակով որոշակի հողատեսքեր, որոնց ներկա օգտագործումն առավել քիչ արդյունավետ է, քան նախագծով վերագրվողը՝ դիտարկվել են որպես բնակավայրի հեռանակարային զարգացման տարածքներ և դրանց նկատմամբ կատարվել նպատակային և/կամ գործառնական նշանակության փոփոխություններ:

**2.4. Բնակչության հաշվարկային թիվը**

*Ենոքավան համայնքի հողօգտագործման գլխավոր հատկագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*  
 Բնակավայրի հիմնական առկա և հաշվարկային (հեռանկար) բնակչության թիվը ներկայացված է ստորև աղյուսակում:

Հիմնական բնակչությունից բացի, տարբեր նպատակներով՝ ըստ աշխատանքի բնույթի, մասնագիտության բերումով կամ զբոսաշրջության և հանգստի, բնակավայր են այցելում և հետագայում էլ այցելելու են անհատներ կամ խմբեր, որոնք կազմում են ոչ

Բնակավայրեր	Հիմնական բնակչության թիվ, մարդ	
	Առկա	հաշվարկային
Ենոքավան	537	600

հիմնական բնակչությունը:

Կարճաժամկետ այցելուների (ոչ հիմնական բնակչության) քանակական

Բնակավայրեր	Հիմնական բնակչության թիվ, մարդ		Այցելուների հաշվարկային թիվ, մարդ/օր			Ընդհանուր հաշվարկային թիվ, մարդ/օր
	առկա	հաշվարկային	առաջնահերթ	միջնաժամկետ	հեռանկար	
Ենոքավան	537	600	50	100	200	650 –800

վերլուծությունը նպատակաուղղված է հաշվարկելու կենսաապահովման համակարգում (կոմունալ ենթակառուցվածք) սպառման լրացուցիչ պահանջվող պաշարը (ռեսուրս):

## 2.5. Բնակարանային ապահովվածությունը

Բնակավայրերի առկա բնակարանային ֆոնդի ցուցանիշները կարևոր են հեռանկարային զարգացման ուղղությունները որոշելու համար: Գոյություն ունեցող բնակարանային ֆոնդի և բնակչության թվի ցուցանիշներն ունենալու դեպքում հնարավոր է հաշվարկել բնակավայրերի տարածքային զարգացման համար պահանջվող հողատարածքը: Այս ցուցանիշների ստացումն ու վերլուծությունը, թույլ կտա հիմնավորել բնակավայրի հատակագծային կառուցվածքում տարածքային աճի մեծությունը և ընտրվող ուղղությունը:

Հաշվի առնելով, որ Պատվիրատուի կողմից տրամադրված ելակետային տվյալների փաթեթում բնակարանային ֆոնդը բերված է միայն տների (տնտեսությունների) քանակով, խնդրի լուծման և սույն հաշվարկը կատարելու համար օգտագործվել են ՀՀ Վիճակագրական ծառայության Իջևանի տարածաշրջանի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսի բաշխվածության վերաբերյալ տվյալները:

ՀՀ Տավուշի մարզի վիճակագրական վարչության տվյալներով Ենոքավան բնակավայրում բազմաբնակարան շենքերի բնակարանային ֆոնդը բացակայում է:

ՀՀ Տավուշի մարզի վիճակագրական ծառայության 2011 թ. մարդահամարի տվյալները, որտեղ աղյուսակով բերված է տնային տնտեսությունների (միավորների) թիվը և դրա տրոհումը ըստ անձերի թվի: Տնային տնտեսությունները, միավորները, խմբավորված են տների մակերեսներին վերաբերող յոթ խմբերում: Միավորների շուրջ 8.5-ի% համար մակերեսը նշված չէ:

*Ենթադաս համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

Ունենալով գյուղերի բնակելի տների թվերը և վերլուծելով վիճակագրական ծառայության, թեև ամբողջ մարզի համար միջինացված՝ ցուցանիշները, հնարավոր է պատկերացում կազմել բնակավայրերի առկա բնակարանային ֆոնդի վերաբերյալ:

Բնակավայրի անվանում	Բնակչության թիվ, մարդ առկա/հաշվարկային	Տների թիվ, հատ	Մեկ տան ընդհանուր միջինացված մակերես, մ <sup>2</sup>	Տների ընդհանուր մակերես, հազ.մ <sup>2</sup>	Մեկ տանը բնակվողի թիվ, մարդ/տուն	Մեկ բնակչին հասնող միջինացված մակերես, մ <sup>2</sup> /մարդ
1	2	3	4	5	6	7
Ենթադաս	537	132	81.20	10.74	4.06	20.00

Վերը նշված մոտեցման շնորհիվ, թեև միջինացված ցուցանիշների վերլուծության արդյունքում ստացվում է, որ բնակավայրում տարբեր մակերես ունեցող տների հաշվարկային խմբերի միջինացված տվյալները կազմում են 20 ք.մ.:

Բնակչության բնակարանային մակերեսով ապահովվածության առկա և հաշվարկային

Գյուղերի անվանում	Բնակչության հաշվարկային թիվ, մարդ	Տների հաշվարկային թիվ, հատ	Մեկ տան ընդհանուր միջինացված հաշվարկային մակերես, մ <sup>2</sup>	Մեկ բնակչին հասնող միջինացված հաշվարկային մակերես, մ <sup>2</sup> /մարդ	Հաշվարկային ընդհանուր մակերես, հազ.մ <sup>2</sup>
1	2	3	4	5	6
Ենթադաս	600	132	81.20	26	15.6

միջինացված ցուցանիշները:

Աղյուսակի հինգերորդ սյունակում ներկայացված մեկ բնակչին հասնող միջինացված մակերեսի հաշվարկում հաշվի է առած ոչ հիմնական բնակչության՝ սեզոնային հանգստացողների, զբոսաշրջիկների և այլ հյուրընկալելու հնարավորություն ունենալու հանգամանքը:

## 2.6. Հասարակական սպասարկման համակարգ

Հասարակական սպասարկման համակարգի գրեթե բոլոր հիմնական բաղադրիչները տեղում գոյություն ունեն: Ինդիլը դրանց վերանորոգման, արդիականացումն և սեյսմակայուն շինարարության նորմերին համապատասխանեցման միջոցառումների իրագործման մեջ է:

Ենթադան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում  
 Ստորև բերված աղյուսակում ներկայացված է «ՏԱՎՈՒՇ-6»-ի մակարդակում ընդգրկված բնակավայրերում բնակչության հասարակական սպասարկման համակարգի համահավաք հաշվարկային ցուցանիշները: Բնակչության հաշվարկային թիվը 31.26 հազ.մարդ

1	Ցուցանիշը	Չափի միավորը	Նախագծային
			Ենթադան
2	3	8	
1	Մանկական, նախադպրոցական կազմակերպություններ, այդ թվում՝		
1ա	մանկապարտեզներ ընդհանուր տեսակի	տեղ	45
2	Ծածկած լողավազաններ նախադպրոցական հասակի երեխաների համար	օբյեկտ	1
3	Հանրակրթական դպրոցներ, այդ թվում	աշակերտ. տեղ	110
3ա	1-9-րդ դասարաններում	-՝-	72
	10-12-րդ դասարաններում		18
3բ	Մասնագիտացված	-՝-	8
3գ	Միջդպրոցական ուսուցում	-՝-	8
3դ	Արտադպրոցական ըստ ոլորտների՝ -տեխնիկական, գործարարական, բնագիտական -մարզական -գեղագիտական	-՝-	2 1 1
4	Գիշերօթիկ դպրոցներ	-՝-	2
5	Գիշերօթիկ տներ մեծահասակների, այդ թվում վետերանների կամ հաշմանդամների համար	տեղ	3
6գ	Բժշկական շտապ օգնության կայաններ	ավտոմեքենա	0.09
7	Մարզական կառույցներ		
7ա	Ընդհանուր օգտագործման մարզասրահներ	մ <sup>2</sup>	48
7բ	Մարզադահլիճներ	մ <sup>2</sup>	60
7գ	Ծածկած լողավազաններ	մ <sup>2</sup>	18
8	Գրադարաններ և համակարգչային կենտրոններ ինտերնետային կապով	տեղ	2
9	Հյուրանոցներ	-՝-	4
10	Կոմունալ ծառայություններ		
10ա	Լվացքատներ	կգ	72
10բ	Քիմմաքրման կետեր	-՝-	9




*Ենոքավան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

10գ	Հանրային բաղնիքային համալիր	տեղ	6
10դ	Կենցաղ սպասարկման ծառայություններ	աշխատ. տեղ	6
11	Հրշեջ կայաններ	ավտո մեքենա	0.12
12	Կապի հանգույցի ցանց	օբյեկտ	1
13	Հանրային զուգարաններ	կոմպլեկտ սարք	1
14	Հուղարկավորման ծառայություն ու գերեզմանոց	օբյեկտ	1
15	Քաղաքային (գյուղական) շուկա	վաճառատեղ	18
16	Հանրային սննդի ձեռնարկություններ	տեղ	27

**2.7. Տրանսպորտ և ճանապարհային ցանց**

«Վ» տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության գրությամբ «Վ» տավուշի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների սպասարկման վերաբերյալ տեղեկացված է, որ Մ-4 ավտոճանապարհի մարզում անցնող հատվածի երկարությունը կազմում է 64.6 կմ հասնելով մինչև «Վ» պետական սահման, Հ-26 հանրապետական նշանակության Ենոքավան-Կարմիրգյուղ ավտոճանապարհը՝ 53.5 կմ և Հ-36 հանրապետական նշանակության Իջևան-Նավուր-Բերդ ավտոճանապարհը՝ 63.8 կմ  
 Մ-4 ավտոճանապարհը համայնքի տարածքում կոմունիկացիոն միջանցքի դեր է կատարում, որից անմիջապես օգտվում են գյուղերը:  
 Հ-26 ավտոճանապարհը սկիզբ է առնում Մ-4-ից դեպի Ենոքավան տանող խաչմերուկից և անցնելով գյուղի տարածքով ուղղվում է դեպի Նոյեմբերյանի տարածաշրջանի Կարմիրգյուղ ու Ջուջևան գյուղեր, շարունակվում է միանալով Մ-16 ավտոմայրուղուն հասնում է Նոյեմբերյան քաղաքին:



Համայնքի տարածքի ճանապարհային ուրվագիծ

*Ենթադաս համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

Համայնքում ընդգրկված բնակավայրերի միջև հեռավորությունը, տեղական ինքնակառավարման մարմինների շենքերի միջև, կմ, ներկայացված է ստորև աղյուսակում:

Անվանումը	ԴՊԻԳԿԿ	ՏԿԻԱՆՆԵԳԵ	ՍԻՆՏԵՆ	ԵՆՍԻՄԵՆ	ՍՍԵՈՒՍԿԻ	ԿՈՍՊՈԼԻՏ	ՏԿԻԱՆՆԵԳԵ
ԻՋԵՎԱՆ		1	4	14	5	6	10
ԳԵՏԱՀՈՎԻՏ	1		5	13	4	5	8
ԳԱՆՁԱՔԱՐ	4	5		19	9	11	14
ԵՆՈՔԱՎԱՆ	14	13	19		17	19	22
ԼՈՒՍԱԶՈՐ	5	4	9	17		2	5
ԽԱՇԹԱՌԱԿ	6	5	10	19	2		3
ԼՈՒՍԱՀՈՎԻՏ	10	8	14	22	5	3	

Տեղական նշանակության ճանապարհները սկսվում են Մ-4 ավտոմայրուղուց և ուղղվում են դեպի գյուղեր, Իջևան քաղաքում նույնպես նաև Հ-36 հանրապետական նշանակության ավտոմայրուղուց: Գանձաքար տանող ճանապարհը սկսվում է Մ-4-ից և Հ-36 ավտոմայրուղով Իջևան քաղաքի և Գանձաքար գյուղի միջով ոլորապտույտ շարունակվում է դեպի Իճաքար գյուղը:

Լուսահովիտ համայնքի մոտեցումը կատարվում է Խաշթառակի տեղական նշանակության ճանապարհով, որը հասնելով Խաշթառակի տարածք, անջատվելով մտնում է Լուսաձոր:

Տեղական նշանակության ճանապարհներից գրեթե բոլորը մինչև համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների շենքերը (գյուղապետարանները) ասֆալտապատ են, մյուս հատվածները հողածածկ են, որոշ հատվածներում ողողված և վնասված են անձրևա-ջրահոսքերից և պահանջում են հիմնանորոգման աշխատանքների կատարում:

Տարածաշրջանում գործող հեռուստատեսային հաղորդիչ կայաններն են՝ «Իջևան» կայանը, որը գտնվում է Գանձաքար գյուղում և զբաղեցնում է 1.4548 հա և «Գանձաքար» կայանը, որը նույնպես գտնվելով Գանձաքարի 33 փողոցի 9/2 հասցեում զբաղեցնում է 0.00564 հա տարածք:

Կապի միջոցների վերաբերյալ ստացված տեղեկություններով տարածքում գործում են «ԱրմենՏել» ՓԲԸ, «Յու.Քոմ» ՍՊԸ, «ՄՏՍ Հայաստան» (նախկինում՝ «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ), ինչպես նաև «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ: Ցանցերի զարգացման որևէ աշխատանքների կատարում չեն նախատեսում:

**2.1. Բնակավայրի հեռանկարային զարգացման ցուցանիշներ**

Բնակավայրերի տարածքներում բարենպաստ և ենթակառուցվածքներով ու հանրային տարածքներով հագեցած կենսամիջավայրի ձևավորմանն ուղղված կատարվել են հողատեսքերի մի շարք նպատակային և գործառնական փոփոխություններ, որոնք արտացոլված են ստորև ներկայացվող նպատակային նշանակությունների փոփոխությունների աղյուսակում: Փոփոխությունները ներկայացված են ըստ գերակայությունների՝ առաջնահերթ, միջնաժամկետ և հեռանկարային: Դրանց համապատասխան կատարվել են նաև փոփոխություններ հողատեսքերի հաշվետվություններում, ինչն արտացոլված է տեխնիկատնտեսական ցուցանիշների աղյուսակում:

<b>Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները</b>				
<b>Հողամասի N գծագրի վրա</b>	<b>Առկա նպատակային և գործառնական նշանակությունը</b>	<b>Մակերեսը (հա)</b>	<b>Գլխավոր հատկագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը</b>	<b>Մակերեսը (հա)</b>
<b>Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)</b>				
	<b>Բնակավայրերի հողերից՝</b>		<b>Բնակավայրերի</b>	
ԲԲ-1	հասարակական կառուցապատման	0.26	բնակելի կառուցապատման	0.26
ԲԲ-2	բնակելի կառուցապատման	0.42	բնակելի կառուցապատման (բազմաբնակարան)	0.42
ԲԲ-3	այլ հողեր	0.26	բնակելի կառուցապատման	0.26
ԲԲ-4	այլ հողեր	0.42	հասարակական կառուցապատման	0.42
ԲԲ-5	այլ հողեր	0.42	բնակելի կառուցապատման	0.42
ԲԲ-6	բնակելի կառուցապատման	0.065	հասարակական կառուցապատման	0.065
<b>Ընդհանուր</b>		<b>1.845</b>		
	<b>Գյուղատնտեսական հողեր</b>			
ԳԲ-1	արոտավայր	0.36	հասարակական կառուցապատման	0.36
ԳԲ-2	արոտավայր	0.03	հասարակական կառուցապատման	0.03
ԳԲ-3	արոտավայր	0.27	բնակելի կառուցապատման	0.27
ԳԲ-4	արոտավայր	0.2	բնակելի կառուցապատման	0.2
ԳԲ-5	արոտավայր	0.67	բնակելի կառուցապատման	0.67
<b>Ընդհանուր</b>		<b>1.53</b>		
			<b>Հատուկ պահպանվող հողեր</b>	
ԳՀ-7	խոտհարք	2.92	հանգստի համար նախատեսված	2.92
ԳՀ-8	խոտհարք	1.17	հանգստի համար նախատեսված	1.17
ԳՀ-9	խոտհարք	0.56	հանգստի համար նախատեսված	0.56
ԳՀ-12	խոտհարք	0.16	հանգստի համար նախատեսված	0.16
ԳՀ-13	խոտհարք	0.93	հանգստի համար նախատեսված	0.93
ԳՀ-14	խոտհարք	0.49	հանգստի համար նախատեսված	0.49
ԳՀ-15	խոտհարք	0.4	հանգստի համար նախատեսված	0.4
ԳՀ-16	արոտավայր	1.1	հանգստի համար նախատեսված	1.1

*Ենթադան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

ԳՀ-17	արոտավայր	1.8	հանգստի համար նախատեսված	1.8
ԳՀ-18	խոտհարք	0.51	հանգստի համար նախատեսված	0.51
ԳՀ-19	խոտհարք	0.48	հանգստի համար նախատեսված	0.48
ԳՀ-20	խոտհարք	0.51	հանգստի համար նախատեսված	0.51
ԳՀ-21	խոտհարք	1.04	հանգստի համար նախատեսված	1.04
		<b>12.07</b>		
	<b>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից</b>			
ՄՀ-6	գյուղ. արտադրական	0.18	հանգստի համար նախատեսված	0.18
ՄՀ-10	գյուղ. արտադրական	1	հանգստի համար նախատեսված	1
ՄՀ-11	գյուղ. արտադրական	0.75	հանգստի համար նախատեսված	0.75
<b>Ընդհանուր</b>		<b>1.93</b>		
<b>Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)</b>				
	<b>Գյուղատնտեսական հողերից</b>		<b>Հատուկ պահպանվող հողեր</b>	
ԳՀ-22	խոտհարք	0.51	հանգստի համար նախատեսված	0.51
ԳՀ-23	այլ հողեր	1.69	հանգստի համար նախատեսված	1.69
<b>Ընդհանուր</b>		<b>2.2</b>		
			<b>Բնակավայրերի</b>	
ԳԲ-6	արոտավայր	1.68	բնակելի կառուցապատման	1.68
ԳԲ-7	արոտավայր	0.27	բնակելի կառուցապատման	0.27
<b>Ընդհանուր</b>		<b>1.95</b>		
<b>Չեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)</b>				
	<b>Գյուղատնտեսական հողերից</b>		<b>Բնակավայրերի</b>	
ԳԲ-8	այլ հողեր	0.43	<i>բնակելի կառուցապատման</i>	0.43
ԳԲ-9	այլ հողեր	1.96	<i>բնակելի կառուցապատման</i>	1.96
<b>Ընդհանուր</b>		<b>2.39</b>		

<b>Տեխնիկատնտեսական ցուցանիշներ</b>					
	<b>Ցուցանիշը</b>	<b>Չափման միավորը</b>	<b>Փաստացի</b>	<b>Առաջնահերթ</b>	<b>Չեռանկարային</b>
	1	2	3	4	5
	Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը	հա	4017.09	4017.09	4017.09
	<b>Բնակավայրերի հողեր, որից՝</b>	հա	75.51	77.04	81.38
	բնակելի կառուցապատման	հա	51.76	53.775	58.115
	հասարակական կառուցապատման	հա	1.31	1.925	1.925
	խառը կառուցապատման	հա	0.15	0.15	0.15
	ընդհանուր օգտագործման,	հա	10.38	10.38	10.38
	<i>Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ</i>	հա		0	0
	այլ տարածքներ	հա		0	0
	այլ հողեր	հա	11.91	10.81	10.81

*Ենոքավան համայնքի հողօգտագործման գլխավոր հաշվառման մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

<i>Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, որից՝</i>	<b>հա</b>	<b>5.07</b>	<b>3.14</b>	<b>3.14</b>
արդյունաբերական օբյեկտների	հա		0	0
գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	5.03	3.1	3.1
պահեստարանների	հա	0.04	0.04	0.04
ընդերքի օգտագործման	հա		0	0
<i>Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝</i>	<b>հա</b>	<b>0.39</b>	<b>0.39</b>	<b>0.39</b>
էներգետիկայի	հա	0.04	0.04	0.04
կապի	հա		0	0
տրանսպորտի	հա	0.33	0.33	0.33
կոմունալ ենթակառուցվածքների	հա	0.02	0.02	0.02
<i>Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝</i>	<b>հա</b>	<b>11.14</b>	<b>25.14</b>	<b>27.34</b>
բնապահպանական	հա		0	0
հանգստի համար նախատեսված	հա		14	16.2
պատմական և մշակութային	հա	11.14	11.14	11.14
<i>Հատուկ նշանակության հողեր</i>	<b>հա</b>	<b>13.73</b>	<b>13.73</b>	<b>13.73</b>
<i>Գյուղատնտեսական նշանակության հողեր,</i>	հա	<b>1984.4</b>	<b>1970.8</b>	<b>1964.26</b>
վարելահող	հա	203.66	203.66	203.66
բազմամյա տնկարկներ	հա		0	0
խոտհարքներ	հա	590.2	581.03	580.52
արոտավայր	հա	1074.65	1070.22	1068.27
այլ հողատեսքեր	հա	115.89	115.89	111.81
<i>Անտառային հողեր</i>	հա	<b>1923.15</b>	<b>1923.15</b>	<b>1923.15</b>
Անտառ	հա	<b>1907.91</b>	<b>1907.91</b>	<b>1907.91</b>
թփուտ	հա	<b>15.24</b>	<b>15.24</b>	<b>15.24</b>
խոտհարքներ	հա			
արոտավայր	հա			
այլ հող	հա			
<i>Ջրային հողեր</i>	հա	3.7	3.7	3.7
զետեր	հա	3.67	3.67	3.67
ջրամբարներ	հա	0.02	0.02	0.02
լճեր	հա		0	0
ջրանցքներ	հա		0	0
հիդրոտեխ. և ջրունտ. այլ օբ.		0.01	0.01	0.01

**2.8. Ինժեներական ենթակառուցվածքներ**

Համայնքի կազմում ընդգրկված Իջևան քաղաքի և Գետահովիտ, Գանձաքար, Ենոքավան, Լուսաձոր, Խաշթառակ և Լուսահովիտ համայնքների ինժեներական ենթակառուցվածքի նախագծային բեռնվածությունները կազմելու համար, որպես ելակետային

Ենթադան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում հիմնավորում օգտագործվել են ոլորտները համակարգող կազմակերպությունների տեղեկատվական նյութերը: Դրանք են.

‘ՀՀ Տավուշի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի’, ճարտարապետահատակագծային լուծումների հաշվարկային ցուցանիշները,

‘VEOLIA ՋՈՒՐ’ ընկերության ներկայացրած տվյալները՝ ՀՏՊ փաստաթղթերի ջրամատակարարման և ջրահեռացման մասի մշակման համար,

‘Հայաստանի էլեկտրական ցանցեր’ ՓԲԸ ‘ԱՂՍԵՎ’ մասնաճյուղի տվյալները էլեկտրամատակարարման առկա վիճակի վերաբերյալ,

‘Գազպրոմ Արմենիա’ ՓԲԸ ստացված տվյալները գազաֆիկացման և գազամատակարարման վերաբերյալ,

ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Տավուշի մարզային կենտրոնի տվյալները:

**2.8.1. Ջրամատակարարում**

Համաձայն ‘VEOLA ՋՈՒՐ’ ընկերության տվյալների Իջևանի ջրամատակարարման համակարգում ներկայումս ներգրավված են թվով 40 աղբյուրներ, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 100 լ/վրկ: Վարակազերծումը կատարվում է տարբեր կապտաժներում և ՕԿՋ-ներում: Ջրագծերը կառուցվել են 1960-ից 1980 թվականներին: Դրանցից 24.6 կմ փոխարինվել է 2013-2015 թթ., մնացած հատվածները հիմնանորոգման կարիք ունեն: Իջևանը սնող գծերի երկարությունը 64.4 կմ է, տրամագծերը 90-:-300 մմ, ՕԿՋ-ների ընդհանուր քանակը 16-ն է, ընդհանուր տարողությունը 6600 մ<sup>3</sup>:

Ենթադան գյուղը ջուր վերցնում է տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ Ապագա Ռեզորթից: Ջուրը տեղափոխվում է գյուղի վերին մասում կառուցված օրվա կարգավորիչ ջրամբար: Համակարգն ամբողջովին շարքից դուրս է եկել և այն ամբողջությամբ վերանորոգման կարիք ունի:

Ջրամատակարարման համակարգի պատշաճ աշխատանքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է անցկացնել D=90-75մմ տրամագծով խողովակաշար Ենթադան գյուղից 9կմ դեպի արևելք գտնվող Սառնաջուր գետի հովտում գտնվող աղբյուրներից: Խողովակաշարի ծրագծի երկայնքով առկա մի քանի աղբյուրներին նույնպես կարելի է միանալ, արդյունքում հոսքի արագությունը կբարձրանա մինչև 6- 8լ/վրկ:

Անհրաժեշտ է կառուցել յուրաքանչյուրը 300 խոր. մետր տարողունակությամբ, իրարից 800մ հեռավորության վրա գտնվող երկու ջրամբար (ՕԿՋ) և ջրամաքրման (քլորացման) կայան:

Նախատեսվող ջրամբարները ջուրը պետք է մատակարարեն երկու ճյուղի բաժանված ներքին բաշխիչ ցանցին, որոնք իրար հետ կապված կլինեն և կկարգավորվեն տեղադրված դիտահորերի միջոցով: Բաշխիչ ցանցը պետք է կառուցվի D=25-125մմ պլաստիկ խողովակներով:

ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տեղեկությունով՝ տես աղյուսակում

Բնակավայրեր	Ջրաղբյուրների հզորությունը, լ/վրկ	ՕԿՋ, քանակ և տարողություն, հատ/մ <sup>3</sup>	Ստացվող ջրի օրական ծավալը, մ <sup>3</sup> /օր
Իջևան	120	27 / 6895	10 368

*Ենթադաս համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

Գետահովիտ	7	2 / 650	605
Գանձաքար	6	4 / 145	520
<b>Ենթադաս</b>	<b>2.5</b>	<b>1 / 300</b>	<b>216</b>
Լուսածոր	7	-	605
Խաշթառակ	12.5	-	1080
Լուսահովիտ	1.2	-	104

**2.8.2. Ջրահեռացում (կոյուղի)**

‘VEOLA ՋՈՒՐ’ ընկերության տվյալներին համապատասխան Իջևանի կեղտաջրերի հեռացման (կոյուղի) համակարգում առկա է 20կմ երկարությամբ կոլեկտոր և 48.0կմ կազմող կոյուղու ներքաղաքային ցանց:

Կենցաղային և արտադրական կեղտաջրերը ամբողջ քաղաքի տարածքում հավաքվում են և առանց որևէ մաքրման նետվում են Աղստև գետը, ստեղծելով հակասանիտարական վիճակ: Անհրաժեշտ է կառուցել մայր կոլեկտորներ Աղստև գետի երկու ափերով և նրանց միացնել հավաքող բոլոր ցանցերը: Իջևան քաղաքը ներկայումս կոյուղու մաքրման կայան չունի: Անհրաժեշտ է քաղաքի տարածքից դուրս բենտոնիտ գործարանի մոտ կառուցել մաքրման կայան:

Կոյուղու ցանցը կառուցվել է հիմնականում ջրամատակարարման ցանցի հետ 30-40 տարի առաջ և այժմ անհրաժեշտություն կա կապիտալ վերանորոգելու:

Կոյուղու ցանցը վերանորոգելուց հետո հնարավորություն կստեղծվի վերացնել Աղստև գետի աղտոտվածությունը:

Գյուղական բնակավայրը կեղտաջրերի հեռացման ցանց (կոյուղի) չունի: Կեղտաջրերը կուտակվում են տնամերձ հողամասերում՝ ինքնաշեն հորերում: Նույն սկզբունքով կեղտաջրերի հեռացումը կատարվում է նաև սակավաթիվ հասարակական կառույցներից. գյուղապետարան, հանրակրթական դպրոց, բուժկետ և այլն:

Կոյուղու համակարգը Ենթադասում կառուցված է տեղ-տեղ: Այն ամբողջությամբ վերականգնման կարիք ունի:

Ենթադասի կոյուղու համակարգի պատշաճ աշխատանքն ապահովելու նպատակով Սառնաջուր գետի ափին անհրաժեշտ է կառուցել կեղտաջրերի մաքրման կայան (այն պետք է նախագծել գոյություն ունեցող առևտրային օբյեկտների, վարչական ենթակառուցվածքի և 1600 մարդու կարիքները բավարարելու համար անհրաժեշտ հզորությամբ) : Խորհուրդ է տրվում կիրառել ISBS կենսատեխնոլոգիա, քանի որ այն ապահովում է մոդուլյար համակցված բիոռեակտորի (MCBR) միջոցով արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերի մաքրում, որն աշխատում է առանց պարզարանի և բիոզանգվածի վերաշրջանառության՝ մինչև մաքրման փուլում:

Կեղտաջրերի հավաքման նորմերի համաձայն, բնակավայրի կոյուղու մագիստրալն անհրաժեշտ է կառուցել D=200-250մմ տրամագծով ծալքավոր խողովակներով, իսկ ներքին ցանցը՝ D=150մմ խողովակներով, հավաքիչ հորերի միջև առավելագույն տարածությունը պետք է լինի 40մ:

Այն տեղամասերը, որոնք իրենց բարձրության նիշով պայմանավորված չեն կարող կապվել կոյուղու հիմնական համակարգին, պետք է ունենան մաքրման պարզ սեպտիկ համակարգ: Դրանք պետք է հավաքվեն երկթաբետոնի շրջանակից և ունենան տեղային ջրահեռացման տարածք:

Ենթադրյալ համայնքի հողօգտագործման գլխավոր հատվածի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում

**2.8.3. Հաշվարկային ջրապահանջը ու ջրահեռացման քանակը ըստ ջրամատակարարման նորմերի**

Ջրամատակարարումը նախատեսվում է բնակչության խմելու, տնտեսա-կենցաղային, արտադրական, ինչպես նաև հակահրդեհային կարիքների բավարարման համար: Բնակչության մեկ մարդու միջին օրական ջրապահանջի քանակը ըստ ներկայումս ընդունված նորմերի կազմում է՝ քաղաքների համար 200 լ/օր, գյուղերի համար 150լ/օր: Արտադրական ձեռնարկությունների արտադրանքի տեսականու և քանակի վերաբերյալ տվյալները ներկայացված չեն, ինչպես նաև դրանց հիմնականում կամ մասամբ չգործելու պայմաններում, արտադրական կարիքների համար պահանջվող խմելու որակի ջրի հաշվարկային քանակը ընդունվում է բնակչության հաշվարկային ջրապահանջի 10-30%-ի չափով: Նույն մոտեցումով հաշվարկված է հակահրդեհային կարիքների համար պահանջվող ջրաքանակը: Խմելու, տնտեսական, արտադրական ձեռնարկությունների և հակահրդեհային կարիքների համար պահանջվող միջին օրական ջրաքանակի և կեղտաջրերի հեռացման հաշվարկը բերվում է ստորև աղյուսակում:

N	Ջրասպառողներ	Ջրասպառողներ Հաշվարկային թիվ հազ. մաս	Ջրասպառման նորմ, լ/օր	Ջրապահանջ		Ջրահեռացում	
				մ <sup>3</sup> /օր	լ/վրկ	մ <sup>3</sup> /օր	լ/վրկ
1	2	3	4	5	6	7	8
<b>Ենթադրյալ</b>							
1	Հաշվարկային բնակչություն	1.1	150	165	1.9	157	1.8
2	Արտադրական ձեռնարկ.	-	-	55	0.6	48	0.6
3	Հակահրդեհային կարիքներ	-	-	55	0.6	-	-
4	Ընդամենը	-	-	275	1.81	136	1.57
5	Հնարավոր կորուստ /<10%/	-	-	25	0.30	-	-
<b>Ենթադրյալ ամբողջը</b>		-	-	300	3.5	260	3.0

**2.8.4. Ոռոգում**

Ոռոգման ջրի խնդիրները ըստ համայնքների /‘VEOLA ՋՈՒՐ’ ՀՀ Տավուշի մարզպետարանի, տվյալներ/.

Ենթադրյալ համայնքի վարչական տարածքում ոռոգման նպատակով օգտագործելու ջրաղբյուրներ չկան:

Համայնքներում ոռոգման պահանջը բավարարելու համար հարկավոր է ձեռնարկել նախկինում գործող ոռոգման համակարգի վերականգնում, նորոգելով կամ կառուցել նոր պոմպակայաններ: Էլեկտրաէներգիայի գերաճախսից խուսափելու համար համայնքների միջև կիրառել ոռոգման սեզոնային օրական ժամանակացույց: Իջևան քաղաքը ներկայումս չունի ոռոգման համակարգ: Ոռոգումը իրականացվում է խմելու ջրամատակարարման համակարգից, մասամբ անսխտեմ կառուցված բաց առուներից:

Ոռոգման ռեժիմները ընտրված են հաշվի առնելով խոնավության դեֆիցիտը հողի ակտիվ շերտում, ըստ կլիմայական պայմանների միջին տարվա համար:

Որպես հաշվարկային ընդունված է երաշտային տարվա ոռոգման ռեժիմը՝ վեգետացիոն շրջանում ջրի 50%-ի ապահովության պայմանով:



*Ենթադրյալ համայնքի հողօգտագործման գլխավոր հատվածի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

Ոռոգման ինքնահոս աղբյուր կարող է ծառայել Աղստև գետը, ջրառը պետք է կատարել բարձր գետի նիշերից: Տարածքի որոշ հատվածների ոռոգման համար մասամբ կարող են կառուցվել համապատասխան սահմանափակ հզորությամբ պոմպակայաններ, կիրառելով ոռոգման սեզոնային օրական ժամանակացույց էլեկտրաէներգիայի գերաճախսից խուսափելու համար:

Ոռոգման համակարգ կառուցելու և համապատասխան սարքավորելու համար անհրաժեշտ է կառուցել ջրընդունիչ և բաշխման ցանց:

### **2.8.5. Հեղեղատար կոյուղի**

Ենթադրյալ գյուղի միայն կենտրոնական փողոցն ունի հեղեղաջրերի հեռացման համակարգ: Մյուս տարածքները չունեն ջրահեռացման համակարգ, քանի որ դրա կարիքը չկա, որովհետև գյուղը և մյուս տեղամասերը կառուցված են թեք ռելիեֆի վրա՝ իրարից անջատված փոքր կիրճերով, մինչդեռ ճանապարհներն ապահովված են հեղեղաջրերը հեռացնելու համար նախատեսված փոքր ջրատար առուներով:

Ճանապարհների վերականգնման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է մեծացնել ջրատար առուների տրամագիծը և նախատեսել ջրանցքներ:

### **2.8.6. Էներգամատակարարում**

#### **2.8.6.1. Էլեկտրամատակարարում**

Համապատասխան 'Հայաստանի էլեկտրական ցանցեր' ՓԲԸ տվյալների Իջևան քաղաքի էլեկտրամատակարարման գլխավոր աղբյուր է հանդիսանում 2x25 մվա հզորությամբ 'Աղստև' մասնաճյուղի 110/35/6 կվ լարման ենթակայանը: Ենթակայանի կապը հանրապետության էներգահամակարգի հետ իրականացվում են 110 կվ լարման օդային գծերով:

Համայնքի տարածքում տեղակայված են և գործում են վեց ՓՀԷԿ-եր, դրանք են՝

«Խաչաղբյուր», 1x720+1x600=1320 դրվածքային հզորությամբ,

«Խաչաղբյուր-2», 4x1250=5000 դրվածքային հզորությամբ,

«Քեյ Էնարջի», 2x500=1000 դրվածքային հզորությամբ,

«ԿՈԿ», 3x500=1500 դրվածքային հզորությամբ,

«Ապրես», 1x1250+1x320=1570 դրվածքային հզորությամբ,

«Բսնզառ Էներջի», 1x275=275 դրվածքային հզորությամբ, որոնց գումարային հզորությունը կազմում է 10665 միավոր:

#### **2.8.6.2. Պահանջվող բեռնվածքների որոշում**

Համաձայն ՀՀՇՆ 30-01-2014-ի (Հավելված 6-ի Աղյուսակ 1-ի, կետ 1.1) գյուղական բնակավայրերի բնակչության մեկ մարդու համար էլեկտրաէներգիայի օգտագործման տարեկան խոշորացված ցուցանիշը ներառյալ կոմունալ-կենցաղային, հասարակական բոլոր կազմակերպությունների պահանջներն ու արտաքին լուսավորությունը ընդունվում է՝ 950 կվտ.ժամ, իսկ տարվա օգտագործվող ժամերի քանակը 4100 ժամ:

Էլեկտրաէներգիայի փաստացի սպառման ցուցանիշները բերված են աղյուսակում:

*Ենթավան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

Համայնքի անվանումը և բնակչության թիվը, հազ.մարդ	Մնող ենթակայաններ			Ենթակայաններ 10-6/0.4կՎ ՏԵ,ԼՏԵ			6-10կՎ հաղորդման գծեր				Համայնքի տարածքով անցնող 35-110կՎ	Էլ.էներգիայի տարեկան գումարային ծախսը /կՎտ.ժամ/		Մեկ բաժանորդի փաստացի տարեկան էլ.էներգասպառումը	
							օդային, կմ		մալուխային, կմ			կմ	արտադրակ	կմ	արտադրակ
	անվանում և լարումը, կՎ	հզորությունը	քանակը, հա	տրանսֆ.քա	հզորությունը	Լ, կմ	տեխն. վիճակ	Լ, կմ	տեխն. վիճակ	Համայնքի կոմունալ-արտադրակ					
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Ենթավան < 0.537	Խաչատրյո	35/6	2x1600	9	9	1003	27.345	3	0.025	3		198970	498954	1431.4	31184.6

Հաշվի առնելով գյուղերում գործող, մասամբ գործող կամ ոչ մշտապես գործող, հաճախակի նաև չգործող արտադրական և գյուղարտադրական հզորությունների, արտադրանքի տեսականու և քանակի վերաբերյալ տվյալների բացակայությունը, արտադրական կարիքների համար պահանջվող էլեկտրաէներգիայի քանակն ընդունվում է բնակչության կոմունալ-կենցաղային գումարային պահանջարկի 30%-ի չափով: Արտադրության համար հաշվարկված էլեկտրաէներգիայի պահանջը հետագայում կարող է ճշտվել ոլորտում համապատասխան առաջացող փոփոխությունների:

Ենթավան. Գոյություն ունեցող էլեկտրամատակարարման համակարգը հզորացնելու նպատակով անհրաժեշտ է 35/10 կՎ ենթակայան, որը պետք է տեղադրվի Ենթավանի արևելքում և միացված լինի 35կՎ էլեկտրահաղորդման գծին: Բացի այդ, խորհուրդ է տրվում տեղադրել 500 կՎԱ արևային համակարգ «Ապագա Ռեզորթի» արևմուտքում: Ստորգետնյա մալուխով այն պետք է միացվի նախատեսվող ենթակայանի 10կՎ կողմին:

Բացի այդ, 10կՎ ստորգետնյա մալուխ է անհրաժեշտ անցկացնել՝ նախատեսվող տարածքը նախագծվող ենթակայանին միացնելու համար: Միջինը 2x310կՎԱ հզորությամբ տրանսֆորմատորներ պետք է տեղադրել բոլոր տեղամասների համար՝ ստորգետնյա մալուխին միանալու համար:

0,4 կՎ մալուխներ կպահանջվեն տրանսֆորմատորները սպառողներին միացնելու համար: Դրանց կտրվածքը կհաշվարկվի՝ կախված առանձին սպառողների կողմից պահանջվող հզորությունից գումարած 40% պահուստային հզորություն: Բացի այդ, 0,4կՎ մալուխային գծեր պետք է տեղադրվեն մեկը մյուսին փոխարինելու համար:

Հանգստավայրի տարածքում առկա շինությունները պետք է ապահովվեն ցածր լարման բաշխիչ վահանակներով և պահուստային սարքերով:

Ենթադրված համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում  
Այս էներգահամակարգը պետք է կարողանա բավարարել տեղի բնակչության և այցելուների կողմից սոցիալական և զբոսաշրջային ենթակառուցվածքների համար օգտագործվող՝ հաշվարկված 2,5 ՄՎտ հզորության պահանջարկը:

Նախագծային առաջարկություններ

- Համակարգի արդիականացում, համապատասխանեցում անվտանգության տեխնիկայի պահանջներին:
  - Էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում ապահովելու համար՝ անցում երկտրանսֆորմատորային ենթակայանների:
  - Էլեկտրախնայողություն՝ կորուստները ցանցերում հասցնելով նորմատիվային պահանջներին:
    - Փայտյա հենասյուների փոխարինում նորերով:
    - Կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքներից բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի դուրս բերում ազատ գոտի՝ ապահովելով դրանց անվտանգության գոտու սահմանները:
    - Նոր կառուցապատվող տարածքների համար անհրաժեշտ 10 կվ և 0.4 կվ լարման ցանցի, ինչպես նաև 10/0.4 կվ լարման ցանցային ենթակայանների նախատեսում:

Էլեկտրաէներգիայի նախագծային /հեռանկարային/ պահանջարկի հաշվարկը բերված աղյուսակում:

Համայնքի անվանումը և բնակչության թիվը, հազ.մարդ	Սնող ենթակայան			Ենթակայաններ 10-6/0.4կՎ ՏԵ, ԼՏԵ			6-10կՎ հաղորդման գծեր				Համայնքի տարածքով անցնող 35-110կՎ ՕԳժերի արևմտաստան	Էլ. էներգիայի տարեկան գումարային պահանջը /կՎտ.ժամ/	
							օդային, կմ	մալուխային, կմ	Լ, կմ	տեխն. վիճակը		Լ, կմ	տեխն. վիճակը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Ենթադրված, 0.60 (0.65-0.8)	Խաչաղբյուր	35/6 11/35/6	2x1600 2x25000	9	9	1003	27.345	3	0.0 25	3	-	2188900	548850

### 2.8.6.3. Գազամատակարարում

*Ենոքական համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

‘Գազպրոմ Արմենիա’-ի կողմից գազաֆիկացման և գազամատակարարման վերաբերյալ ստացված տվյալներով համայնքի տարածքներով մայրուղային գազատարները անցնում են՝ մեկը Խաչթառակ-Լուսահովիտ, մյուսը Լուսածոր-Ենոքական-Գետահովիտ համայնքներով, ցանցում տեղադրված են նաև ԳԲԿ-ներ:

Միջին ճնշման գազատար խողովակների տրամաչափը D=1000 մմ:

Գազաբաշխիչ ցանցի բնութագիրը ներկայացված է աղյուսակում:

Բնակավայրեր	ԳԲԿ քանակը, հատ և տեղաբաշխված ուսումն	Տրամագիծը, մմ	Բաժանորդների թիվը և գազաֆիկացման	ԳԿԿ և ՊԳԿԿ քանակը, հատ	Տեղակայման վայրը	Գազասպառում Ը, մ <sup>3</sup> /*
1	2	3	4	5	6	7
Ենոքական	Բետոնիտ ԳԲԿ Աչաջուր գյուղի սևաճամբային	219	75 40	1	գյուղի տարածքում	26 067

/\* ներառյալ կոմունալ-կենցաղային և արտադրական կարիքների համար Ստորև աղյուսակում ներկայացված գազասպառման ցուցանիշներում ներառված են կենցաղ-կոմունալ կարիքների, հասարակական կազմակերպությունների և արտադրական ձեռնարկությունների գումարային գազասպառման ցուցանիշները:

Համայնքներ	Բնակչություն, մարդ	Գազասպառում, մ <sup>3</sup> /*	Բաժանորդների թիվը	Մեկ բաժանորդի միջինացված գազասպառում, մ <sup>3</sup> /*	Մեկ բնակչի միջինացված գազասպառում, մ <sup>3</sup> /*
1	2	3	4	5	6
Ենոքական	537	26 067	75	347.6	49.0

Ենոքականի մեծ մասն ապահովված է գազամատակարարմամբ:

Չնայած բարդ երկրաբանական պայմաններին և կառուցվածքային բարդություններին, առաջարկվում է օդային խողովակաշարը թաղել գետնի տակ:

Կենցաղ-կոմունալ, հասարակական և այլ կազմակերպությունների կարիքների համար գազասպառման պահանջների բաշխումը հաշվարկված ըստ համայնքների բերված է աղյուսակում:

Անվանումը	Կենցաղ-կոմունալ, հասարակական և այլ կազմակերպություններ	Արտադրական ձեռնարկությունների և այլ գազասպառողների, հազ. մ <sup>3</sup>	Ամբողջ գազասպառման պահանջն, հազ. մ <sup>3</sup>
1	2	3	4
Ենոքական	132	70	202

*Ենոքավան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

### **3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

Շրջակա միջավայրի բարելավմանն ու պահպանության միջոցառումները ներկայացված են ստորև:

#### **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ենոքավան բնակավայրը դիտարկվում է համայնքի մյուս բնակավայրերի հետ որպես միասական կլաստերի բաղադրի՝ ներառելով Իջևան քաղաքային համայնքը և Ենոքավան, Գետահովիտ, Գանձաքար, Խաշթառակ, Լուսաձոր, Լուսահովիտ բնակավայրերը:

Նախագծի "Շրջակա միջավայրի պահպանումը" բաժինը մշակված է համայնքի զարգացման ծրագրին համապատասխան:

Տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով են գնահատվել առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Բնակավայրերի զարգացման ծրագրերի մշակման ժամանակ շրջակա միջավայրի տարրերի (ջուր, օդ, հողաբուսական ծածկույթ, կենդանական աշխարհ) պահպանության միջոցառումների մշակումը սերտորեն կապված է տարածքի հատակագծային կազմակերպման խնդիրների հետ:

Բնակավայրի զարգացման ծրագիրը նախատեսվում է կազմել կայուն զարգացման սկզբունքների հիման վրա, որը տնտեսական զարգացման բոլոր նախապատվությունները համադրում է բնական միջավայրի ինքնավերարտադրանակության:

Բնակավայրի տարածքի կարևոր էկոլոգիական հիմնախնդիրները, որոնք նպաստելու են տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը, լուծվելու են տարածքի հատակագծային կառուցվածքի մշակման գործընթացում: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրված է համալիրի առանձին տարրերի՝ օդային, հողային, ջրային ավազանի սանիտարահիգիենիկ վիճակը, նրա բարելավման ինժեներական տեխնոլոգիական և ագրոմելիորատիվ միջոցառումները:

#### **3.1.1. Օդերևութաբանակլիմայական պայմանները**

Այս բաժնի մշակման նպատակն է օդերևութաբանակլիմայական պայմանների գնահատումը, որոնք որոշիչ են բնակչության ապրելակերպի և մթնոլորտի մերձգետնյա շերտում վնասակար նյութերի ցրման բնութագրի վրա ազդեցությունների տեսանկյունից:

Դիտարկվող տարածքի կլիմայական բնութագրերը ներկայացված են «ՀԱՅՊԵՏՏՀԻԴՐՈՄԵՏ» - ի կողմից /3/: Տեղանքի կլիմայական բնութագիրը ներկայացնելու համար օգտագործվել են տարածաշրջանում գործող Իջևան օդերևութաբանական կայանի բազմամյա դիտարկումների տվյալները: Օգտագործելով կլիմայական հաշվարկային մեթոդները, հաշվարկվել են տեղանքի կլիմայական բնութագրերը:

Տարածաշրջանի կլիման բարեխառն է: Ձմեռը տևական և համամատաքար ցուրտ է, թույլ քամիներով, բավական կայուն ու հաստ ձնածածկ շերտի գոյացումով: Ամառը տաք է, չոր:

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 10.8 °C, հունվարինը՝ 0.6 °C, ապրիլինը՝ 10.1 °C, հուլիսինը՝ 21.2 °C, հոկտեմբերինը՝ 11.6 °C: Ջերմաստիճանի ամսական ամպլիտուդան 8.6 °C է: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը

Ենթադրյալ համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում  
 -23°C և դիտվել է դեկտեմբերին, բացարձակ առավելագույնը՝ +37°C է և դիտվել է օգոստոսին:

Հողի մակերևույթի վրա միջին տարեկան ջերմաստիճանը 9°C է: հունվարին՝ -5°C, իսկ հուլիսին՝ 23°C:

Օդի միջին տարեկան ճնշումը 861.0 մբ է, բացարձակ խոնավությունը 8.2մբ է, իսկ հարաբերականը՝ 72%:

Տարվա ընթացքում տեղումների քանակը՝ 563 մմ: Տեղումների առավելագույնը դիտվում է հունիսին՝ 74 մմ, իսկ նվազագույնը դեկտեմբերին՝ 16մմ:

Ձյան տեսքով տեղումների քանակությունը 124 մմ է: Նոյեմբերի 13-ից դիտվում է կայուն ձնածածկույթ, որը վերանում է ապրիլի 5-ին: Ձյան ծածկուցի առավելագույն շերտի բարձրությունը 63 սմ է, նվազագույնը՝ 1 սմ:

**ՔԱՄԻ**

**Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)**

Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անդրորդի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր -	
	Միջին արագությունը, մ/վ													
	Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս- արևմտյան						
2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	

*Ենթազանց համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*  
15 աղյուսակի շարունակություն (արդիականացման ենթակա)

2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	
հունվար	28	2	1	2	54	10	2	1	28	2.8	Հվ	1.2	Հվ
	1.4	1.2	1.4	3.4	3.4	3.1	2.5	1.4					
ապրիլ	44	3	2	2	38	7	2	2	21	2.0			
	1.9	1.8	1.4	1.9	2.0	2.1	2.1	1.9					
հուլիս	39	3	2	2	41	8	3	2	21	1.9			
	2.0	1.9	1.4	1.6	1.2	1.5	1.4	2.1					
հոկտեմբեր	36	3	2	2	46	8	1	2	27	1.8			
	1.6	1.6	1.0	1.5	1.7	2.1	1.8	1.5					

1. Աղյուսակ 16 **Քամու հաշվարկային արագությունը**

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ)օրերի քանակը	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
				25	50	100
1	2	3	4	5	6	7
Իջևան	932.0	1.9	24	25	27	29

*Ենթադրյալ համայնքի հողօգտագործման գլխավոր հատկագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

**3.1. Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը /4, 5/**

Ֆոնային կլիմայական բնութագիրը իր մեջ ընդգրկում է երկու հիմնական ասպեկտ՝

- կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից

- կլիմայի գնահատականը վնասակար նյութերի ցրման պայմանների վրա ազդեցության տեսանկյունից:

Կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից տրված է աղյուսակում:

Աղյուսակ

Կլիմայի գործոնների կենսակլիմայական գնահատականի չափանիշները

Կլիմայի գործոնները	Հարմարավետությունը	Անհարմարավետություն	
		գերտաքացում	սառեցում
1. Օդի ջերմաստիճանը, °C	12-14	24-ից բարձր	30-35, 1.5 մ/վրկ, 25, 2.0 մ/վրկ, -15, 3.5 մ/վրկ քամու դեպքում,
2. Քամու արագությունը, մ/վրկ	0.5-3.0	փոքր 0.5 մեծ 3.0	5-ից մեծ բացասական ջերմաստիճանի դեպքում
3. Հարաբերական խոնավությունը, %	30-70	30-ից փոքր 70-ից բարձր	80-ից բարձր

օդերևութաբանական պարամետրերը վերցված են Հայիդրոմետի տվյալներով և բերված են աղյուսակներ 1.2-1.4-ում:

Օդի միջին ամսական ջերմաստիճանը հունիս-օգոստոս ամիսներին չի գերազանցում 24°C: Գերտաքանցման փաստը համայնքներում չի նկատվում ամբողջ տարվա ընթացքում:

12-14°C գերազանցման դեպքերը նկատվում են հունիս, հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին:

Օդի հարաբերական խոնավության տեսանկյունից փետրվար և հուլիս-օգոստոս ամիսները դիտարկվում են ինչպես հարմարավետ, 80%-ից բարձր խոնավություն չի արձանագրվել: 70%-ից բարձր խոնավություն նկատվում է մարտից-հունիս, և սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում: 3.0 մ/վրկ-ից մեծ քամու արագություն չի դիտարկվում:

Նոյեմբերից-մարտ ժամանակահատվածում օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը դիտարկվում է -15°C-ից բարձր, սակայն նշված ամիսներին քամու արագությունը գտնվում է 2.2-2.6 մ/վրկ-ի սահմաններում:

Աղյուսակ

Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը

Դիտարկումներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
Իջևան քաղաք, հարակից բնակավայրեր	0.6	1.5	4.6	10.1	14.6	17.9	21.2	21	17.0	11.6	6.6	2.6	10.8



Աղյուսակ

Միջին ամսական և տարեկան օդի հարաբերական խոնավությունը (%)

Դիտարկումներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
Իջևան քաղաք, հարակից բնակավայրեր	69	67	72	71	75	73	69	68	74	76	76	71	72

Աղյուսակ

Քամու միջին ամսական և տարեկան ազդեցությունը (մ/վրկ)

Դիտարկումներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
Իջևան քաղաք, հարակից բնակավայրեր	1.6	1.5	1.5	1.5	1.5	1.6	1.5	1.7	1.6	1.4	1.2	1.4	1.5

Ամառվա շոգ ամիսների ժամանակահատվածի անալիզը ցույց է տալիս, որ նշված համայնքներում 1T, 2T և 3T դասերի «շոգ» եղանակները բացառվում են, անհարմարավետության շրջան և ջերմային բեռնվածություն մարդու օրգանիզմի վրա չի առաջանում: Հարմարավետության ժամանակահատվածը ժամը 13-ից մինչև ժամը 21-ը նշված համայնքների համար կազմում է 58-60%, անհարմարավետության ժամանակահատվածը 10-11%:

Անհարմարավետության պայմանների հաշվառման չափանիշը հանդիսանում է անհարմարավետության ժամանակահատվածի տևողությունը:

Տարվա կտրվածքով անհարմարավետության ժամանակահատվածը մեծ է 8% (16.4%) տարեկան ժամանակահատվածից, որը հանգեցնում է նրան, որ նախագծման ժամանակ անհրաժեշտ է նախատեսել մի շարք հատուկ միջոցառումներ:

### **3.2. Կենսաբազմազանություն**

#### **3.2.1. Բուսական աշխարհ /6, 7/**

Տավուշի մարզի տարածքը բուսական պրովինցիաների և շրջանների դասակարգմամբ պատկանում է Կովկասյան պրովինցիային և Իջևանի շրջանին:

Տավուշի մարզը հարուստ է բուսական ծածկույթներով. անտառներ, գյուղատնտեսական հողեր, խաղողի այգիներ, անտառային տեսակներ խառը սաղարթավոր բույսերի տեղում, կաղնու և կաղնու-բոխու անտառներ վրացական կաղնիով:

Մարզի տարածքի բուսականությունը հարուստ է դեղաբույսերով և սննդաբույսերով: Դրանցից ամենուրեք հանդիպող բուսատեսակներից են Բանգի սև (*Hyoscyamus niger*), Եղինջ երկտուն (*Urtica dioica*), Երեքնուկ կարմիր, Երեքնուկ սողացող (*Trifolium hybridum*, *Trifolium repens*), Իշառվույտ դեղատու (*Melilotus officinalis*), Խատուտիկ դեղատու (*Taraxacum officinalis*) և այլն: Մարզում էնդեմիկ բույսեր չկան: Դեղաբույսերից Տավուշի մարզի Նոյեմբերյա նի շրջանում տարածված են Լոշտակ սպիտակ (*Bryonia alba*), Տուղտավարդ Գրոսհեյմի (*Alcea grossheimii*):

*Ենոքավան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

Բնական բուսածածկը իրենից ներկայացնում է սաղարթավոր խառը քսերոֆիլ նոսրանտ առային բուսականություն Paliurus spina-christi Mill., Spiraea crenata L., Amugdalus fenzliana (Fritsch) Lipsky, Pistacia nutica Fisch. Et Mey Celtis glabrata Stev. Ex Planch., Cerasus incana (Pall.) Spach, Pyrus salicifolia Pall. մասնակցությամբ:

Էնդեմիկ տեսակ է Փիփերթազգիներ – Malvaceae, Տուդտավարդ Գչոսիեիմի – Alcea grossheimii բույսերը:

Ստորև բերվող աղյուսակում բերված է յուրաքանչյուր բույսի տեսակի պահպանության կարգավիճակները, ըստ Կարմիր գրքում կատարված կատեգորիաների դասակարգման (կրիտիկական վիճակում գտնվող տեսակ (CR), վտանգված տեսակ (EN), խոցելի տեսակ (VU)): Հաշվի առնելով այն, որ սնկերի պահպանությունը զգալիորեն տարբերվում է բույսերի պահպանությունից, Կարմիր գրքում ընտրվելիք 40 տեսակի սնկերի նկարագրերը ներկայացվել են մակրոսկոպիկ սնկերի համար միջազգայնորեն ընդունված 6 կատեգորիայով՝ անհետացած /EX/, անհետացման եզրին գտնվող /NT/, կրիտիկական վիճակում գտնվող /CR/, վտանգված /EN/, խոցելի /VU/, տվյալներն անբավարար են վիճակը գնահատելու համար /DD/:

Տավուշի մարզի տարածքը բուսական պրովինցիաների և շրջանների դասակարգմամբ պատկանում է Կովկասյան պրովինցիային և Իջևանի շրջանին:

Տավուշի մարզը հարուստ է բուսական ծածկույթներով. անտառներ, գյուղատնտեսական հողեր, խաղողի այգիներ, անտառային տեսակներ խառը սաղարթավոր բույսերի տեղում, կաղնու և կաղնու-բոխու անտառներ վրացական կաղնիով:

Մարզի տարածքի բուսականությունը հարուստ է դեղաբույսերով և սննդաբույսերով: Դրանցից ամենուրեք հանդիպող բուսատեսակներից են Բանգի սև (Hyoscyamus niger), Եղինջ երկտուն (Urtica dioica), Երեքնուկ կարմիր, Երեքնուկ սողացող (Trifolium hybridum, Trifolium repens), Իշառվույտ դեղատու (Meliolotus officinalis), Խատուտիկ դեղատու (Taraxacum officinalis) և այլն: Մարզում էնդեմիկ բույսեր չկան: Դեղաբույսերից Տավուշի մարզի Այրումի շրջանում տարածված են Արջընկույզ սովորական (Datura stramonium), Գետնամորի անտառային (Fragaria vesca), Խնկածաղիկ սովորական (Origanum vulgare), Հոն սովորական (Cornus mas): Բնական բուսածածկը իրենից ներկայացնում է սաղարթավոր խառը քսերոֆիլ նոսրանտ առային բուսականություն Paliurus spina-christi Mill., Spiraea crenata L., Amugdalus fenzliana (Fritsch) Lipsky, Pistacia nutica Fisch. Et Mey Celtis glabrata Stev. Ex Planch., Cerasus incana (Pall.) Spach, Pyrus salicifolia Pall. մասնակցությամբ:

Պարիլյակ բարձր Smilax excels L.: Կատեգորիա՝ EN B 1 ab (i,ii,iii,v)+2 ab (i,ii,iii,v): Վտանգված տեսակ՝ հայտնի է մեկ ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. Կմ-ից պակաս է: Աճում է անտառային գոտում, որը ենթառկվում է մարդածին զգալի ճնշման: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 4 կարգավիճակով՝ անորոշ տեսակ:

Արջատխլենի-Corylus colurna L.: Կատեգորիա՝ EN B 1 ab (iii)+2 ab (iii): Վտանգված տեսակ է՝ տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. Կմ-ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

Գետնասող կովկասյան-Asperula taurine L. Subsp: Կատեգորիա՝ EN B 1 ab (iii)+2 ab (iii): Վտանգված տեսակ: Միակ պոպուլյացիան կազմված է միմյանցից 11 կմ հեռացած լոկալիտետներից: Տարածման և բնակության շրջանները՝ քիչ քան 10 քառ. Կմ: Տեսակի

Ենթադան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում տարածման և բնակության շրջաններին սպառնում է նվազում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազում է մինչև EN:

Ստորև բերվող աղյուսակում բերված է յուրաքանչյուր բույսի տեսակի պահպանության կարգավիճակները, ըստ Կարմիր գրքում կատարված կատեգորիաների դասակարգման (կրիտիկական վիճակում գտնվող տեսակ (CR), վտանգված տեսակ (EN), խոցելի տեսակ (VU)): Հաշվի առնելով այն, որ սնկերի պահպանությունը զգալիորեն տարբերվում է բույսերի պահպանությունից, Կարմիր գրքում ընտրվելիք 40 տեսակի սնկերի նկարագրերը ներկայացվել են մակրոսկոպիկ սնկերի համար միջազգայնորեն ընդունված 6 կատեգորիայով՝ անհետացած /EX/, անհետացման եզրին գտնվող /NT/, կրիտիկական վիճակում գտնվող /CR/, վտանգված /EN/, խոցելի /VU/, տվյալներն անբավարար են վիճակը գնահատելու համար /DD/:

Պահպանության կարիք ունեցող ֆլորայի տեսակները

Հ/հ	Բույսերի անվանումը		Պահպանության կարգավիճակները ըստ Կարմիր գրքի
	Հայերեն	Լատիներեն	
Կենսազգիներ – Taxaceae			
1	Կենի հատապտղային	Taxus baccata L.	VU
Շքանարգիզազգիներ – Amaryllidaceae			
2	Ձնծաղիկ Արտյուշենկոյի	Galanthus artjuschenkoae Gabrielian	VU
Հովանոցավորներ – Apiaceae			
3	Եզնակոխ Կոզո-Պոլյանսկու	Bupleurum koso-poljanskyi Grossh.	VU
4	Մարգացնծու կովկասյան	Peucedanum caucasicum (M. Bieb.) K. Koch (=Cervaria caucasica (M. Bieb.) M. Pimen.)	VU
Թաղաղուազգիներ – Asphodelaceae			
5	Ոզնազլխիկ Տուրնեֆորի	Echinops tournefortii Trautv.	EN
6	Պսեֆելուս դեբեդի	Psephellus debedicus (Gabrielian) Gabrielian	EN
7	Սինձ պալարակիր	Tragopogon tuberosus K. Koch	VU
Ծխաբույսազգիներ – Fumariaceae			
8	Անձխոտ Մարշալի	Corydalis marschalliana Pers.	EN
Հակինթազգիներ – Hyacinthaceae			
9	Պապլոր դժգույն	Muscari palens (M.Bieb.) Fisch.	EN

Ենթազանգի համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում

Շուշանազգիներ – Liliaceae			
10	Արքայածաղիկ բլրակային	Fritillaria collina Adam (=F. lutea auct. non Mill.)	EN
Խղիթազգիներ – Orchidaceae			
11	Երկտերևի ձվածն	Listera ovata (L.) R.Br.	CR
Գնարբուկազգիներ – Primulaceae			
12	Արջտակ գարնանային	Cyclamen vernal Sweet	VU
13	Վարդակակաչ գորտնուկային	Anemone ranunculoides L.	EN
Սնկեր			
14	Աստերոֆորա անձրևային, Կարգ Tricholomatales, ընտանիք, Tricholomataceae	Asterophora lycoperdoides (Bull.) Ditmar : Gray Հոմանիշ՝ Nyctalis asterophora Fr.	DD
15	Կարգ Boletales, ընտանիք Boletaceae	Boletus edulis Bull.:Fr. Սպիտակ սունկ, թնջուկ	VU
16	Կլավարիադելֆուս վարսանդավոր, Կարգ Aphyllophorales, ընտանիք Clavariaceae	Clavariadelphus pistillaris (Fr. : Fr.) Donk Հոմանիշ՝ Clavaria pistillaris Fr.	EN
17	Հապալոպիլուս զաֆրանա- դեղին (կարմրադեղին), Կարգ Aphyllophorales, ընտանիք Poriaceae	Hapalopilus croceus (Scop.: Fr.) Donk Հոմանիշ՝ Auratioporus croceus (Pers.: Fr.) Murrill	CR
18	Ոզնասունկ մուստանման, մարջանանման, Կարգ Hericiales, ընտանիք Hericiaceae	Hericium coralloides (Scop.: Fr.) Pers. Հոմանիշ՝ Hericium clathroides (Pallas.:Fr.)Pers	VU
19	Մերիպիլուս հսկա, Կարգ Aphyllophorales, ընտանիք Albatrellaceae	Meripilus giganteus (Pers.: Fr.) P. Karst. Հոմանիշ՝ Polypilus giganteus (Pers.:Fr.)Donk	EN
20	Մուտինուս շնային, Կարգ Phallales, ընտանիք Phallaceae	Mutinus caninus (Huds.: Pers.) Fr. Հոմանիշ՝ Phallus caninus (Huds.:Pers) Fr.	EN

*Ենթազանց համայնքի հողագործման գլխավոր հատվածի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

21	Ֆիլոտոպսիս մնավորվող, Կարգ Tricholomatales, ընտանիք Pleurotaceae	Phyllotopsis nidulans (Pers.: Fr.) Singer Հոմանիշ՝ Crepidotus nidulans (Fr.) Quel.	EN
22	Ռոդոտուս թաթաձև, Կարգ Tricholomatales, ընտանիք Tricholomataceae	Rhodotus palmatus (Bull.: Fr.) Maire Հոմանիշ՝ Crepidotus palmatus (Fr.) Gill.	EN
23	Գետնասունկ ամառային, ուտելի Կարգ Tuberales, ընտանիք Tuberales	Tuber aestivum Vitt.	DD

Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները իրագործվում են արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների սահմաններում և նոր տարածքներ գրեթե չեն ներառում:

Ծառաթփային բուսականության վրա բացասական ազդեցության ի սկզբանե կանխարգելման և պահպանության նկատառումներից ելնելով նախագծման ընթացքում ջրատարների ուղեգծերը ընտրվել են այնպես, որ նրանք չհատվեն ծառերի հետ:

Նախատեսվող միջոցառումները հաշվի են արնում ՀՀ կառավարության 2014 թ. հուլիսի 31-ի N 781-Ն որոշման պահանջները:

**3.2.2. Կենդանական աշխարհ /7, 8/**

Ամենուր հանդիպող ողնաշարավոր կենդանատեսակներից են լճագորտը, ժայռային մողեսը, սովորական լորտուն, տնային ճնճղուկը, մոխրագույն ագռավը, կաչաղակը, սովորական և հասարակական դաշտամուկը, մոխրագույն առնետը, գայլը, քարակզաքիսը, աքիսը, իսկ անող նաշարավորներից՝ անձրևաորդը, ծովախեցգետինը, մրջյունը, մեղուն, ծղրիղը, ճիւղը, մորեխը, փայտոջիլը, կապտաթիթեռը, կաղամբաթիթեռը, մոծակը, սենյակային և դաշտային ճանճերը: Որսաարդյունագործական կենդանատեսակներից մարզում տարածված են նապաստակը: Էնդեմիկ տեսակներ բացակայում են:

Տավուշի մարզում ողնաշարավորներից հատկապես տարածված են գորշ արջը, սկյուռը, աջնվացեղ եղջերուն, եվրոպական այծայմը, շնագայլը, եղեգնակատու, անտառային կատուն:

Ստորև բերվող աղյուսակում բերված է յուրաքանչյուր տեսակի պահպանության կարգավիճակները, ըստ Կարմիր գրքում կատարված կատեգորիաների դասակարգման (անհետացած տեսակ (EX), տարածաշրջանում անհետացած տեսակ (RE), կրիտիկական վիճակում գտնվող տեսակ (CR), վտանգված տեսակ (EN), խոցելի տեսակ (VU), տվյալների անբավարարություն (DD)):

Տավուշի մարզում ողնաշարավորներից հատկապես տարածված են նապաստակը, գյուրզան, սկյուռը, շնագայլը:

Ստորև բերվող աղյուսակում բերված է յուրաքանչյուր տեսակի պահպանության կարգավիճակները, ըստ Կարմիր գրքում կատարված կատեգորիաների դասակարգման

Ենթադան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում (անհետացած տեսակ (EX), տարածաշրջանում անհետացած տեսակ (RE), կրիտիկական վիճակում գտնվող տեսակ (CR), վտանգված տեսակ (EN), խոցելի տեսակ (VU), տվյալների անբավարարություն (DD)):

Պահպանության կարիք ունեցող ֆաունայի տեսակները

Հ/հ	Կենդանիների անվանումը		Պահպանության կարգավիճակները ըստ Կարմիր գրքի
	Հայերեն	Լատիներեն	
Միջատներ – Insecta			
1	Նմանաձև ճպուռ	Onychogomphus assimilis fulvipennis (Schneider, 1845)	VU
2	Յացենկո-Խմելևսկու առվակային գնայուկ	Duvalius yatsenkokhmelevskii (Khnzorian, 1960)	CR
3	Զարդավոր չրխկան	Aeoloides figuratus (Germar, 1844)	VU
4	Հայկական ծաղկեփոշեկեր	Isomira armena Khnzorian, 1976	EN
5	Ալկոն կապտաթիթեռ	Maculineaalcon monticola (Staudinger, 1901)	VU
ՍՈՂՈՒՆՆԵՐ - REPTILIA			
6	Միջերկրածովային կրիա	Testudo graeca (Linnaeus, 1758)	VU
7	Դալի մողես	Darevskia dahli (Darevsky, 1957)	EN
8	Կովկասյան կատված	Telescopus fallax (Fleschmann, 1831)	VU
ԹՈՉՈՒՆՆԵՐ - AVES			
9	Գանանգ (Մորուքավոր անգ)	Gypaetus barbatus Linnaeus, 1758	VU
10	Գիշանգ	Neophron percnopterus Linnaeus, 1758	EN
11	Սպիտակագլուխ անգ	Gyps fulvus (Hablizl, 1783)	VU
12	Օձակեր արծիվ	Circaetus gallicus (J. F. Gmelin, 1788)	VU
13	Եվրոպական ճնճղաճուռակ	Accipiter brevipes (Severtzov, 1850)	VU
14	Ցախաքլորավորս	Accipiter gentilis (Linnaeus, 1758)	VU
15	Փոքր ենթարծիվ	Aquila pomarina, C. L. Brehm, 1831	VU
16	Քարարծիվ	Aquila chrysaetos (Linnaeus, 1758)	VU
17	Գաճաճ արծիվ	Hieraetus pennatus (J. F. Gmelin, 1788)	VU

*Ենթադաս համայնքի հոդօգրագործման գլխավոր հատկագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

18	Սապսան	Falco peregrinus Tunstall, 1771	VU
19	Գեղանի կռունկ	Arthropoides virgo Linneus, 1758	VU
20	Սև փայտփոր	Dryocopus martius (Linnaeus, 1758)	VU
21	Կիսասպիտակավիզ ճանճորս	Ficedula semitorquata (Homeyer, 1885)	DD
<b>ԿԱԹՆԱՍՈՒՆՆԵՐ, MAMMALS</b>			
22	Սովորական երկարաթև չղջիկ	Miniopterus schreibersi Kuhl, 1819	VU
23	Ծալքաշուրթ լայնականջ չղջիկ	Tadarida teniotis Rafinesque, 1819	DD
24	Գորշ արջ	Ursus arctos Linnaeus, 1758	VU
25	Անտառակատու	Felis silvestris Schreber, 1777	VU

Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ջրատարերի կառուցման ընթացքում պայթեցման և ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս: Բացի այդ, պայթեցումների ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով դրանք կիրականացվեն փոքր հզորության լիցքերով:

Ընդհանուր առմամբ, համակարգերի վերակառուցման աշխատանքների ազդեցությունները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

**3.3. Բնակլիմայական և սանիտարա-հիգիենիկ հատկագծային սահմանափակումների համակարգը /2/**

Նախագծում սանիտարապաշտպանիչ գոտիների և սանիտարական խզման (разрыв) չափերը ընդունված են համաձայն СНиП 245-71 «Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմաներ»: Հաշվի է առնված նաև ՀՀ առողջապահության նախարարության ՊՀՀՏ հջևանի տարածքային կենտրոնի համաձայնությունը:

1. Էլեկտրաէներգակայանների ՍՊԳ-ի չափերը (նկատի ունենալով ակուստիկ հաշվարկների և գործիքային չափումների բացակայությունը) ընդունված է դրանց տիպից, տրվող լարումից, տրանսֆորմատորների հզորությունից և քանակից ելնելով, համաձայն ՍՆ և Կ II-12-77 «Պահպանություն աղմուկից և ԳՕՍՍ «Ուժային, յուղային տրանսֆորմատորներ, թույլատրելի աղմուկի նորմաներ և աղմուկային փորձարկումների մեթոդներ»:

*Ենթադրյալ համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

ՍՊԳ-ների չափը ընդունված է 20 մ:

2. Էլեկտրահաղորդման գծերի (ԷՀԳ) պաշտպանական գոտիների չափերը ընդունված են համաձայն «Մինչև 1000Վ էլեկտրական ցանցերի պահպանման կանոններ»-ի հիման վրա՝ -35 կՎ -15 մ\*;  
- 110 կՎ -20 մ\*,  
- 6(10) կՎ - 10 մ\*, \* - գետնի վրա եզրային լարերի պրոեկցիայի հեռավորությունը:

3. Մայրուղային խողովակաշարերից սանիտարական խզման չափերը ընդունված են խողովակների տրամագծից, ճնշումից և դասից կախված, համաձայն ՄՆ և Կ 2.05.06-85 «Մայրուղային խողովակաշարեր»:

4. Խմելու-տնտեսական ջրառների ՍՊԳ-ի չափերը ընդունված են համաձայն Սն և Կ 2.04.02-84 «Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»:

5. Գերեզմանատների համար ՍՊԳ-ն ընդունված է 300 մ:

6. Աղբահավաք վայրերի համար ՍՊԳ-ն ընդունված է 300 մ: Աղբահավաք վայրը գտնվում է գյուղերի մոտակա ձորափում:

7. Կենսաբանական մաքրման կայանի ՍՊԳ-ն ընդունված է 300մ: ՄՆ և Կ 2.04.03-85 Կոյուղի: Արտաքին ցանցեր և կառուցվածքներ:

8. Օրգանական ծագման թափոնների վարակազերծման և թաղման վայրերի ՍՊԳ-ն ընդունված է 300մ:

### **3.4. Բնական միջավայրի գնահատումն ըստ տեխնաձին ազդեցության ընկալունակության**

Տարածքի տնտեսական օգտագործման ռեժիմը զգալիորեն կախված է բնական միջավայրի ինքնամաքրման պոտենցիալից, որը ներառում է մթնոլորտի օդերևութաբանական պոտենցիալը (ՄՕՊ), ջրավազանների ինքնամաքրման պոտենցիալը (ՋԻՊ) և հողերի ինքնամաքրման պոտենցիալը (ՀԻՊ):

Մթնոլորտի օդերևութաբանական պոտենցիալը (ՄՕՊ), որը բնորոշում է դիտարկվող շրջանի մթնոլորտային օդի ինքնամաքրման ունակությունը կազմել է 1.17, որի դեպքում խառնուրդների ցրման պայմանները գնահատվում են որպես ոչ այնքան բարենպաստ:

Ջրային օբյեկտների ինքնամաքրման պոտենցիալը (ՋԻՊ) գնահատվում է ամռանը ջերմաստիճանային ռեժիմի անալիզի և ջրահոսքի հիդրոլոգիական բնութագրի հիման վրա: ՋԻՊ-ը գնահատվել է Աղստև գետի համար: Գետի ինքնամաքրման ջերմաստիճանային ցուցանիշի և գետի ջրի 8.22 մ<sup>3</sup>/վրկ բազամայա միջին ծախսի դեպքում ՋԻՊ-ը գնահատվում է որպես ցածր:

Հողի ինքնամաքրման պոտենցիալը (ՀԻՊ) որոշվում է ըստ հողերի հիգիենիկ ակտիվության գործակցի, բուսական ծածկի տիպի և օրգանական նյութի քայքայման արագության: Դիտարկվող տարածքի համար հողի ինքնամաքրման ունակությունը գնահատվում է որպես բարձր:

Մթնոլորտի օդերևութաբանական պոտենցիալը (ՄՕՊ) բնորոշվում է մթնոլորտում աղտոտող նյութերի կուտակման կամ ցրման գերակայությունը և որոշվել է ըստ հետևյալ բանաձևի՝

$$\text{ՄՕՊ} = P_w + P_d / P_w + P_p$$

$P_w$  – քամու արագությունների կրկնողությունը (0-1,0մ/վրկ), %

$P_d$  – մառախուղով օրերի կրկնողությունը, %

$P_m$  – 0,5մ տեղումներով օրերի կրկնողությունը, %

$P_p$  – 6մ/վրկ և ավելի քամու արագությունների կրկնողությունը, %



*Ենթադրյալ համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

Արժեքներն ընդունվում են համաձայն/3/:

$P_w = 58.3\%$ ,  $P_d = 9.8\%$ ,  $P_m = 33.7\%$ ,  $P_p = 24.4\%$

ՄՕՊ-ի ստացված արժեքի դեպքում խառնուրդների ցրման համար պայմանները գնահատվում են որպես ոչ այնքան բարենպաստ, քանի որ մթնոլորտի ինքնամաքրմանը նպաստող գործընթացների կրկնելիությունը ցածր է, քան վնասակար նյութերի կուտակմանը նպաստող գործընթացների կրկնելիությունը:

Ջրային օբյեկտների ինքնամաքրման պոտենցիալը /ՋԻՊ/ որոշվում է ըստ ջրահոսքի ինքնամաքրման ջերմաստիճանային ցուցանիշի մեծության:

որտեղ  $N$  – տարվա ընթացքում  $16^\circ\text{C}$  և ավելի ջրի ջերմաստիճանով օրերի թիվն է:  $N=56$  եթե  $K=0.15$  և ջրի միջին բազմամյա ծախսը  $8.22\text{մ}^3/\text{վրկ}$ , ապա ՋԻՊ-ը գնահատվում է որպես ցածր, իսկ խառնուրդների նոսրացման համար պայմանները անբավարար:

Հողերի ինքնամաքրման պոտենցիալը /ՀԻՊ/ մեթոդիկային համապատասխան գնահատվել է տվյալ շրջանի համար բնորոշ բնական բուսական համակեցությունների տիպի և տվյալ տիպի համար բնորոշ թափված տերևների քայքայման ամենամյա ժամանակի:

Թափվածքներում ասիմիլացված էներգիան –  $784.5$  կալ-սմ<sup>2</sup>/տարի:

Տարվա ընթացքում թափվածքի քանակը –  $210$  գ/հա:

Թափվածքի էներգիայի հարաբերական քանակը –  $21.2$ :

Վերգետնյա թափվածքը –  $120$  գ/հա տարվա ընթացքում:

Տապաստի պաշարը –  $100$  գ/հա տարվա ընթացքում:

Հողի մեջ օրգանական նյութերի քայքայման ժամանակը –  $0.7$  տարի:

Համաձայն մեթոդակարգի, եթե թափվածքի ասիմիլացված էներգիան մեծ է  $300$  կալ-սմ<sup>2</sup>/տարի և նյութերի քայքայման ժամանակը (տարի) տարածվում է  $0.5$ - $2$ -ի սահմաններում, ապա հողերի ինքնամաքրման պոտենցիալը գնահատվում է բարձր:

### **3.5. Տնտեսության ներկա իրավիճակի բնութագիրը և զարգացման հեռանկարը**

Տարածքում առկա բնական, բուժական, առողջապահական, հանքահումքային ռեսուրսները՝ ռեսուրսների հիմնական տեսակներն են՝ անտառներ, ջրեր, հողեր, գեղատեսիլ և տեսարժան վայրեր տուրիզմի զարգացման համար:

Տարածքում առկա են մարդկային ռեսուրսները:

Ներկա իրավիճակում բնակչության հիմնական զբաղմունքն է՝ բուսաբուծությունը, այգեգործությունը, անասնապահությունը, հացահատիկա-մշակություն, խաղողագործություն, հողագործություն, անտառատնտեսություն, զբոսաշրջություն:

### **3.6. Բնակավայրի շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցությունը**

Շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումը արդյունաբերական ձեռնարկությունների, բնակկոմունալ սեկտորի ջեռուցում և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումը արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը,

*Ենթադաս համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

• անտառի անկանոն օգտագործումը, որը համայնքի շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության բնական գործոնների թվին են դասվում սողանքները, սելավները և հողերի էրոզիան:

### **3.6.1. Մթնոլորտային օդը**

Ներկայումս համայնքների մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումներով: Գործող արդյունաբերական ձեռնարկությունները բացակայում են: Ֆոնային աղտոտվածությունը աղտոտող բոլոր նյութերով զգալիորեն ցածր է սահմանային թյուլատրելի կոնցենտրացիաներից (ՍԹԿ):

Ջեռուցման ժամանակահատվածում վնասակար արտանետումների հաշվարկները կատարված են գազի և փայտի ծախսից ելնելով և բերված են աղյուսակում.

Համայնքի տարածքում գազով ջեռուցում իրականացվում է՝ – գյուղերը - 10%, Իջևան - 50%

• Փայտով ջեռուցում – գյուղերը - 90%, Իջևան - 50%:

Վնասակար արտանետումների հաշվարկները կատարվել են համաձայն մեթոդակարգի և բերված են աղյուսակում/9-12/:

Աղյուսակ

Վնասակար արտանետումների քանակները

Անվանումը	Վտանգավորության դասը	Արտանետումները, տ/տարի
<b>I Ջեռուցում</b>		
1. Կախյալ մասնիկներ	3	65.54
2. Ծծմբային անհիդրիդ	3	3.94
3. Ածխածնի օքսիդ	4	54.47
4. Ազոտի օքսիդներ	2	21.14
Ընդամենը		145.09
<b>II Ավտոտրանսպորտ*</b>		
1. Ածխածնի օքսիդ	4	31265.95
2. Ազոտի օքսիդներ	2	194.96
3. Ածխաջրածիններ	4	336.81
Ընդամենը		31797.721
<b>III Արդյունաբերություն</b>		
1. Անօրգանական փոշի	3	0.58
2. Փայտա փոշի	3	0.5
3. Ածխածնի օքսիդ	4	4.39
4. Ազոտի օքսիդներ	2	0.44
5. Էտիլ սպիրտ	4	13.4
Ընդամենը		19.31
Հանրագումար		31962.12

*Ենթադաս համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

\* Մ-4 պետական ավտոմայրուղով անցնող ավտոտրանսպորտի արտանետումների հաշվառմամբ:

Մթնոլորտ վնասակար արտանետումների մասին տեղեկությունները և տնտեսությանը հասցված վնասի արժեքները բերված են աղյուսակում /13/:

Մթնոլորտ վնասակար արտանետումները ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից կազմում է 31962.12 տ/տարի:

Մթնոլորտ վնասակար արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կազմում է 526.9 մլն. դրամ տարի:

Աղյուսակ

Մթնոլորտ արտանետումների տարեկան քանակները և հասցված տնտեսական վնասները

Անվանումը	Արտանետումների քանակը, տ/տարի ներդրման %	Տնտեսությանը հասցված տնտեսական վնասը, հազ. դրամ/տարի
1	2	3
1. Բնակարանների ջեռուցում	<u>145.09</u> 0.45	6207.280
2. Ավտոտրանսպորտ	<u>31797.72</u> 99.48	520700.700
3. Արդյունաբերություն	<u>19.31</u> 0.07	68.400
Ընդամենը՝	<u>31962.12</u> 100	526976.380

### 3.6.2. Տարածքի համալիր գնահատականը

Տարածքի համալիր գնահատականը տրված է /2/-ի հիման վրա: Տարածքի համալիր գնահատականը տրված է տեղանքի կլիմայական պայմանների, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի, արդյունաբերական պոտենցիալի, բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ:

Օդային ավազանի գնահատականը բերված է աղյուսակում:

Աղյուսակ

Օդային ավազանի գնահատականը անտրոպոգեն ազդեցությամբ, հիգիենիկ իրավիճակով և տարածքի համալիր գնահատականը

Անվանումը	Գնահատականը			Աղտոտման մակերեսը բնակելի գոտում, հա
	անտրոպոգեն ազդեցությամբ	հիգիենիկ իրավիճակով	տարածքի համալիր գնահատականը	
1	2	3	4	5
Բնակավայրի տարածքը	թույլ ազդեցության գոտի	վտանգ չի հարուցում	բարենպաստ	75.51


Անտրոպոգեն թույլ ազդեցության գոտին կազմում է 4017.09 հա: Հիգիենիկ իրավիճակով տարածքը վտանգ չի ներկայացնում: Տարածքի համալիր գնահատականը՝ բարենպաստ:

### 3.7. Մակերևութային ջրահոսքեր

Նշված համայնքների տարածքով անցնող գետը Աղստևն է:

Գետը տիպիկ լեռնային է: Գետի միջին թեքությունը – 0.0098, արագությունը՝ 0.9-1.0մ/վրկ: Գետի հատակը քարքարոտ է: Ըդհանուր երկարությունը Հայաստանի տարածքով – 121 կմ:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք Հյուսիսային ԶԿՏ-ը ներառում է Դեբեդի և Աղստևի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում կոմունալկենցաղային և հանքարդյունաբերական կեղտաջրերը: 2022 թվականին Հյուսիսային ԶԿՏում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 22 դիտակետում, որոնցից 14%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 50%-ում՝ 3-րդ դաս, 22%-ում՝ 4-րդ դաս և 14%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2022 թվականին ջրի որակի փոփոխություն է նկատվել Փամբակ գետի՝ Խնկոյան գյուղից վերև դիտակետում, որտեղ ջրի որակը 2-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Փամբակ գետի՝ Սպիտակ քաղաքից ներքև դիտակետում, որտեղ ջրի որակը 3-րդ դասից դարձել է 4-րդ դաս, Դեբեդ գետի՝ Մարց գետի թափման կետից ներքև դիտակետում, որտեղ ջրի որակը 5-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Տաշիր գետի՝ Սարատովկա գյուղից ներքև դիտակետում, որտեղ ջրի որակը 3-րդ դասից դարձել է 2-րդ դաս, Գարգառ գետի՝ գետաբերանի դիտակետում, որտեղ ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Աղստև գետի՝ Իջևան քաղաքից վերև դիտակետում, որտեղ ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս և Գետիկ գետի՝ Վահան գյուղից վերև



դիտակետում, որտեղ ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Այստեղ աղտոտված գետերից են Փամբակը, Դեբեդը, Ախթալան, Շնողը: Ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 2 դիտակետում, որից մեկում՝ նաև որակի մոնիթորինգ: 2021 թվականին այս ջրավազանից ջրօգտագործումը կազմել է 22.86 մլն մ3 , որից 54.6%-ը բաժին է ընկնում մակերևութային, 45.4%-ը՝ ստորերկրյա ջրերին: Զրոգտագործումն իրականացվել է հիմնականում ոռոգման (38%), խմելու (35%) և արտադրական (27%) և այլ նպատակներով:

Մակերևութային ջրեր Հիդրոլոգիական դիտարկումներ Հյուսիսային ԶԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 21 դիտակետում: Հինգ հիդրոլոգիական դիտակետերի ջրի միջին տարեկան ելքերի վերաբերյալ տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են աղյուսակում:

Ենթադան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում

Գետ	Դիտակետ	Միջին տարեկան էլքեր, մ <sup>3</sup> /վ		
		փաստացի	նորմա	%
Փամբակ	Վանաձոր	2.97	5.93	50.1
Դերեղ	Այրում	28.6	33.5	85.4
Չորագետ	Գարգառ	14.1	15.4	91.6
Աղստև	Իջևան	7.24	9.83	73.7
Գետիկ	Գոշ	2.45	3.56	68.8

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև և ներքև, Իջևան քաղաքից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Դիլիջան քաղաքից վերև՝ պայմանավորված երկաթով և կախության չոր նյութերով, Դիլիջան քաղաքից ներքև՝ նաև նիտրիտ իոնով, Իջևան քաղաքից վերև՝ պայմանավորված ամոնիում իոնով, մանգանով, երկաթով, բարիումով և կախության չոր նյութերով, Իջևան քաղաքից ներքև՝ ամոնիում և

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի բնութագրիչ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Հյուսիսային	Աղստև	1.2 կմ ք. Դիլիջանից վերև (15)	Երկաթ, ԿՉՆ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Դիլիջանից ներքև (16)	Նիտրիտ իոն, երկաթ, ԿՉՆ	3-րդ	3-րդ
		2 կմ ք. Իջևանից վերև (17)	Ամոնիում իոն, մանգան, երկաթ, բարիում, ԿՉՆ	3-րդ	3-րդ
		2 կմ ք. Իջևանից ներքև (18)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, երկաթ, բարիում, ընդհանուր ֆոսֆոր, ԿՉՆ	3-րդ	3-րդ

նիտրիտ իոններով, երկաթով, բարիումով, ընդհանուր ֆոսֆորով և կախության չոր նյութերով:<sup>5</sup>

Աղստև գետի մեջ նշված համայնքների տարածքում թափվում են տնտեսակենցաղային հոսքաջրերի մի մասը, ինչը հանդիսանում է գետի աղտոտվածության հիմնական աղբյուրը:

Վերջին տարիներին Աղստև գետի կիրճում զանազան սպասարկման օբյեկտների շահագործման արդյունքում, զգալիորեն ավելացել է գետի աղտոտվածությունը:

Կեղտաջրերով Աղստև գետ թափվող աղտոտող նյութերի քանակը բերված է աղյուսակում:

Աղյուսակ

Կեղտաջրերի ծավալը, հազ.խոր.մ	ԹԿՊ <sub>10</sub> , տ	Կախյալ նյութեր, տ	Նավթամթերք, տ	Ազոտ ամոնիակային, տ	Քլորիդներ, տ	Սուլֆատներ, տ	Պղինձ, կգ	Ցինկ, կգ

<sup>5</sup> <http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/annual-2022-1.pdf>

*Ենթադաս համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

860.2*	154.8*	94.6*	0.86	15.5	38.7	34.4	0.012	0.086
--------	--------	-------	------	------	------	------	-------	-------

\*- աղտոտող նյութերի քանակը գերազանցում է սահմանային թույլատրելի սրտահոսքը /ՍԹԱ/:

Աղստև գետ թափվող հոսքաջրերի հետևանքով շրջակա ջրային ավազանին հասցված տնտեսական վնասը ներկա դրությամբ գնահատվում է տարեկան 3.69 մլն. դրամ:

Աղստև գետի համար ստացված ինքնամաքման  $K=0.15$  ցուցանիշի դեպքում, խառնուրդների նոսրացման համար պայմանները գնահատվում են որպես անբավարար, իսկ գետի ինքնամաքման պոտենցիալը՝ ցածր:

Աղստև գետի աղտոտվածության ցուցանիշները բերված են աղյուսակում:

Աղյուսակ<sup>6</sup>

ՍԹԿ-ն գերազանցող աղտոտիչ նյութերի անվանումը	Վնասակարության ցուցանիշը	Միջին տարեկան կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից $d_i$
Ամոնիում իոն	սանիտարական ռեժիմ	3
Ֆոսֆատ իոն	սանիտարա-թունաբանական	2
Նիտրատ իոն	սանիտարա-թունաբանական	3

Աղստև գետի աղտոտվածության աստիճանի հիգիենիկ դասակարգումը կատարվել է ըստ վնասակարությունը սահմանափակող ցուցանիշների և բերված է աղյուսակում:

Աղստև գետը 1.2 կմ ք.Բերդի վերևի հատվածում դասվում է 3-րդ դասին (միջակ): Նկատվում է ամոնիում, նիտրատ և ֆոսֆատ իոնների կոնցենտրացիաների գերազանցում թյուլատրելի նորմերից:

Աղյուսակ

Ջրավազանի անվանումը	Վնասակարարությունը սահմանափակող ցուցանիշ ՎՍՑ $ՎՍՑ = \sum(d_i - 1) + 1$			Աղտոտման աստիճանը		
	սանիտարական ռեժիմ	զգայարանական	թունաբանական	սանիտարական ռեժիմ	զգայարանական	սանիտարա-թունաբանական
Աղստև գետ	1	1	5	1 թույլատրելի	1 թույլատրելի	>3.0<10.0 բարձր

Նշված համայնքների սահմաններում, Աղստև գետի ջրերի աղտոտվածության մակարդակը գնահատվում է՝

<sup>6</sup> ՀայԷկոմոնիտորինգ, տեղեկանք ՀՀ շրջակա միջավայրի Էկոլոգիական մոնիտորինգի արդյունքների մասին

*Ենթադրյալ համայնքի հողօգտագործման գլխավոր հատվածի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

Ըստ սանիտարական ռեժիմի – թույլատրելի,

Ըստ զգայարանական ցուցանիշների - թույլատրելի,

Ըստ սանիտարա-թունաքանական ցուցանիշների - բարձր:

Բերված տվյալները վկայում են այն մասին, որ գոյություն ունեցող պայմաններում նշված համայնքների սահմաններում բացառվում է ռեկրեակցիոն նպատակով գետի օգտագործումը:

Հեռանկարում, բնակչության աճի հետ մեկտեղ կավելանա նաև Աղստև գետ թափվող տնտեսակենցաղային կեղտաջրերի քանակը, ինչը իր հերթին կհանգեցնի գետի աղտոտվածության ավելացմանը: Ահրաժեշտ է նշված համայնքների համար կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում:

### **3.8. Աղմուկի մակարդակի գնահատում /16,17,18/**

Բնակավայրում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Տարածքով անցնում է տեղական նշանակության ճանապարհներ:

Տրանսպորտային հոսքերի աղմուկը առաջանում է մեքենաների աղմուկից և կապված է տրանսպորտի արագությունից և շարժման ինտենսիվությունից:

Մեքենաների շարժման ինտենսիվությունը չի գերազանցում ժամում 120 մեքենա:

Ձայնի էկվիվալենտ մակարդակը հաշվարկման կետում, որը հեռացված է 25 մետրով ճանապարհի երթևեկելի մասից, հաշվի առնելով կառուցապատված զանգվածը, կազմում է 40դԲԱ՝ 45-55 դԲԱ նորմայի դեպքում (համաձայն 17, թիվ 23 գրաֆիկի):

### **3.9. Հողերի բնութագիրը**

Հողային ծածկույթը ներկայացված է հիմնականում մեկ հողատիպով՝ անտառային: Անտառային գոտում գերակշռում են անտառային դարչնագույն հողերը, որոնք աչքի են ընկնում հզորությամբ և հորիզոնների լավ դիֆերենցվածությամբ: Կարբոնատներով հարուստ մայր ապարների վրա զարգացած են կարբոնատահումուսային հողերը, որոնք տափաստանացված շագանակագույն հողերի հետ միասին մոզաիկ ձևով հանդիպում են ողջ անտառային գոտում: Այնտեղ, որտեղ տարածքը էրոզացված չէ, այդ հողերը աչքի են ընկնում հզոր հումուսային շերտով՝ մինչև 40սմ: Հովիտների համեմատաբար ընդարձակ տեղամասերում տարածվում են ալյուվիալ բերրի հողերը, որոնք հիմնականում վերածված են մշակովի հողերի:

Համայնքի տարածքի գեոքիմիական գնահատման արդյունքները ցույց են տվել, որ հողերը աղտոտված չեն ծանր մետաղներով: Հողերի աղտոտվածության մակարդակը գնահատված է ցածր (խտության գումարային ցուցանիշը՝ ԽԳՑ<16), աղտոտվածության դասը – թույլատրելի, էկոլոգիական իրավիճակը բավարար:

### **3.10. Թափոնների կառավարում**

#### **3.10.1. Աղբավայրեր**

Նշված ներում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 75.51 հա:

Հաճախակի են աղբի կուտակումը բնակելի տների բակերում:

Բացի դրանից, աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է համայնքների սանիտարական վիճակի վատացմանը:

Հիգիենիկ և համաճարակային տեսչության տարածքային կենտրոնի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ.

*Ենթադրված համայնքի հողօգտագործման գլխավոր հատվածի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

- Աղբահանումը կատարվում է անկանոն

- Հատկացված տարածքը (1 հա), որը գտնվում է բնակավայրի վարչական սահմաններից 2 կմ հեռավորության վրա, կենցաղային կոշտ թափոնների տեղափոխման, վնասագերծման, վերամշակման կազմակերպությունների և կառույցների հողամասերի և դրանց սանիտարական պահպանման գոտիների չափերով չի համապատասխանում «Արդյունաբերական կազմակերպությունների նախագծման սանիտարական նորմեր» ՍՆ թիվ 245-71 և «Քաղաքաշինության, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀՇՆ 30-01-2023 պահանջներին: Տարածքը պարսպապատված չէ, անբարեկարգ է, չկան համապատասխան պայմաններ կոնտեյնիների և աղբատար փոխադրամիջոցների լվացման և ախտահանման համար: Տարածքում կուտակված աղբը մշտապես ենթարկվում է ինքնայրման: Աղբավայր տանող ամբողջ ճանապարհը և մոտակա տարածքը խիստ աղտոտված են, ուստի այդ ժամանակավոր աղբավայրը ենթակա է կոնսերվացման:

Ենթադրվում առաջացած կենցաղային կոշտ թափոնների (ԿԿԹ) կազմը և տարեկան քանակը բերված է աղյուսակում: Բնակչության թիվը կազմում է 600 մարդ:

Թափոնների ընդհանուր քանակը ներկա իրավիճակում կազմում է ~100.2 տ/տարի:

Աղյուսակ

ԿԿԹ	Ընդհանուր քանակից բաժնեմասը, %	Թափոնների ընդհանուր քանակը, տ/տարի
Աննդային թափոններ	21.3	25.56
Թուղթ	13.3	15.96
Փայտանյութ	6.9	8.28
Պլաստմասաներ	19.4	23.28
Ռետին և կաշի	2.0	2.4
Տեքստիլ	2.8	3.36
Ապակի	5.4	6.48
Երկաթ, համաձուլվածքներ, գունավոր մետաղներ <sup>7</sup>	1.9	2.28
Այլ թափոններ	27.0	32.4
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>100</b>	<b>120.0</b>

### 3.10.2. Արդյունաբերական թափոններ

<sup>7</sup> Ներկայացված է կենցաղային թափոններում առկա մետաղական իրերի մասնաբաժինը



Ենթադրված համայնքի հողօգտագործման գլխավոր հատվածի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում

Համայնքներում առկա արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին: Արդյունաբերական թափոնները բացակայում են:

Ոչ օգտագործելի թափոնները գործող օբյեկտների բնույթից կախված, վտանգավոր չեն: Քանի որ, համայնքները չունեն արդյունաբերական թափոնների համար առանձին աղբավայր, ուստի ոչ օգտագործելի նշված թափոնները թափվում են կենցաղային աղբավայր:

Այս թափոնները շինարարական, ավտոտրանսպորտային ձեռնարկություններում առաջացած թափոններն են՝ շինարարական աղբ, ավտոմեքենաների մասեր, օգտագործված տարաներ:

Ոչ օգտագործված թափոնների քանակը կազմում է 6.0 տ/տարի:

Արդյունաբերական թափոնների կազմը և տարեկան քանակները բերված են աղյուսակում:

Աղյուսակ 7.2.1

Արդյունաբերական թափոնների բաղադրիչները	Ընդհանուր քանակը տ/տարի	Ընդհանուր քանակից բաժնեմասը, %
1	2	3
1. Օգտագործման ենթակա թափոններ՝ յուղեր, թեփեր	1.0	7.4
2. Տկուցքներ, կնճեռներ	2.0	15.0
3. Շինարարական օգտագործելի թափոններ	4.5	33.0
4. Ոչ օգտագործելի թափոններ՝ շինարարական, մետաղական, օգտագործված տարաներ	6.0	44.6
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>13.5</b>	<b>100</b>

### 3.10.3. Օրգանական ծագման թափոններ

Սրանք դասակարգվում են հետևյալ կերպ.

N 1 կարգ - մարդու անատոմիական թափոններ (հյուսվածքներ, օրգաններ, մարմնի մասեր):

N 4 կարգ - Առարկաներ և պլաստմասայից թափոններ (ներարկիչներ, ճկափողեր և այլն):

N 6 կարգ - Օրգանական նյութերով աղտոտված թափոններ (արյունով և այլ նյութերով աղտոտված բամբակը և այլն):

Դասվում են վտանգավորության 3-րդ դասին: Ծածկագիրն է՝ 9700100 01 05 3:

Թափոնները առաջանում են առողջապահության բնագավառի հաստատություններում:

Թափոնները դասակարգվում են հետևյալ կերպ՝

Ա) Ոչ վարակիչ թափոններ: Այս թափոնները կազմում են ընդհանուր թափոնների ~90%-ը: Սրանք իրենց բաղադրությամբ նման են կենցաղային թափոններին, քանի որ վարակի տարածման մանրէներ չեն պարունակում: Այս թափոնների շարքին են պատկանում գրասենյակային աղբը՝ թուղթ, կարտոն, փաթեթավորման նյութեր, թերթեր և այլն: Տարեկան

Ենթադաս համայնքի հողօգտագործման գլխավոր հատկագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում քանակը կազմում է 0.5տ: Այս թափոնները հեռացվում են հատկացված աղբավայր: Դասվում են վտանգավորության 4-րդ դասին: Ծածկագիրն է՝ 91200400 01 00 4<sup>8</sup>:

90000000 00 00 0	ԿՈՄՈՒՆԱԼ ԹԱՓՈՆՆԵՐ	
91000000 00 00 0	Կոշտ կոմունալ թափոններ	
91100000 00 00 0	Մշտական և ժամանակավոր բնակության վայրերից առաջացած թափոններ	Մարդու կենսագործունեություն
91100100 01 00 4	Մշտական և ժամանակավոր բնակության վայրերից առաջացած չտեսակավորված թափոններ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	
91100200 01 00 5	Մշտական և ժամանակավոր բնակության վայրերից առաջացած խոշոր եզրաչափերի թափոններ	

Բ) Վարակիչ թափոններ: Վարակիչ թափոնները դրանք օրգանական ծագման թափոններն են: Ընդհանուր քանակը կազմում է 15կգ/օր:

Դրանք իրենց հերթին դասակարգվում են՝

ա. միկրոկենսաբանական թափոններ - լաբորատոր աշխատանքի համար նախատեսված վարակիչ հիվանդությունների հարուցիչների կուլտուրաներ և շտամներ, վիրահատական և վարակիչ հիվանդություններից մահացածների դիակերծումներից առաջացած թափոն (հյուսվածքներ և առարկաներ կամ սարքավորումներ, որոնք շփվել են արյան կամ կենսաբանական այլ հեղուկների հետ), վարակիչ հիվանդներից առաջացած թափոն (արտաթորանքներ, վարակված կամ վիրաբուժական վերքերի վիրակապեր, մարդու արյամբ կամ կենսաբանական այլ հեղուկներով աղտոտված հագուստ), հեմոդիալիզ ստացող հիվանդների հետ շփումից առաջացած թափոն (դիալիզի խողովակներ, ֆիլտրեր, միանվազ օգտագործման սրբիչներ, խալաթներ, ձեռնոցներ և լաբորատոր խալաթներ), լաբորատորիաներում փորձարարական աշխատանքների համար վարակված կենդանիների դիակներ, ցանկացած միանվազ օգտագործման գործիք կամ առարկա, որը շփում է ունեցել վարակված մարդկանց կամ կենդանիների հետ.

բ. ախտաբանաանատոմիական թափոններ - վիրահատության, դիակերծման և այլ գործընթացների ընթացքում հեռացված հյուսվածքներ, օրգաններ, մարմնի մասեր, արյուն, կենսաբանական հեղուկներ, նաև վիժումների զանգվածներ, կենդանիների դիակներ (սատկած կենդանու լեշ).

գ. կենսաբանական հեղուկներ - հեղուկներ, որոնք իրենց մեջ կարող են վարակիչ հիվանդությունների հարուցիչներ պարունակել, արյուն, արյան բաղադրամասեր, ավիշ, սերմնահեղուկ, հեշտոցի արտազատուկներ, ողնուղեղային, ձուսպային, թոքամզային, որովայնամզային, հարսրտային պարկի և հարպտոլային հեղուկներ: Կենսաբանական հեղուկներով աղտոտված առարկաներ, նյութեր, փափուկ գույք.

դ. սրածայր թափոններ - կրկնակի օգտագործման կամ վերամշակման ոչ ենթակա ներարկիչներ, ներարկման ասեղներ, կարեր դներու ասեղներ, վիրահանակներ և այլ սայրեր, նշտարներ, սղոցներ, դանակներ, կտորված կամ չկտորված ապակի, սրվակներ, մեխեր և այլն.

Բժշկական թափոնների վնասագերծում - բժշկական թափոնների վտանգավոր հատկությունների նվազեցում կամ վերացում՝ մեխանիկական, ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական մշակման միջոցով: Վարակիչ թափոնների դեպքում վնասագերծումը ախտածին միկրոօրգանիզմների սպանումն է թափոնների բեռի մեջ՝ վարակագերծումը:

Արգելվում է բժշկական թափոնների բեռնաթափումը բաց աղբավայրերի մակերեսներին:

Աղբավայր ունեցող բնակավայրերում մշակման ձևերի բացակայության դեպքում բժշկական թափոնները, բացառությամբ՝ վարակիչ թափոնների, կարող են թաղվել աղբավայրի տարածքում՝ մեթոդական ուղեցույցի համաձայն: Յուրաքանչյուր դեպքում

<sup>8</sup> Ըստ ԲԶ բնապահպանության նախարարի 2006 թ. 342-Ն որոշման հավելվածի ցանկի

Ենթադան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում թաղման ենթակա թափոնների տեսակները և քանակը սահմանվում են կազմակերպության բժշկական թափոնների գործածության Ակտով: Աղբավայրը տնօրինող կազմակերպությունը պետք է ապահովի աղբավայրում բժշկական թափոնների թաղման վայրերին ներկայացվող պահանջների կատարումը:

Աղբավայր չունեցող բնակավայրերում մշակման ձևերի բացակայության դեպքում բժշկական թափոնները թաղվում են կազմակերպության տարածքում կամ մեկ այլ հատուկ հատկացված տարածքում, հատուկ պատրաստված փոսերի մեջ: Յուրաքանչյուր դեպքում այդ փոսերը կազմակերպվում և օգտագործվում են մեթոդական ուղեցույցի համաձայն<sup>9</sup>:

Թափոնատեսակների անվանումները, վտանգավորության դասերը, ծածկագրերը տրված են Հավելված 1-ում (ըստ ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ. 342-Ն որոշման հավելվածի ցանկի):

**3.11. Թափոնների կառավարում**

**3.11.1. Աղբավայրեր**

Համայնքներում առաջացած կոշտ կենցաղային թափոնների (ԿԿԹ) կազմը և տարեկան քանակը

աղյուսակ

Բնակավայրեր	Բնակչության հաշվարկային թիվը, մարդ	Աղբի հաշվարկային քանակը		Աղբավայրի հաշվարկային տարածք, հա	Սանիտարա-պաշտպանիչ գոտու տարածումը, հա
		տ/տարի	տ/օր		
Առանձին համայնքանոցային աղբավայրերի ստեղծման դեպքում					
Ենթադան	600	119.0	0.3	0.29	10.15

Սանիտարապաշտպանիչ գոտու տարածումը հաշվարկված է 300 մ, համապատասխան “Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմեր” ՍՆ 245-71

Հաշվարկային աղյուսակի ցուցանիշներից բացահայտվում է մեկ միասնական, մինչև 20 տ/օր փոքր աղբավայրի ստեղծման առավելությունը, որի դեպքում շուրջ 2.5 անգամ նվազում է աղբավայրի վնասակար ազդեցության տարածումը շրջակա միջավայրում:

Աղբավայրերի ստեղծման և շահագործման համար ղեկավար փաստաթղթերն են հանդիսանում՝

- “Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմեր” ՍՆ 245-71,
- “Քաղաքաշինության. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում” ՀՀՇՆ 30-01-2023,

<sup>9</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docID=47760> (ՀՀ առողջապահության նախարարի 2008 թ. մարտի 4-ի N 03-Ն հրամանով հաստատված ՖԲժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ Սանիտարական կանոններ և նորմեր N 2.1.3- 3!)

*Ենթադրյալ համայնքի հողօգտագործման գլխավոր հատվածի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

• ՀՀ քաղաքաշինության նախարարության 29 դեկտեմբերի 2009 թ. N 321-Ա հրամանով ՀՀ տարածքում կիրարկման մեջ դրված «Աղբավայրերի նախագծում և շահագործում» ձեռնարկը:

Աղբավայրը ըստ «Աղբավայրերի նախագծում և շահագործում» ձեռնարկի (կետ 2., ենթակետ 1)-ի) լինելու է կոշտ կենցաղային թափոնների, բնակավայրերի սանիտարական մաքրումից առաջացող աղբի, արտադրության և սպառման ոչ վտանգավոր այլ թափոնների տեղադրման, պահեստավորման և մեկուսացման համար՝ շրջակա միջավայրի պահպանման միջոցառումների և նշված ձեռնարկի պահանջների իրականացմամբ:

Աղբի տեսակավորման արտադրամասի կառուցման դեպքում աղյուսակի 1-8 կետերում կրկնակի օգտագործման համար հումքի տեսակներն են ներկայացված: Դրանց զգալի մասը, մինչև 50% կհանվի պահեստավորման ենթակա աղբի ընդհանուր զանգվածից: Արդյունքում աղբի պահեստավորման ենթակա աղբի զանգվածը կարող է կազմել 3100 տ/տարի:

Համայնքի տարածքում նախատեսվում է մեկ միասնական միջհամայնքային, մինչև 10 տ/օր (շուրջ 3700 տ/տարի) հզորությամբ աղբավայրի ստեղծում, որի տարածքում կառուցվի աղբի տեսակավորման արտադրություն: Արդյունքում զգալի չափով նվազելու է աղբի պահեստավորման ծավալը, պահեստավորման պոլիգոնի պահանջվող չափերը, շրջակա միջավայրի վրա անբարենպաստ ազդեցությունը, ինչպես նաև աշխատատեղեր կստեղծվեն բնակչության զբաղվածությունը ապահովելու ուղղությամբ:

Աղբավայրի տեղադրման համար տարածք է ընտրված Լուսածոր համայնքի, բնակավայրից շուրջ 1.5 կմ հեռավորությամբ գտնվող, տրանսպորտի համար բարենպաստ դիրքով, փոքր թեքություն ունեցող շուրջ 2.0 հա հողամաս:

### **3.11.2. Արդյունաբերական թափոններ**

Համայնքներում առկա արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները պատկանում են սա նիտարական վտանգավորության IV-

V դասին: Արդյունաբերական թափոնները բացակայում են:

Ոչ օգտագործելի թափոնները գործող օբյեկտների բնույթից կախված, թունավոր չեն և պատկանում են սանէպիդկայանի կողմից համաձայնեցված վայր տեղափոխվող թափոնների խմբի:

Այս թափոնները շինարարական, ավտոտրանսպորտային ձեռնարկություններում առաջացած թափոններն են՝ շինարարական աղբ, ավտոմեքենաների մասեր, օգտագործված տարաներ:

Ոչ օգտագործված թափոնների քանակը կազմում է 12 տ/տարի:

Արդյունաբերական թափոնների կազմը բերված է աղյուսակում:

#### **Աղյուսակ**

Արդյունաբերական թափոնների բաղադրիչները	Ընդհանուր քանակը տ/տարի	Ընդհանուր քանակից բաժնեմասը, %
Օգտագործման ենթակա թափոններ՝ յուղեր	2.3	11
Շինարարական օգտագործելի թափոններ	3.6	17.23
Ոչ օգտագործելի թափոններ՝ շինարարական, մետաղական, օգտագործված տարաներ	12	57.4

Ենթադասի համայնքի հողօգտագործման գլխավոր հատվածի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում

Տկուցքներ, կնճեռներ	3.0	14.35
ԸՆԴԱՄԵՆԸ	20.9	100

### **3.11.3. Օրգանական ծագման թափոններ**

Թափոնները առաջանում են առողջապահության բնագավառի հաստատություններում:

Թափոնները դասակարգվում են հետևյալ կերպ՝

Ա) Ոչ վարակիչ թափոններ: Այս թափոնները կազմում են ընդհանուր թափոնների ~90%-ը: Սրանք իրենց բաղադրությամբ նման են կենցաղային թափոններին, քանի որ վարակի տարածման մանրէներ չեն պարունակում: Այս թափոնների շարքին են պատկանում գրասենյակային աղբը՝ թուղթ, կարտոն, փաթեթավորման նյութեր, թերթեր և այլն: Տարեկան քանակը կազմում է 1.2 տ: Այս թափոնները հեռացվում են ՀՀ-ի կողմից հատկացված աղբավայր: Դասվում են վտանգավորության 4-րդ դասին: Ծածկագիրն է՝ 91200400 01 00 4:

Բ) Վարակիչ թափոններ: Վարակիչ թափոնները դրանք օրգանական ծագման թափոններն են: Ընդհանուր քանակը կազմում է 15-20 կգ/օր:

Սրանք դասակարգվում են հետևյալ կերպ.

N1 կարգ մարդու և կենդանիների անատոմիական թափոններ (հյուսվածքներ, օրգաններ, մարմնի մասեր):

N 4 կարգ - Առարկաներ և պլաստմասայից թափոններ (ներարկիչներ, ճկափողեր և այլն):

N6 կարգ Օրգանական նյութերով աղտոտված թափոններ (արյունով և այլ նյութերով աղտոտված բամբակը և այլն):

N1 կարգի թափոնների մեկուսացման նպատակով, մինչև վարակիչ թափոնների վնասագործման կամ ոչնչացման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, գերեզմանատանը թաղման համար հատկացված է հատուկ ցանկապատ տարածք:

### **3.12. Գերեզմանոցներ**

Բնակավայրի տարածքում տեղակայված է 1 գերեզմանոց, ընդհանուր ~1.77 հա:

Գերեզմանոցը գործող է:

Առաջարկվում է գերեզմանոցի պարսպապատումը ՍՊԳ-ի չափերով հետագա հուղարկավորումների ընթացքում այն չխախտելու համար:

Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշաք ծառապատում (նախատեսվող կանաչապատման աշխատանքներն իրականացնելիս հաշվի առնելով ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշմամբ տեսակային կազմին ներկայացվող պահանջները):

Գերեզմանոցի ճանապարհի եզրային հատվածներում, նախատեսել տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը:

### **3.13. Կանաչապատման համակարգը**

*Ենթադան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

Ներկա դրությամբ ներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկներ (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) առկա չեն:

Բնակավայրի վարչական սահմաններում եղած գյուղատնտեսական հողերի սեփականաշնորհման հետ կապված, հողօգտագործողները մասամբ փոխել են պտղատու այգիների ֆունկցիոնալ նշանակությունը (սահմանափակ օգտագործման կանաչ տարածքներ): Ենթադանի տարածքում՝ ըստ հողային հաշվետվության նման տարածքները բացակայում են: Բնակչության սեփական հողատարածքներում աճեցվում են բանջարանոցային, հացահատիկային և այլ մշակաբույսեր:

Գյուղի կանաչ զանգվածների ցուցանիշները բերված են աղյուսակում:

Աղյուսակ

Կանաչ զանգվածների ֆունկցիոնալ նշանակությունը	Ընդհանուր կանաչ զանգված	
	հա	մ <sup>2</sup> /մարդ
1. Ընդհանուր օգտագործման կանաչ գոտի	-	-
2. Սահմանափակ նշանակության	-	-

**3.14. Շրջակա միջավայրի գոյություն ունեցող իրավիճակի գնահատականը-**

Միջավայրի համալիր անտրոպոգեն տեխնածին բեռնվածությունը բաղկացած է գործոնային ցուցանիշներից- միջավայրի հիմնական գործոնների քանակական բնութագրից, որոնք որոշիչ են մարդու օրգանիզմի վրա իրական բեռնվածությունում՝ մթնոլորտային օդի և հողերի, աղմուկի մակարդակների, ջրի քիմիական և կենսաբանական աղտոտվածության ցուցանիշներ:

Որոշվող համալիր բեռնվածությունը օրգանիզմի վրա (KH) բաղկացած է հաշվի առնվող նշված գործոնների (տվյալ պայմաններում գոյություն ունեցող) գումարից:

Հաշվի առնվող նշված գործոններից յուրաքանչյուրը քանակապես որոշվում է հիգիենիկ նորմատիվներին վերաբերվող մեկ ցուցանիշներով:

Նշված դեպքում թույլատրելի համարվում է այն մեծությունը, որը հավասար է 1-ի:

**3.15. Օդի մերձգետնյա շերտի աղտոտվածության սանիտարա-հիգիենիկ իրավիճակի անալիզը**

Մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ<sup>3</sup>), վերցված են ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի մոնիտորինգի կենտրոնի կողմից (ըստ բնակչության քանակի) և բերված են աղյուսակում:

Հաշվարկների համար վերցված է Իջևան քաղաքի ֆոնային աղտոտվածությունը/19/:

Աղյուսակ

№№ ը/հ	Աղտոտող նյութերի կոդերը և անվանումները	ՄԹԿ, մգ/մ <sup>3</sup>	Ֆոնային կոնցենտրացիաները	
			մգ/մ <sup>3</sup>	միավոր ՄԹԿ
1	002 Փոշի	0.5	0.3	0.6
2	701 Ծծմբի երկօքսիդ	0.5	0.05	0.1
3	200 Ազոտի օքսիդներ	0.2	0.015	0.075

Ենթադաս համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում

4	322 Ածխածնի օքսիդ	5.0	0.8	0.16
---	-------------------	-----	-----	------

Ինչպես երևում է աղյուսակից հջևան քաղաքային համայնքում ֆոնային կոնցենտրացիաները չեն գերազանցում թույլատրելի նորմերը:

Աղտոտվածության համալիր ցուցանիշը հաշվարկվում է բանաձևով, որտեղ

K – նյութի նորմավորված III դասի բերման գործակիցն է

i - փաստացի խտությունների գերազանցումն է ՍԹԿ-ն :

Աղտոտվածության համալիր ցուցանիշի հաշվարկման համար ելակետային տվյալները բերված են աղյուսակում:

Աղյուսակ 10.1.2

Աղտոտող նյութի անվանումը	Վտանգավորության դասը	Միջին օրական կոնցենտրացիաների արժեքները, մգ/մ <sup>3</sup>	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիան, ՍԹԿ <sub>միջ.օր.</sub> , մգ/մ <sup>3</sup>	Գերազանցում է միջին օրական կոնցենտրացիան	Վտանգավորության III դասի բերման գործակիցը, իզոէֆեկտիվության գործակից, K
1	2	3	4	5	6
Փոշի	III	0.12	0.15	0.8	1
Ծծմբի երկօքսիդ	III	0.02	0.05	0.4	1
Ազոտի օքսիդներ	II	0.006	0.04	0.15	1.3
Ածխածնի օքսիդ	IV	0.32	3	0.11	0.87

Օդի աղտոտվածության համալիր ցուցանիշը՝ P-ն կլինի:

Ստացված տվյալներից ելնելով, երբ n=4 և p=0.92 մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը գնահատվում է թույլ աղտոտված:

Օդային միջավայրի աղտոտվածության համալիր գնահատականը տրված է ըստ հողմագծի աղտոտման աղբյուրից դեպի բնակելի գոտին փչող քամու արագության միջին տարեկան կրկնելիության (%) պայմաններում (P):

Մի հողմագծի քամիների ուղղության կրկնելիության տոկոսը քամիների շրջանային փնջագրի դեպքում՝ Po

$$Po=100:8=12,5\%$$

Քամու արագության միջին տարեկան կրկնելիությունը (գերակայում են հարավ-արևմտյան ուղղությամբ փչող քամիները) կազմում է 44%:

Օդային միջավայրի աղտոտվածության գնահատականը տրված է համաձայն/20,21/:

, որտեղ

C<sub>1, 2...n</sub> - աղտոտվածության առանձին կոմպոնենտների միջին օրական կոնցենտրացիան է մգ/մ<sup>3</sup>,

N1 – գործակից, որի մեծությունը կախված է աղտոտող նյութերի վտանգավորության դասից՝





*Ենթադան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

Շրջակա միջավայրի վրա անտրոպատեխնածին բեռնվածության համալիր ցուցանիշը՝ KH, որոշվում է

$$KH = (K_{\text{օդ}} + K_{\text{աղմուկ}} + K_{\text{ջուր}} + K_{\text{հող}}) : N, \text{ որտեղ}$$

N – հաշվի առնվող գործոնների քանակն է N=4

Ցուցանիշի նորմատիվային մեծությունը համարվում է հաշվի առնվող գործոնային գնահատականների համապատասխան միավորների թիվը, տվյալ դեպքում՝ 4:

Էկոլոգո-հիգիենիկ իրավիճակի գնահատականը տարածքի շրջակա միջավայրի անտրոպատեխնածին աղտոտվածության հետևանքով կատարվել է հիգիենիկ դասակարգման արդյունքների հիման վրա (KH) և բերված է ստորև աղյուսակում:

Աղյուսակ

Սանիտար-հիգիենիկ իրավիճակի լարվածության աստիճանը	Էկոլոգիական անհարմարավետության աստիճանը	Հիգիենիկ ռանգավորման մեծությունը՝ KH	Շրջակա միջավայրի վնասվածիչը	Մարդկանց առողջական վնասի բնութագիրը: Բնակչության պրոտենցիալ կենսա-գործունեության ինդեքսը (Lկր)
Տարածքներ համեմատաբար բավարար	Համեմատաբար բավարար	$KH = 1.98 - 2.74$ ցածր է հաշվի առնվող գործոններից $0.5 - 0.7$ անգամ	Հիգիենիկ նորմատիվների գերազանցում մի շարք միջավայրերում (ջուր, աղմուկ) Յուրաքանչյուր միջավայրում ՍԹԿ-ի եզակի գերազանցում	Առողջության ընդհանուր ցուցանիշները չեն գերազանցում սովորական հետազոտված ցուցանիշները, և կախված չեն էկոլոգիական անհարմարավետությունից  Առողջության ցուցանիշը մինչև 1 Lկր ≤ 1

**3.19. Տարածքի տնտեսության հեռանկարային զարգացումը**

Նախատեսված է բնակչության աճի չափով: Տնտեսության զարգացման հիմնական ճյուղերն են այգեգործությունը, բուսաբուծությունը, անասնապահությունը, խաղողագործությունը, հողագործությունը, անտառատնտեսությունը, հացահատիկային կուլտուրաների մշակումը, զբոսաշրջությունը:

**3.20. Ենթադանի զարգացման հիմնական ուղղությունները**

Համայնքների զարգացման ծրագրից բխող՝ սոցիալական, մշակութային, արդյունաբերական, ինժեներտրանսպորտային և այլ համակարգերի կատարելագործմանը նպաստող միջոցառումների ծրագիրը ներկայացված են Նախագծում:

**3.21. Համայնքների շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցությունը**

*Ենթադաս համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

Բնակավայրի շրջակա միջավայրի վրա տեխնաժին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումը արդյունաբերական ձեռնարկությունների, բնակկոմունալ սեկտորի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
  - մակերևութային ջրերի աղտոտումը արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,
  - հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,
  - աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը,
  - անտառի անկայուն օգտագործումը, որը համայնքի շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության բնական գործոնների թվին են դասվում սողանքները, սելավները և հողերի էրոզիան:

**3.21.1. Մթնոլորտային օդը**

Ներկայումս համայնքների մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումներով: Արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին, արտադրական արտանետումները հիմնականում առաջանում են բնական գազի այրումից: Ֆոնային աղտոտվածությունը աղտոտող բոլոր նյութերով զգալիորեն ցածր է սահմանային թյուվատրելի կոնցենտրացիաներից (ՍԹԿ):

Ջեռուցման ժամանակահատվածում վնասակար արտանետումների հաշվարկները կատարված են գազի ծախսից ելնելով և բերված են աղյուսակում:

Ավտոտրանսպորտի և արդյունաբերական արտանետումները մթնոլորտ բերված են աղյուսակներում:

Վնասակար արտանետումների հաշվարկները կատարվել են համաձայն մեթոդակարգի /9-12/:

**Աղյուսակ**

Համայնքների անվանումները	Ածխածնի օքսիդ տ/տարի	Ազոտի օքսիդներ տ/տարի	ԸՆԴԱՄԵՆԸ տ/տարի
Ենթադաս	0.013	0.031	0.044

**Աղյուսակ**

Համայնքների անվանումները	Ածխածնի օքսիդ տ/տարի	Ազոտի օքսիդներ տ/տարի	Ածխաջրածիններ տ/տարի	ԸՆԴԱՄԵՆԸ տ/տարի
Ենթադաս	666.2	4.21	7.25	677.6

Բոլոր մթնոլորտ վնասակար արտանետումների քանակները և ներդրման % բերված են աղյուսակ 14.1.4-ում:

**Աղյուսակ**

Համայնքների անվանումները	Ջեռուցում տ/տարի/%	Ավտոտրանսպորտ տ/տարի/%	Արդյունաբերութ	Ընդամենը տ/տարի/%

*Ենթազանց համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

				յուն տ/տարի /%	
2	Ենթազանց	0.044/ 0.15	677.6/ 14	-	677.6/13.9

Մթնոլորտ վնասակար արտանետումների հիմնական մասը բաժին է ընկնում ավտոտրասպորտին, որի արտանետումները կազմում են մթնոլորտ արտանետումների 99 %-ը:

Մթնոլորտ վնասակար արտանետումներից տնտեսությանը հասցված վնասի արժեքները բերված են աղյուսակում /13/:

Մթնոլորտ վնասակար արտանետումները ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից կազմում է 4874.82 տ/տարի: Համայնքի մթնոլորտ վնասակար արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կազմում է 106.7 մլն. դրամ տարի:

**Աղյուսակ**

Համայնքների անվանումները	Ջեռուցում հազ. դրամ/տարի	Ավտոտրանսպորտ հազ. դրամ/տարի	Արդյունաբերություն հազ. դրամ/տարի	ԸՆԴԱՄԵՆԸ հազ. դրամ/տարի
2 Ենթազանց	0.8	43407.4	-	43408.2

**3.21.2. Տարածքի համալիր գնահատականը**

Տարածքի համալիր գնահատականը տրված է /2/-ի հիման վրա: Տարածքի համալիր գնահատականը տրված է տեղանքի կլիմայական պայմանների, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի, արդյունաբերական պոտենցիալի, բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ:

Օդային ավազանի գնահատականը բերված է աղյուսակում:

Անվանումը	Գնահատականը			Աղտոտման մակերեսը բնակելի գոտում, հա
	անտրոպոգեն ազդեցությամբ	հիգիենիկ իրավիճակով	տարածքի համալիր գնահատականը	
տարածք	թույլ ազդեցության գոտի	վտանգ չի հարուցում	բարենպաստ	75.51

Անտրոպոգեն թույլ ազդեցության գոտին կազմում 75.51հա: Հիգիենիկ իրավիճակով տարածքը վտանգ չի ներկայացնում: Տարածքի համալիր գնահատականը՝ բարենպաստ:

**3.21.3. Մակերևութային ջրահոսքեր**

Նշված համայնքների տարածքով անցնող գետը Աղստևն է:

Գետը տիպիկ լեռնային է: Գետի միջին թեքությունը – 0.0098, արագությունը՝ 0.9-1.0մ/վրկ: Գետի հատակը քարքարոտ է: Ընդհանուր երկարությունը Հայաստանի տարածքով – 121 կմ:

Աղստև գետի մեջ նշված համայնքների տարածքում թափվում են տնտեսակենցաղային հոսքաջրերի մի մասը, ինչը հանդիսանում է գետի աղտոտվածության հիմնական աղբյուրը:

Վերջին տարիներին Աղստև գետի կիրճում զանազան սպասարկման օբյեկտների շահագործման արդյունքում, զգալիորեն ավելացել է գետի աղտոտվածությունը:

*Ենթադաս համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

Բնակավայրի աշխարհագրական դիրքը թույլ չի տալիս տարածաշրջանի համար մեկ միասնական կեղտաջրերի մաքրման կայանի ընտրություն:

Կեղտաջրերի կենսաբանական մաքրման հին կայանը՝ 3000մ<sup>3</sup>/օր արտադրողականությամբ ներկայումս չի գործում և վերականգնումը գրեթե անհնար է:

Տնտեսակենցաղային հոսքաջրերի մաքրման համար ենթադաս բնակավայրում, որտեղ բնակչության քանակը հեռանկարում չի գերազանցում 2000 մարդը, նախատեսված է տեղադրել 'Յավմա' մակնիշի կենսաբանական մաքրման կայան՝ 200 մ<sup>3</sup>/օր արտադրողականությամբ: Մաքրման կայանը ունի բազմաստիճանային մաքրման կառուցվածք և ներառում է սեպտիկ խուց, անաերոբ կենսաբանական ռեակտոր, կենսազտիչ առաջին և երկրորդ աստիճանի, օդավորման ավազան (աերոտենկ), երկու պարզարան, պոմպային հատվածամաս: Մաքրման արդյունավետությունը 98%:

Կայանի կորպուսը կարող է պատրաստված լինել պողպատից կամ պոլիպրոպիլենից:

Նստվածքի հեռացումը կատարվում է երկու տարին մեկ անգամ: Նստվածքը կարող է օգտագործվել որպես պարարտանյութ: Հնարավոր է մաքրման կայանը փոխարինել ուրիշ նույն մաքրման աստիճան ունեցող ինքնավար կենսաբանական մաքրման կայանով:

Կեղտաջրերով Աղստև գետ թափվող աղտոտող նյութերի քանակը բերված է աղյուսակում:

**Աղյուսակ 14.3.1**

Համայնքներիան վանումը	Կեղտաջրերի ծավալը, հազ. խոր.մ	Աղստև գետ թափվող վնասակար նյութերի քանակը, տ/տարի								
		ԹԿՊ տիվ	Կախյալ նյութեր	Նավթամթերք	Ազոտ աճանի ալկալի	Քլորիդներ	Սուլֆատներ	Պղինձ, կգ	ՍԼ Մ*	Ցինկ, կգ
Ենթադաս	19.38	0.194	0.21	0.0058	0.24	0.87	0.78	0.135	0.017	0.78

\*- սինթետիկ լվացող միջոցներ

Աղստև գետ թափվող հոսքաջրերի հետևանքով շրջակա ջրային ավազանին հասցված տնտեսական վնասը կենսաբանական մաքրման կայանների առկայության դեպքում զգալիորեն նվազում է՝ 26 մլն. դրամից նվազելով մինչ 2.9 մլն. դրամ/տարի:

Աղստև գետի համար ստացված ինքնամաքրման  $K=0.15$  ցուցանիշի դեպքում, խառնուրդների նոսրացման համար պայմանները գնահատվում են որպես անբավարար, իսկ գետի ինքնամաքրման պոտենցիալը՝ ցածր:

Հեռանկարում Աղստև գետի աղտոտվածության հաշվարկային ցուցանիշները բերված են աղյուսակում:

**Աղյուսակ 14.3.2**

ՍԹԿ-ն գերազանցող աղտոտիչ նյութերի անվանումը	Վնասակարության ցուցանիշը	Միջին տարեկան կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից $d_i$
Ամոնիում իոն	սանիտարական ռեժիմ	1

Ենթադրված համայնքի հողօգտագործման գլխավոր հատկագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում

Ֆոսֆատ իոն	սանիտարա-թունաբանական	2
Նիտրատ իոն	սանիտարա-թունաբանական	3

Աղստև գետը 1.2 կմ Իջևան քաղաքի վերևի հատվածում դասվում է 3-րդ դասին (միջակ): Նկատվում է ամոնիում, նիտրատ և ֆոսֆատ իոնների կոնցենտրացիաների գերազանցում թույլատրելի նորմերից:

Կենսաբանական մաքրման կայանները կանխարգելում են գետի աղտոտվածության հետագա ավելացումը: Աղստև գետի աղտոտվածության մակարդակը հեռանկարում կմնա անփոփոխ:

Աղստև գետի աղտոտվածության աստիճանի հիգիենիկ դասակարգումը կատարվել է ըստ վնասակարությունը սահմանափակող ցուցանիշների և բերված է աղյուսակում:

**Աղյուսակ**

Ջրավազանի անվանումը	Վնասակարությունը սահմանափակող ցուցանիշ ՎՍՑ $ՎՍՑ = \sum(d_i - 1) + 1$			Աղտոտման աստիճանը		
	սանիտարական ռեժիմ	զգայարանական	սանիտարա-թունաբանական	սանիտարական ռեժիմ	զգայարանական	սանիտարա-թունաբանական
Աղստև գետ	1	1	4	1 թույլատրելի	1 թույլատրելի	>3.0<10.0 բարձր

Նշված համայնքների սահմաններում, Աղստև գետի ջրերի աղտոտվածության մակարդակը կգնահատվի՝

Ըստ սանիտարական ռեժիմի – թույլատրելի,

Ըստ զգայարանական ցուցանիշների - թույլատրելի,

Ըստ սանիտարա-թունաբանական ցուցանիշների - բարձր:

Բերված տվյալները վկայում են այն մասին, որ ծրագրով նախատեսված մաքրման կայանների առկայությունը կկանխարգելի Աղստև գետի հետագա աղտոտումը:

**Հեղեղատար կոյուղի:**

Հեղեղատար կոյուղու գրեթե բացակայության արդյունքում գարնանային ձնհալի և աշնանային հորդ անձրևների ժամանակ հնարավոր են տարածքների հեղեղումներ: Այս երևույթից խուսափելու նպատակով բոլոր համայնքերում նախատեսված է հեղեղատար առուների նախագծում և կառուցում: Տարվա ընթացքում անձրևաջրերի քանակը հաշվարկված է գործող մեթոդակարգի համաձայն: Տեղումների տարեկան քանակը- 523 մմ: Բնակավայրի տարածքի մակերեսը՝ 75.51 հա:

Աղստև գետ թափվող անձրևաջրերի քանակը կկազմի՝ 157.98 հազ.մ<sup>3</sup>/տարի: Անձրևաջրերի արտահոսքից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կգնահատվի տարեկան 0.027 մլն. դրամ:

**3.21.4. Աղմուկի մակարդակի գնահատում /16, 17, 18/**

*Ենոքավան համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

Աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը:

Տրանսպորտային հոսքերի աղմուկը առաջանում է մեքենաների աղմուկից և կապված է տրանսպորտի արագությունից և շարժման ինտենսիվությունից:

Մեքենաների շարժման ինտենսիվությունը չի գերազանցում ժամում 150 մեքենա:

Ձայնի էկվիվալենտ մակարդակը հաշվարկման կետում, որը հեռացված է 25 մետրով ճանապարհի երթևեկելի մասից, հաշվի առնելով կառուցապատված զանգվածը, կազմում է 42 դԲԱ՝ 4 5-55 դԲԱ նորմայի դեպքում (համաձայն 17, թիվ 23 գրաֆիկի):

### **3.21.5. Էլեկտրամագնիսական ճառագայթում**

Համայնքը սնող ենթակայանների ընդհանուր հզորությունը կազմում է 38111 ԿՎա: Էլեկտրաենթակայանների հզորությունները ըստ ների բերված են աղյուսակում:

Համաձայն մեթոդակարգի /2/ էլեկտրամագնիսական ճառագայթման վերը նշված աղբյուրները համարվում են սակավահզոր և չեն դիտարկվում ինչպես մթնոլորտի աղտոտման աղբյուրներ:

**Աղյուսակ**

<b>Համայնքների անվանումը</b>	<b>Ենթակայանի հզորությունը, ԿՎա</b>
Ենոքավան	1003

### **3.22. Հողերի բնութագիրը**

Ենոքավանի հողատեսքերը ներառում են 4017.09 հա հողեր, այդ թվում՝

- Գյուղատնտեսական հողեր- 1984.4 հա
- Բնակավայրեր- 75.51 հա
- Արդյունաբերական ընդերքօգտագործման – 5.07 հա
- Էներգետիկայի և տրանսպորտի -0.39 հա
- Հատուկ պահպանվող տարածքներ – 11.14 հա
- Հատուկ նշանկության-13.73 հա
- Անտառային – 1923.15 հա
- Ջրային – 3.7հա

Պահուստային հողերը բացակայում են

Համայնքների հողային ծածկույթը ներկայացված է հիմնականում մեկ հողատիպով՝ անտառային: Անտառային գոտում գերակշռում են անտառային դարչնագույն հողերը, որոնք աչքի են ընկնում հզորությամբ և հորիզոնների լավ դիֆերենցվածությամբ: Կարբոնատներով հարուստ մայր ապարների վրա զարգացած են կարբոնատահումուսային հողերը, որոնք տափաստանացված շագանակագույն հողերի հետ միասին մոզաիկ ձևով հանդիպում են ողջ անտառային գոտում: Այնտեղ, որտեղ տարածքը էրոզացված չէ, այդ հողերը աչքի են ընկնում հզոր հումուսային շերտով՝ մինչև 40սմ: Հովիտների համեմատաբար ընդարձակ տեղամասերում տարածվում են այլովիալ բերրի հողերը, որոնք հիմնականում վերածված են մշակովի հողերի:

Համայնքի տարածքի գեոքիմիական գնահատման արդյունքները ցույց են տվել, որ հողերը աղտոտված չեն ծանր մետաղներով: Հողերի աղտոտվածության մակարդակը գնահատված է ցածր (խտության գումարային ցուցանիշը՝ ԽԳՑ<16), աղտոտվածության դասը – թույլատրելի, էկոլոգիական իրավիճակը բավարար: Հեռանկարում հողերի

Ենթադրված համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում աղտոտվածության մակարդակի ավելացում չի սպասվում, քանի որ արդյունաբերական ձեռնարկությունների կառուցում չի նախատեսված:

### 3.23. Գերեզմանոցներ

Բնակավայրում տեղակայված է թվով 1 գերեզմանոց, ընդհանուր ~ 1.77 հա տարածքում: Գերեզմանոցը գործող են:

Ծրագրով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատումը ՍՊԳ-ի չափերով հետագա հուղարկավորումների ընթացքում այն չխախտելու համար:

Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշաք ծառապատում (նախատեսվող կանաչապատման աշխատանքներն իրականացնելիս հաշվի առնելով ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշմամբ տեսակային կազմին ներկայացվող պահանջները):

Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում, նախատեսել տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը:

Գերեզմանոցի տարածքը ըստ համայնքների բերված է աղյուսակում:

Աղյուսակ

Համայնքների անվանումը	Գերեզմանները, հա
Ենթադրված	1.77

### 3.24. Կանաչապատման համակարգը

Հեռանկարում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) ընդհանուր մակերեսը ըստ նորմաների պետք է կազմի՝ 12 մ<sup>2</sup>/մարդ:

Հեռանկարում սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը կկազմի 0.72 հա:

Կանաչ զանգվածների ցուցանիշները բերված են աղյուսակում:

Աղյուսակ

Համայնքների անվանումը	Կանաչ զանգվածների ֆունկցիոնալ նշանակությունը		
	Ընդհանուր օգտագործման, հա/մ <sup>2</sup> /մարդ	Սահմանափակ նշանակության, հա/մ <sup>2</sup> /մարդ	Ընդհանուր կանաչ զանգված, հա/մ <sup>2</sup> /մարդ
Ենթադրված	0.72/12	49.005/816.75	49.725/828.75

**Համայնքի տարածքում է տեղակայված նաև** «Իջևանի դենդրոպարկ»-ը, որը հիմնադրվել է 1962 թ. գտնվում է քաղաքի հարավ-արևելյան մասում, գինու գործարանից հարավ: Դենդրոպարկի Ընդհանուր տարածքը կազմում է **14.62 հա:** Դենդրոպարկի

*Ենթադան համայնքի հողօգտագործման գլխավոր հատկագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

նշանակությունը չափազանց մեծ է թե բնապահպանական տեսակետից, որպես շրջակա միջավայրի միկրոկլիմայական և սանիտարահիգիենիկ պայմանների բարելավմանն ուղղված և ռեկրեացիոն օբյեկտ, այնպես էլ, որպես բույսերի գենոֆոնդի եզակի պահեստարան հանդիսացող, կենսաբազմազանության պահպանության, գիտական և կրթական հատուկ նշանակություն ունեցող օբյեկտ: Այստեղ աճում են մերձարևադարձային և բարեխառն կլիմաների 600-ից ավելի բուսատեսակներ, որոնք պատկանում են 61 ընտանիքի և 162 ցեղի: Ստորև բերված է տեսակային բազմազանությունը ըստ կենսաձևերի

Ասեղնատերև	Տերևաթափ	Մշտադալար	Ծառ	Թուփ	Փայթացողուն փաթաթվողներ
131	376	58	261	213	8

Աղբյուր՝ “Հայաստանի կենսաբազմազանության պահպանության համար հզորությունների գնահատում” “Կենսաբազմազանության համար առանձին հզորություններևի ստեղծման կարիքների գնահատում” զեկույց, Երևան 2002

Միայն ասեղնատերևավորները 131 տեսակի են՝ աշխարհի փշատերև ծառատեսակների 23%- ը: Դենդրոպարկին կից ստեղծվել է 3 հա տարածությամբ տնակարան: Դենդրոպարկի տարածքում ասեղնատերևավորներից այստեղ աճում են մետասեքվոյան, ճապոնական կրիպտոմերյան, հիմալայան մայրին, գլխիկավոր կենին, կենսածառերը, եղևնիները, սոճիները, նոճիները, գետնանոճիները, մամոնտաձառը, մշտադալար սեկվոյան, կեղծ ցուգան և այլն:

Հարկ է նշել, որ 20-րդ դարի 90-ական ճգնաժամային տարիներին դենդրոպարկը նույնպես որոշակի վնասներ է կրել:

2004թ. մարտ ամսին տեղի ունեցած ուժեղ քամիների և Աղստև գետի վարարման հետևանքով արամտախիլ են եղել և կոտրվել բազմաթիվ արժեքվոր և հազվագյուտ ասեղնատերևավոր ծառատեսակներ, որոնց վերկանգնման համար անհրաժեշտ է իրականացնել վնասված տարածքների վերկանգնման, ինչպես նաև քամու և ջրհեղեղների հնարավոր վտանգից պաշտպանողական աշխատանքներ:

Ներկայումս դենդրոպարկը կարիք ունի լուրջ ֆինանսա-տեխնիկական միջոցների ներդրման, զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման համար:

### **3.25. Բնության հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ**

Բնության հատուկ պահպանվող տարածքները համայնքի տարածքում ներկայացված են <Իջևանի > պետական արգելավայրը ստեղծվել է ՀՍՍՀ Մինիստրների սովետի 09.04.1971 թ. N 212 կարգադրության համաձայն: Արգելավայրը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Աղստև գետի ավազանում, Իջևանի և Կայենի լեռնաշղթաների լանջերին, ծովի մակարդակից 900-2100 մ բարձրության վրա և զբաղեցնում է 5908 հա տարածք: Արգելավայրի պահպանության օբյեկտը անտառային լանդշաֆտներն ու դրանց բնորոշ կենդանական աշխարհն են:

Ստորև ներկայացվում են մարզի տարածքում տեղակայված բնության հուշարձանները.

#### **Ց Ա Ն Կ**

#### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ**



*Ենթադաս համայնքի հողօգտագործման գլխավոր հատակագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում*

**Երկրաբանական հուշարձաններ**

NN ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1	2	3
6.	«Մոլլաքար» ժայռ	Տավուշի մարզ, Իջևան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, Իջևան-Երևան խճուղու ձախ կողմում
97.	«Անանուն» պլագիոգրանիտներ	Տավուշի մարզ, Բերդ ավանից 6.5 կմ հվ-արմ, անտառտնտեսության մոտ
98.	«Անանուն» դայկայանման մարմիններ	Տավուշի մարզ, Բերդ ավանի հս-արմ եզրին
99.	«Անանուն» փոխակերպարային (մետամորֆիզացված) թերթաքարեր	Տավուշի մարզ, Վարազաձոր գետի վերին հոսանքում, Բերդ քաղաքից մոտ 20 կմ հվ-արմ
100.	«Կալաքար» լեռ	Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից 1.5 կմ հվ
101.	«Անանուն» սյունաձև էքստրուզիվ մարմին՝ նեկկ	Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից 2 կմ հվ
102.	«Անանուն» դայկայանման մարմիններ	Տավուշի մարզ, Նավուր գյուղից 1.5 կմ հվ-արմ, Տավուշ գետի ձախ վտակի հովտում
103.	«Փայտասար» քարանձավների համալիր	Տավուշի մարզ, Կողբ գյուղից 4 կմ հարավ
104.	«Անանուն» կվարցային դիորիտներ և գաբրո-դիորիտներ	Տավուշի մարզ, Նավուր գյուղից 1.5 կմ հվ-արմ, Տավուշ գետի կիրճի աջ լանջին
105.	«Անանուն» շերտագրական մերկացում	Տավուշի մարզ, Չինչին գյուղի հվ-արմ եզրին
106.	«Անանուն» սանդղավուղ քարափներ	Տավուշի մարզ, Չինչին գյուղից 2.0 կմ հվ-արմ
107.	«Օձաքար» լեռնազագաթ	Տավուշի մարզ, Պառավաքար գյուղից 3 կմ հս-արմ, Վաղաշեն տանող ճանապարհի աջ կողմում

**Կենսաբանական հուշարձաններ**

5.	«Նոյեմբերյանի սոսի»	Տավուշի մարզ, քաղ. Նոյեմբերյան, Չինարածորում
16.	«Վարդան Մամիկոնյանի կաղնի»	Տավուշի մարզ, գ. Ակնաղբյուր, ծ.մ-ից 900 մ բարձրության վրա
17.	«Սարի գյուղի սոսի»	Տավուշի մարզ, գ. Սարիգյուղ, Երևան-Նոյեմբերյան ճանապարհից աջ, ծ.մ-ից 750 մ բարձրության վրա
18.	«Գետահովիտի մամռապատ ժայռ»	Տավուշի մարզ, Գետահովիտ գյուղի մոտ, Սառնաջուր գետի ձախ ավին, մոտ 700-800 մ բարձրության վրա
19.	«Տանձուտ»	Տավուշի մարզ, Աղավնավանք գյուղի մոտ

**3.26. Շրջակա միջավայրի իրավիճակի գնահատականը համայնքների զարգացման ծրագրի իրականացումից հետո**

Միջավայրի համալիր անտրոպոգեն տեխնածին բեռնվածությունը բաղկացած է գործոնային ցուցանիշներից, միջավայրի հիմնական գործոնների քանակական բնութագրից, որոնք որոշիչ են մարդու օրգանիզմի վրա իրական բեռնվածությունում՝ մթնոլորտային օդի և հողերի, աղմուկի մակարդակների, ջրի քիմիական և կենսաբանական աղտոտվածության ցուցանիշներ:

Որոշվող համալիր բեռնվածությունը օրգանիզմի վրա (KH) բաղկացած է հաշվի առնվող նշված գործոնների (տվյալ պայմաններում գոյություն ունեցող) գումարից:

Հաշվի առնվող նշված գործոններից յուրաքանչյուրը քանակապես որոշվում է հիգիենիկ նորմատիվներին վերաբերվող մեկ ցուցանիշներով:

Նշված դեպքում թույլատրելի համարվում է այն մեծությունը, որը հավասար է 1-ի:

Ենթադրված համայնքի հողօգտագործման գլխավոր հատվածի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապարման կանոնակարգման պլանի մշակում

**3.26.1. Օդի մերձգետնյա շերտի աղտոտվածության սանիտար-հիգիենիկ իրավիճակի անալիզը**

Տարածքում մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները ( $\text{մգ/մ}^3$ ), վերցված են ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի մոնիտորինգի կենտրոնի կողմից (ըստ բնակչության քանակի) և բերված են աղյուսակում /19/:

**Աղյուսակ**

№N° ը/հ	Աղտոտող նյութերի կոդերը և անվանումները	ՍԹԿ, $\text{մգ/մ}^3$	Ֆոնային կոնցենտրացիաները	
			$\text{մգ/մ}^3$	միավոր ՍԹԿ
1	002 Փոշի	0.5	0.3	0.6
2	701 Ծծմբի երկօքսիդ	0.5	0.05	0.1
3	200 Ազոտի օքսիդներ	0.2	0.015	0.075
4	322 Ածխածնի օքսիդ	5.0	0.8	0.16

Ինչպես երևում է աղյուսակից ֆոնային կոնցենտրացիաները չեն գերազանցում թույլատրելի նորմերը:

Աղտոտվածության համալիր ցուցանիշը հաշվարկվում է համաձայն /16, 17/ բանաձևով, որտեղ

K – նյութի նորմավորված III դասի բերման գործակիցն է

i – փաստացի խտությունների գերազանցումն է ՍԹԿ-ն :

Աղտոտվածության համալիր ցուցանիշի հաշվարկման համար ելակետային տվյալները բերված են աղյուսակում:

**Աղյուսակ 18.1.2**

Աղտոտող նյութի անվանումը	Վտանգավորության դասը	Միջին օրական կոնցենտրացիաների արժեքները, $\text{մգ/մ}^3$	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիան, ՍԹԿ <sub>միջ.օր</sub> , $\text{մգ/մ}^3$	Գերազանցում է միջին օրական կոնցենտրացիան	Վտանգավորության I II դասի բերման գործակիցը՝ իզոէֆեկտիվության գործակից, K
Փոշի	III	0.12	0.15	0.8	1
Ծծմբի երկօքսիդ	III	0.02	0.05	0.4	1
Ազոտի օքսիդներ	II	0.006	0.04	0.15	1.3
Ածխածնի օքսիդ	IV	0.32	3	0.106	0.87

Օդի աղտոտվածության համալիր ցուցանիշը՝ P-ն կլինի:

Ստացված տվյալներից ելնելով, երբ  $n=4$  և  $p=0.92$  մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը գնահատվում է թույլ աղտոտված:

*Ենթադրված համայնքի հողօգտագործման գլխավոր հատկագծի մշակում, քաղաքաշինական կանոնադրության և կառուցապատման կանոնակարգման պլանի մշակում*

Օդային միջավայրի աղտոտվածության համալիր գնահատականը տրված է ըստ հողմագծի աղտոտման աղբյուրից դեպի բնակելի գոտին փչող քամու արագության միջին տարեկան կրկնելիության (%) պայմաններում (P):

Մի հողմագծի քամիների ուղղության կրկնելիության տոկոսը քամիների շրջանային փնջագրի դեպքում՝  $P_0$

$$P_0 = 100 : 8 = 12,5\%$$

Քամու արագության միջին տարեկան կրկնելիությունը (գերակայում են հարավարևմտյան ուղղությամբ փչող քամիները) կազմում է 44 %:

Օդային միջավայրի աղտոտվածության գնահատականը տրված է համաձայն/20,21/:

, որտեղ

$C_1, \dots, C_n$  - աղտոտվածության առանձին կոմպոնենտների միջին օրական կոնցենտրացիան է մգ/մ<sup>3</sup>,

$N_1$  - գործակից, որի մեծությունը կախված է աղտոտող նյութերի վտանգավորության դասից՝

I դաս - 1, II դաս - 1.5, III դաս - 2, IV դաս - 4

$t = C_1, C_2 \dots C_n$  - աղտոտող նյութերի զումարային ազդեցության ցուցադրանքն է:

$$t = P/P_0 \quad t = 44 : 12.5 = 3.52$$

ՍԹԿ $C_1$ ,

$C_n$  - առանձին կոմպոնենտների միջին օրական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան է:

Մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը մնում է թույլ աղտոտված (առաջին դասի վտանգավորության նյութերի բացակայության պարագայում):

### **3.26.2. Բնակչության առողջության պայմանական ռիսկի գործոնը**

Մթնոլորտային օդի աղտոտվածության հետ կապված բնակչության առողջության պայմանական ռիսկը որոշվում է՝

$$R = \sqrt{6} K \delta M \delta B \delta C \delta 10^{-3} \text{ բանաձևով, որտեղ}$$

R - ռիսկի չափը

V - մեկ մարդու կողմից ներծծված օդի քանակն է օրվա ընթացքում - 28.8մ<sup>3</sup>:

M - մարդու մասսան է կգ -70

K - մարդու օրգանիզմով տվյալ նյութի կլանման գործակիցն է (0,75°0,25)

